


№16



# ԻՈՒՆ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ  
ՍՏՐԻԱՐՔՈՒԹԵՄՆ  
ՀԱՅՈՉ  
ՆՐՈՒՍԱԳԷՄԻ

ԾԶ ՏԱՐԻ



Գ-Դ-Ե



1982



# ԻՈՆ

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ  
ՍՏՐԻԱՐԶՈՒԹԵՄՆ  
ՀԱՅՈՉ  
ՆՐՈՒՍԱՂԷՄԻ

ԾԶ ՏԵՐԻ

Գ-Գ-Ե

1982



# ՄԻՈՆ

ԱՄԱԱԳԻՐ  
ԿՐՕՆԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ ԵՐՈՒՍԱԼԷՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ

ԾԶ. ՏԱՐԻ - ՆՈՐ ՇՐՋԱՆ

1982	Մարտ - Ապրիլ - Մայիս	Թիւ 3-4-5
1982	March - April - May	No. 3-4-5

# SION

VOL. 56

A MONTHLY OF RELIGION, LITERATURE AND PHILOLOGY  
OFFICIAL PUBLICATION OF THE ARMENIAN PATRIARCHATE, JERUSALEM

Proprietor: His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem



St. James Press, Jerusalem

digitised by

199-98  
ARAR.A.R. @  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա.Ի

## ՍՈՒՐԲ ԶԱՏԿՈՒԱՆ ՔԱՐՈԶԸ

### Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃՍՐԷՆ

Սիրելի հաւասացեալներ Մեր,

Ասուծոյ ողորմութեամբ, երբ զարնան լոյսը մի անգամ եւս բացուում է աշխարհի վրայ, Մենք յոյժ երջանիկ ենք, համայն մեր հաւասացեալ ժողովրդին որ ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի, աւեսելու՝ նառագայթումը մեր բոլորի հոգիներէից ներս՝ յարութեան լոյսի՝ մեր Փրկչի Յիսուս Քրիստոսի:

Այսօր, նիւթական սիեզերքի լոյսը միախառնուում է ոգեկան սիեզերքի լոյսի հետ: Ասուածային անիմանալի այս խորհուրդը, երբ այս պահին մեզանից ամէն մէկը փորձում է ապրել իր հոգու խաբում, նաեւ Սուրբ Էջմիածնի բազմադարեան կամարներից դէպի վեր, դէպի երկինք է բարձրանում՝ յաղթական երգը Քրիստոսի յարութեան:

Սիրելի հաւասացեալներ, ձեզ եւ մեզ մեծ աւեսիս, այժմ, նւարապէս յարեալ Քրիստոս ի մեռելոց:

Զգում ենք, տեսնում ենք ինչպէս չննաղ մի երազանքի մէջ՝ լոյս պակերը յարութիւն առած Ասուածորդու:

«Հաւասամք ի մի Տէր Յիսուս Քրիստոս ... որ յաղագս մեր մարդկան եւ վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից, մարմնացաւ, մարդացաւ ... եւ որ չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ ... գալոց է նովին մարմնովն եւ փառօք չօր ... որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան»:

Յիսուսով փրկչագործութիւնը կանխագուշակել էին արդէն Հին Ուխտի մարգարէները, լինելով արտայայտիչը բոլոր ժամանակների՝ արդարութեան եւ խաղաղութեան ծարաւի մարդկանց ու ազգերի: Իսկ Սիմէոն ծերունին, Ասուծոյ տանաւում, Բաղաստեանի մանուկ Յիսուսին իր չորացած բազուկներով վեր բարձրացնելով բացականչել էր. «Աւր արձակեա՛ զձառայս Բա, Տէր, ըստ բանի Բա ի խաղաղութեան, զի տեսին այժ իմ զփրկութիւն Բա զոր պատրաստեցեր առայժի ամենայն ժողովրդոց» (Ղկա. Բ. 30-31):

Սուրբ աւեսարանիչները եւ առաքելները եւս ի լրումն ժամանակների իրենց ասուածաւունջ գրութիւններով, Բարոզութիւններով եւ ձեռագ գործերով, եկան վկայութիւնը բերելու յարութեան հրաւիր սիեզերականութեան, որով Յիսուս, փրկչագործական Իր սնտեսութեան մէջ ընդգրկել էր համայն մարդկութիւնը:

Այսպէս, Պետրոս առաքեալ առաջինը եղաւ, որ Շրուսադէմում արտասանած իր ճառում ոգեկոչեց Ասուծոյ խոսուումը Աբրահամին, թէ նրա յաջորդներից մէկով պիտի օրհնուեն երկրի բոլոր ազգերը: «Յիսուս նազով-րեցուն, այս մարդուն, որին Ասուած ձեզ ներկայացրեց զօրութեամբ, նշաններով եւ զարմանալի գործերով ... Նրան անօրէնների ձեռք մասնեցիք, փայտի վրայ մեխեցիք եւ սպաննեցիք. նրան Ասուած յարութիւն տուեց, քանակելով մահուան կապանները» (Գործք, Գ. 22-25):

Իսկ Պօղոս առաքեալ, Փրկչի խօսքը արածելու իր առաքելութեան վկայութիւնը բերելով, բացալիանչում է. «Յայնուեց այժմ, մեր փրկչի Յիսուսի Քրիստոսի երեսայով, նա որ կործանեց մահը եւ լուսաւոր դարձեց կեանքն ու անմահութիւնը Աւետարանի միջոցով» (Բ. Տիմ. Ա. 10): Նա որ եկաւ աւետելու «խաղաղութիւն հեռաւորաց եւ մերձաւորաց» (Եփես. Բ. 17):

Սիրելի ժողովուրդ, Հայաստանեայց մեր Մայր Եկեղեցին, առաքելական մեր Եկեղեցին, Յարութեան Եկեղեցի է, քանի որ Քրիստոսի յարութիւնը հիմնաւարն է մեր հաւասքի, քանի որ յարութեան ստուգութեամբ լուսաւորում է մեր գիտակցութիւնը, զարթնում են մեր հոգու ուժերը եւ զօրծում է մեր կամքը՝ ընդդիմանալու մեղքին եւ իսպառնելու ստրասպիլ մահուան:

Յիսուսի յարութիւնը յաղթութիւնն է եւ փառաւորումը կեանքի՝ ընդդէմ մահուան, յաղթութիւնը եւ փառաւորումը բարո՛ւ ընդդէմ չարիքի ու մեղքի: Յիսուսի յարութեան հրաւերը գերագոյն առհաւասչեան է յալիսենական կեանքի քրիստոնէական մեծ յոյսի:

Յիսուս, մեռելներից առաջին ծնուած, հանդիսանում է իւրաքանչիւր քրիստոնէայի անմահութեան յոյսը: «Քրիստոս յարուցեալ է ի մեռելոց, առաջին պսուղ ննչեցելոց. քանզի մարդով եղել մահ եւ մարդով յարութիւն մեռելոց» (Ա. Կորնթ. ԺԵ. 20-22):

Մարդու կեանքի վերանորոգման, մարդու հոգու կասարելագործման, մեղքի կապաններից ազատագրման սեանկիւնից դիտուած, Յիսուսի կեանքը, չարչարանները, մահը եւ ապա յարութիւնը, իրողութիւններ են եւ խորհուրդներ, որոնք մեր հոգու մէջ զարթնեցնում են չարիքին ու մեղքին դիմադրելու մղումը, յանուն արդարութեան պայտարելու եւ զոհաբերուելու ուժը, եւ մեր գիտակցութեան մէջ պայծառանում է նեմարտութիւնը, որ մարդկային այս աշխարհում, իրապէս արժեքաւոր ոչինչ չի կարելի ստեղծել առանց սննութեան, առանց նուիրումի, պռանց զոհաբերումի: Ինքը Յիսուս բացայայտում է այս նեմարտութիւնը ստելով. «Ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ հասն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի»՝ ինքն միայն կայ. ապա եթէ մեռանիցի՝ բազում արդիւնս առնէ» (Յովն. ԺԲ. 24-25):

Յիսուսի զոհաբերութեան խորհուրդի վրայ հիմնուած է Եկեղեցին: Նա կեանքի կոչուած է նրա սուրբ արեամբ (Գործք, Ի. 28): Այսպէս է որ Եկեղեցին խորհրդանշում է մեզ համար Յիսուսի սեւական ներկայութիւնը մեր մէջ, մեր կեանքում, մանաւանդ պատարագի սրբազան արարողութիւններով:

Շարունակելով Մեր խորհրդածութիւնները Յիսուսի մահուան եւ յարութեան մասին, չենք կարող չհաստատել թէ մաեւ մեր ժողովուրդը, Հայ ժողովուրդը՝ յարութեան ժողովուրդ է: Դարեր, երկար դարեր, ազգի ու հայրենի պետութեան յարութեան յոյսով՝ ապրած, սանջուած ու ամէն ճեսակի չարիքների ու բռնութիւնների դէմ մահառած ժողովուրդ է մա: Մահուամբ մահը կոխած ու «իր քայ ողբոց սուրբ արիւնով» վերածնած, յարութիւն առած ժողովուրդ է մա:

Չենք կարող չյիշել մեր ազգի նահատակութիւնը 1915ի սեւ թուականին եւ ապա երեք տարի անց, հրաւրի համազօր նրա նոր կեանքի լուսաբացը Մայիսեան Սարդարապատով եւ Հայաստանի Հանրապետութեան կազմաւորումով, եղբայրական ժողովուրդների մեծ սիրութեան մէջ: Այս, մահուան եւ յարութեան խորհուրդը ապրեց մաեւ Հայ ժողովուրդը, որ կեանքի նոր ուժերով գրահուած, ինքնավստահ ու լուսեստ, վերաբնեց դարերով քանդուած իր մայր երկիրը, բուժեց իր գաւակների խորը վերքերը, նոր ոյսերով, նոր երգերով բեղմնաւորեց իր կեանքը, ժողկեցրեց իր ազգային մեակոյթը, եւ որ այժմ հաստատ քայլերով յառաջ է ընթանում դէպի իր առաւել պայծառ ապագան, իր ազգային արդար երազանքներով գօտեպինդ:

Յանուն իր վերածնունդի, յանուն իր նոր կեանքի ու իր ապագայի, Հայ ժողովուրդն ու իր Մայր Եկեղեցին այսօր ունեն մի գերազոյն ըրձանք, որ պատերազմի արհաւիրքը այլեւս երբեք չսեսնեն մրանք, որ այլեւս չկործանուեն շէնքերն ու քաղաքները եւ աղօթքի Տները Հայոց, որ խորհակուեն բոլոր ճեսակի զէնքերն ու գործիքները մահուան, որ համայն աշխարհում յաղթող լինի ոգին խաղաղութեան իշխան՝ յարուցեալ մեր Փրկչի Յիսուսի Քրիստոսի:

Պատերազմը համագումարն է բոլոր ճեսակի չարիքների, բոլոր ճեսակի մեղքերի: Իսկ «թոռակն մեղաց մահ է» (Հռոմ. Զ. 23):

Հայ եղբայրներ ու քոյրեր, Հայաստանի թէ պանդուխտ գաւակներ Մեր, Չասկական ուրախութեամբ ողջունեցէ՛ք իրար աւե՛տաւոր Քրիստոսի յարութեան, աւե՛տաւոր մեր Մայր Եկեղեցու եւ մեր մայր ժողովրդի վերածնունդի:

Այլ եւ «եղբայրասիրութիւն հաստատեցի առ ձեզ» (Եբր. ԺԳ. 1) եւ «զխաղաղութեան զհետ երթայք ընդ ամենեսին եւ զւրբութեան, առանց որոյ ոչ ոք ճեսանիցէ զՏէր» (Եբր. ԺԲ. 14):

Քրիստոս յարեալ ի մեռելոց: Ամէն:

## ԿԱՔՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ

ԱՆՔԻԼԻԱՍ - ԼԻՐԱՆԱՆ

Անքիլիաս, 1 Ապրիլ 1982

Ամենապատիւ

Տ. Եղիշեկ Արքեպս. Տէրտէրեան

Պատրիարք Հայոց Երուսաղէմի

Երուսաղէմ

Սիրեցեալ Եղբայր ի Քրիստոս,

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի հրաւարական յարութեանի տօնի նախօրեակին, եղբայրական սիրոյ քաղցր պարտք կը զգանք անձնապէս եւ յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ողջունել Ձեր Սիրելութիւնը եւ յայտնել Ձեզի Մեր խնդութիւնը մեր Տիրոջ յուսովառ եւ կենսատու յարութեան տօնակատարութեան առիթով:

Յարութիւնը ոչ միայն համաքրիստոնէական պատմութեան, այլ նաեւ ու մանաւանդ մեր հայ ժողովուրդի պատմութեան մէջ բացառիկ նշանակութիւն եւ անհաւատարեղի ազդեցութիւն գործած է, իր բարիքները սարածելով դարձ ի դար: Հայութիւնը յարութեան մէջ տեսած է ոչ միայն յոյս, այլև հոգեկան անսպառ եւ ամենայադէր ոյժ՝ դիմագրաւելու համար բոլոր տեսակի չարիքներն ու կեանքին դէմ իր տեսած սպառնալիքներն ու կործանումները:

Մեր սրտեանդն աղօթքն է որ յարութեան հաւասեր միտ կենդանի եւ գործօն մնայ մեր ժողովուրդի կեանքին մէջ այսօր եւ յետագային, ի Մայր Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի:

Քող յարուցեալ Փրկիչը Ձեզի, Երուսաղէմի Մրբոց Յակոբեանց Միաբանութեան եւ համայն ժողովրդեան պարգեւէ վերագարբնութի ամենալից օրեր եւ իր յարութեան տօնելով կենսաւորէ Ձեր բոլոր գործերը ի սպասաւորութիւն Ամենակալ Աստուծոյ եւ պատուական մեր Հայ ժողովրդեան:

Մնամ եղբայրական սիրոյ ողջունելու

Աղօթակից

Գ Ա Ր Ե Գ Ի Ն Բ .

Խ Ո Ր Է Ն Ա .

Աթուակից Կաթողիկոս

Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ



Ամեն. Տ. Եղիշէ Արքեպս. Տէրտէրեան

Պատրիարք Հայոց — Երուսաղէմ

Ձերդ Ամենապատուութիւն,

Հոգեւոր ցնծութեան հանդիսաւոր այս օրերուն, կը յղենք Ձեզ մեր սիրալիր շնորհաւորութիւններն ու սրտագին մաղթանքները՝ նոր ու արեւոտ օրերու: Գրիստոսի Յարութեան աւետիսով կ'ողջունենք Ձեզ, կրկնելով քաղցր ու չհինցող աւետիսը, որ գեղեցիկ ու խորհրդաւոր օր մը հրեշտակին բերնով տրուեցաւ իւղաբեր կիներուն՝

«Գրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Թող Յարուցեալ Փրկիչը առատօրէն հեղու կենդանաւոր իր շնորհները բոլոր իր սուրբ անուան հաւատացողներուն վրայ: Իր Յարութեան լոյսովը լուսաւորէ՛ մանաւանդ միտքն ու հոգին պետութեան ղեկը իրենց ձեռքը առած քաղաքագէտներուն եւ դիւանագէտներուն, որպէսզի խաղաղութիւնը ըլլայ տեսական ու տիրապետող՝ գեղահրաշ մեր մուրակին վրայ:

Ձեր եղբայրը ի Գրիստոս՝

Պ Ի Մ Է Ն

Պատրիարք Մոսկուայի եւ Համայն Ռուսիոյ

Ս. Չատիկ, 1982 — Մոսկուա

Ապրիլի 5ին, Հրէից Պատեքի (Բաղարջակերաց) տօնին առիթով, Ամեն. Սրբ. Պատրիարք Հայոց հետեւեալ հեռագիրը յղեց Իսրայէլի Պետութեան Նախագահ Իցհաք Նավոնի, վարչապետ Մէնախեմ Պէլէինի եւ այլ նախարարներու, ինչպէս նաեւ Երուսաղէմի Բաղաքապետ Թէտի Բօլլէքի եւ պետական բարձրաստիճան պաշտօնեաներու:

«Պատեքի տօնին ուրախ առիթով, հաճեցէք ընդունիլ մեր սրտագին եւ յարգալից շնորհաւորութիւնները եւ ջերմ մաղթանքները, Ձեր շարունակական առողջութեան եւ Հրեայ ժողովուրդի բարգաւաճման»:

**Հ Ե Ռ Ա Գ Ի Բ Ն Ե Ր**

**Ս. Զատիկի հրաշափառ տօնին առիթով, Ամեն. Ս. Գաթրիարք Հօր կողմէ եկեղեցւոյ Սրբազան Պետերուն յղուած են հետեւեալ շնորհաւորական հեռագրերնիրը. —**

Երուսաղէմ, 11 Ապրիլ 1982

**Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Վաղզէն Ա.  
Կաթողիկոս Ամենայն Հայոց  
Ս. էջմիածին**

**Ս. Զատիկի հրաշափառ տօնին բարեբաօտիկ առիթով, խոնարհարար կը ներկայացնենք Ձերդ Սուրբ Օծութեան մեր և Սրբոց Յակոբեանց Միաբանութեան սրտագին շնորհաւորութիւնները, խնդրելով Բարձրեալն Աստուծոյ որ շնորհէ Ձեզ յաջողութիւններով լի երկար և առողջ կեանք, և Մայր Աթոռ Ս. էջմիածին՝ անասանութիւն և բարգաւաճում:**

**ԵՂԻՇԷ ԱՐԲԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ  
Գաթրիարք Հայ Երուսաղէմի**

Երուսաղէմ, 11 Ապրիլ 1982

**Նորին Սրբութիւն  
Ծովնանէս - Չօղոս Բ. Գազ  
Վատիկան**

**Ս. Զատիկի հրաշափառ տօնին բարեբաօտիկ առիթով, յարգանք կը ներկայացնենք Ձերդ Սրբութեան մեր սրտագին շնորհաւորութիւնները, մաղթելով Ձեզ շարունակական առողջութիւն և Ձեր մեծ եկեղեցիին՝ բարգաւաճում: Թող Ամենակարողն Աստուած յաջողութեամբ պսակէ Ձեր բարի ջանքերն ու ծրագրերնիրը:**

**ԵՂԻՇԷ ԱՐԲԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ  
Գաթրիարք Հայ Երուսաղէմի**

Երուսաղէմ, 11 Ապրիլ 1982

**Ն. Ամենապատուութիւն Պիմէն  
Գաթրիարք Համայն Թուսիոյ  
Մոսկուա**

**Ս. Զատիկի հրաշափառ տօնին առիթով, կը ներկայացնենք Ձեզ մեր եղբայրական և ջերմ շնորհաւորութիւնները, սրտագին մաղթանքներով Ձերդ Սրբութեան առողջութեան և բարգաւաճ գործունէութեան համար:**

**ԵՂԻՇԷ ԱՐԲԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ  
Գաթրիարք Հայ Երուսաղէմի**



## Մեր Հոգեւոր Հունձք

Ս. Յակոբեանց Միաբանութիւնը անգամ մը ևս կը բերկրի, ձեռնադրութեամբ ժառ. Վարժարանի և Ընծայարանի չորս սարկաւազներուն, տարիներու ամուլ շրջանէ մը յետոյ: Ատենը չէ վերբերել պատճառները թարթափումներուն: Կրթական աշխատանքը, մանաւանդ իր կրօնական երեսներով, կը կարօտի միտքէն աւելի հոգեկան առաքինութիւններով հարուստ անձերու: Կրթական գործը առևտուր չէ, անոր շահը չի հաշուուի անձին եկած բարիքներով:

Առանց այս աշխարհական զգացումին, կան միայն եսակեղրոն անհատներ, իրենց անձը փառաւորել փորձող սոնքամիտներ: Ենորհիւ այդ ոգիին է որ կը ծնին դապափարի սպասարկուներ, առաջնորդներ և մարգարէներ ժողովուրդներու:

Մեր չորս նորընծայ սարկաւազները, որոնք հոգեւոր ծառայութեան կը նուիրեն իրենց թարմատի կեանքը, կու գան մեր ժողովուրդի ամենէն խոնարհ՝ բայց բեղմնաւոր խաւերէն: Առանց անմեղ բայց զիտակից մանկութիւնը թէն չէ քալած արեան և կորուստի ուղիներէն, սակայն տեսած ու զգացած են այդ աւերին կնիքով զրոշմուած իրականութիւնը այս Եկեղեցիին ու ցեղին, և իրենց զգայուն և բարի հոգին՝ առաջին մէկ օրէն տոգորուած է նուիրումի և զոնութեան խորունկ զգացումով, հանդէպ Մայրենի Եկեղեցւոյ և ազգի ծառայութեան: Ուզեցին զինուորագրուիլ անոր, այն իրական զգացումով թէ ճշմարիտ հայրդիւ պարտք մը կը կատարեն, լուսաւորելու, ոգևորելու և ապրեցնելու մութի, մորմոքի և մահացումի մատնուած ժողովուրդ մը: Եր տակաւ կը զգայ թէ իր գոյութեան գառիթափին վրայ կը զանուի և լոյսին գալու շարժումներ կը փորձէ:

Ուրախութիւնը որ կը լեցնէ զմեզ այս հոգեւոր հունձքին առջև անպարզաբերի է: Զորս անձնուէր երիտասարդներ ևս կու գան միանալու այն փա-

պանզին, Եանձինք՝ նուիրեալքններու այն երամին, ընելու իրենց սպասը Հաստատանեայց Եկեղեցւոյ և մեր Ժողովուրդին: Կար տտեն մը, երբ Հայ Երուսաղէմը կը պատրաստէր կրօնաւորներ Ս. Տեղեաց պաշտպանութեան և վանական ներքին և անօրինական պէտքերուն համար միայն: Այդ պէտքերը այսօր դարձեալ կը պահեն իրենց սմբողջ ձանրութիւնը, Միաբանութեան ուժերը սպասելու տեսակէտով, նոյնիսկ աւելի աճած ու բարդացած: Այս ստիպողական պահանջներուն վրայ աւելցած է նաև Հայ Եկեղեցւոյ գէթ մեծ մասի հոգևոր սպասարկութեան շատ ընդարձակ պարտականութիւնը:

Հայ Եկեղեցին իր պատմական կեանքի ընթացքին, միշտ ջանք ըրած է նախանձախնդրօրէն պատրաստելու իր պաշտօնեաները: Պէտք չենք զգար հոս Քուելու տեղական արդիւնքները մեր ներքին կենսունեակութեան նուիրուած այդ համեատ ուժերուն, որոնք սրտառուչ անդրանկութեամբ օժտեցին զմեզ բնօտարանալի ժառանգութեան մը համար: Մեր նախնեաց այդ բարձր և պայծառ տեսիլը այսօր առաւել քան երբեք պէտք է կազմէ յատակը մեր մտածումին և գործին, կարենալ շարունակելու համար մեր Եկեղեցւոյ պատմական դերը: Իրականութեան այս լոյսին սէլ, կրկնապէս կը վարդապատի և կը վստմանայ այն ուղին, որուն վրայ զօտեպիւնդ կը կենան այս շորս անձնազոհները, և այն իտէլալ՝ որուն զինուորագրութեան անոնք, Աստուծոյ և Ս. Եկեղեցիին առջև կնքելով կարճիք ուխտը իրենց հոգիին: Այդ ուխտը, կրակէ այդ շապիկը, ինչպէս կ'ընէին հիները, դիւրին չէ հազնիլ, և այս զիտեն անոնք որ կը խիզախեն զինուորագրուիլ Աստուծոյ և մարդոց՝ Հայ Եկեղեցւոյ ծառայութեան:

Սրտազինս կ'ողջունենք ձեր մուտքը մեր Միաբանական կեանքին ներս: Կը սպասէինք ձեզի, որ պիտի դայիք ընելու ձեր անգոնելի գոհը Հայ Եկեղեցւոյ և Հայ Ժողովուրդի ծառայութեան Սեղանին վրայ: Մեր Ժողովուրդին ծով կարիքներն ու սէրը պարպեցին ձեզ ձեր վարանքներէն: Այժմ Ուրալը ողկուղուած, կանաչ, առայդ և բոլորապիւնդ երիտասարդներ էք, պատրաստ նուաճելու երկիրն աւ երկիրնքը: Կը մտնաք ձեր պատիկ մարդը և անոք կապուած բոլոր հանգամանքները, որոնք հասարակ մահկանացւներուն են բաժին:

Ինչ փոյթ թէ շատեր տրտում համակրանքով զիմաւորեն ձեր կարմիր ուխտը, և ուրիշներ՝ ձեր մատաղութիւնը մեղքնան, մարդիկ իրենց զիտցածը կը տեսնեն միշտ և պիտի շկրնան ըմբռնել իմաստը ձեր այս զօհողութեան: Քիչերու համար դուք պիտի մնաք ողջ քանդակները այն հզոր երազներուն, առանց որոնց ոչինչ կ'արժէ կեանքը: Վստահ ենք թէ ունիք այդ երազը որ թև ու թռիչք պիտի տայ ձեզի ձեր բոլոր դժուարութիւններուն մէջ:

Խոնարհեցուցիք ձեր ուսերը Ուրալին, պարտքի զօտիին, որովհետև տակաւ ձեր մէջ խորացաւ պարտականութեան զիտակցութիւնը հանդէպ մեր հոգեկան արժէքներուն, մեր նշխարեալ բեկորներուն, և հանդէպ այն Ժողովուրդին՝ որ մայրն ու ստեղծիչն է այս բոլորին: Այդ է պատճառ որ հակառակ մեր այսօրուան նիւթապաշտ, աներազ և անթոխ դարուն, դուք բարձրութիւններու կը սենեւէք ձեր նայուածքը, երկիրքներուն և Աստուծոյ, որ անտեսանելի պատկերն է այս բոլորին: Դուք ձեր այս կեցուածքով սրբազրել

կր փորձէք քաղաքակիրթ կոչուած մեր դարը, որ այնքան փոքրած է սահմանները իր զգալու և մտածելու իտէալին, ձեզի հասկնալ չկարենալու աստիճան:

Ձեր պատրաստութեան կէսին էր, բացէք ձեր միտքը Աստուծոյ լոյսին և մեր պատմութեան հրաշքին: Շատ բան կարելի է յատկանշել ձեզի Ամենայն կարևորը՝ ունեցէք Աստուծոյ սէրն ու պաշտպանութիւնը կարելի բոլոր վտանգներուն դէմ: Վասնզի ինչ որ բնենք սահմանափակ են մեր միջոցները, Գերագոյնին մտածումը, պատկերը, սրտազարկը անհրաժեշտաբար պայտլիք ունենալ և զգալ մեր ներքո: Ատիկա հաւատարիմ մնալն է այս ժողովուրդի աշխարհահայեացքին, առիշտ մարդկային տկարութեանց դէմ անխորտակելի զրահ մը ապահովել է կեանքի պայքարին մէջ, ուր փորձութիւններ և անկումներ այնքան անխուսափելի են: Սակայն այս շնորհը, զերագոյն այս սպառնալիք ձի չի գար, պէտք է յարգարէք ինքզինքնիդ անոր: Պէտք է առատանայ ձեր տեսութիւնը, բացուի ու մաքրուի ձեր հոգին: Ամէն ինչ կը տօգուենի Աստուծոյ թագաւորութեան մէջ, եթէ կոյր մնաք:

Ունեցէք նաև սէրը ձեր ժողովուրդին, որ Աստուծոյ վերջ, գերագոյն իրականութիւնն է մեզի համար: Ապարէզը որու շեմին կը կենաք աշխարհիկ շահերով պայմանաւոր ապարէզ ՚ր չէ, այլ պարտքի մը ճամբան, և եթէ զիտնաք թէ անուանապէս աւելի կ'արժէ տալը քան փոխուի, այն ստան հաւկնալի կ'ըլլայ սիրտի գեղեցկութիւնը ձեր կոչումին: Ունեցէք նաև ինամքը ձեր անձին, անոր ծաղիման, բարգաւաճման, վասնզի ինչ որ ունիք այն միայն կրնաք տալ: Տխուր բան է հոգիի և մտքի ազբատութիւնը:

Տակաւին ամիս մը առաջ յուսահատ էինք ձեզի: ձեզի յիշապատու միջոցորտին պատճառաւ, անբարեխիղճ մարդերու կողմէն ստեղծուած: Երջանիկ ենք այժմ սակայն ձեր հոգիներուն մէջ, կարճ ժամանակուան մը ընթացքին, կատարուած յեղաշրջումին համար:

Կը սպասէիք ձեզի և կը սպասենք ձեր ետև շարքի կեցողներուն, վասնզի ձեր սերունդը կ'սնչուած է տիրապետելու հրապարակին՝ և նստելու աթոռներուն վրայ՝ որոնք պարապ են նոյնիսկ իրենց աթոռակալներով: Ինչ հարկ պատճառներ ճշդելու և իրողութեան թերն ու դէմը արձանագրելու, ձեր գալուստը կ'արժանորէ մեր սպասումը, որովհետև պիտի գիտնայ ուճաջնել դեղևկոտներուն հաւատքը: Այդ հաւատքը ամուլ չէ նման դաշտի կոյր հունտին, ան կրնայ ծաղիկի ծովուն վրայ և ապառաժին խորը: Ձեր մէջ կ'ողնունենք ոչ թէ տարիքը, այլ հաւատքը ձեր ցեղին, հոգին՝ որ ձեզի պիտի հազցնէ պատմութեանը պատմութեան և քրմական լուսապսակը վաղուան: Դուք յոյսի և լոյսի գաւակներ, որոնց կ'աշխարհէ մեր պատմահայրը. «Աւանց կացեալ գլուխ, և արուքիւն ցուցեալ, զազգս մեր բարձրացոյց»: Այս յոյսով և մարգարէութեամբ կ'ողնունենք ձեր գալուստը Սրբոց Յակոբեանց Եղբայրութեանէն ներս, մայիսի 10-ի ձեզի կարողութիւն, քաջօրէն տանելու ձեր ուսերուն տրուած ուխտին տապանակը:

b.

# Ս. ԳՐԿԱՐՍ

## ԵՋԵԿԻԱ ԹԱԳԱԿՈՐԸ

Դաւթի մայրաքաղաքին ճիշդ կեղ-  
բունը, Արմոնի նաւերակաս բարձունքի  
կաշարին, գահաւանդի մը վրայ և խիստ  
պարզակերտ ծոցը կ'աշտարակուէր պա-  
լատը Յուդայաստանի սրբային: Հրեայ  
ճարտարագետներ մրցումի ելեր էին, բա-  
ցաւիկ շքեղութեամբ կոթողելու ազա-  
րանքը իրանց վիհապետին: Մէկ պայմա-  
նով սակայն, մնոր զեղեցկութիւնը վար  
պիտի մնար Սողոմոնեան Տաճարի գեղեց-  
կութեանը:

Դժբախտութեաներ միշտ սնակաբու  
կղամ էին եղեկիտ թագաւորի կեանքէն,  
բայց ան սովեհներ կուրծք տուած էր բու-  
լորին, շնորհիւ իր ամուր նաւատքին ու  
տոկոսն կողմուածքին: Հիմա սակայն  
փորձուած էին փամոնակն ու պայմաննե-  
րը: Սենեքերիմ, բունակալ ու մեծագոյր  
արքան Ասորիստանի, տիրապետելու իր  
մարմալին միացուցած ժանրը ոչլուրաւ  
ցութեան, անկը բանակով մը եկած հա-  
տած էր Հրէաստան, գրուած Սամարիան,  
վերջ տուած Խարայի թագաւորութեան  
ու կը ծածկը դռները Յուդայի թագաւո-  
րութեան: Ասոր վրայ կ'աւելնար նաև  
հիւանդութիւնը եղեկիտի, որ ծանրա-  
նալով հասցուցած էր զինք մահուան  
մտք գունդուս:

Հիւանդութեան իր մահիճին մէջ գա-  
լարուելով, կիսախուփ իր աչքերը սե-  
ռած պալատի լուսամուտէն երեցող Տա-  
ճարի բարձրավիզ ու ոսկեջրուած աշտա-  
րակին, տարիներէ ի վեր առաջին ան-  
գամ ըլլալով, իր սրտի խորերէն խնդ-  
րանք-աղօթք մը բարձրացաւ կափկափող  
էր շուրթերուն:

— Տէր Եւովա, ներէ որ աշխարհիկ  
հոգերէն ծուլատուած իմ միտքն ու հոգին  
հեռու պահեցի քու թօրայիդ լոյսէն: Ու  
հիմա զոյգ խնդրանքներ կը մատուցանեմ  
Բարձրաւիզ գահոյքին: Հեռացուր Ասոր

րեստանի բունակները Յուդայի սահման-  
ներէն ու ժանր՝ ինձմէ: Եսորնէ որ գէթ  
տասնհինգ տարիներ աչքերս վայելն  
լոյսը սրեգակին:

Երկայնուն դէմ, երբ դատանցանքէ  
մը ետք վերստին ուշքի եկած էր հէք  
արքան, Աստուծոյ մարդը, Եսայի մեծ  
մարգարէն կը ժամէր պալատի դարպասէն  
ու կ'ազդուէր հիւանդի սնարին մօտ,  
տալու անոր քաղցր աւետար իր խնդ-  
րանքներուն ընդունելութեան:

— Տէր արքայ, Եւովան լսած է ա-  
ղօթքդ: Թշնամին գլխիցոր պիտի նեղա-  
նայ մեր սահմաններէն ու 15 տարիներ  
պիտի աւելնան կեսիցիդ օրերուն վըրա,  
յարեց պայծալնամաքուր մարգարէն:

Փպտ մը խաղաց արքայի ամօրոյն  
դէմքին: Արօսորի քանի մը կաթիլներ  
սահեցան թոմթակած աչաքերէն վար: Ոչ  
չրթները հաղիւ կրցան մրմնջել, ճննոր-  
հակալ եմ քեզմէ անհունօրէն, Տէրս:

Տարիները սահեցան կարծուածէն ան-  
ւելի արագ: Անցնող ամէն օրուան հետ  
գորացաւ մահուան ոտնամալը եղեկիտի  
յոգնած սկանջներուն: Ու զղջաց ան ու-  
րոշած ըլլալուն համար թիւը՝ ապրիլ ու-  
գած իր տարիներուն:

Ով Տէր, մրմնջեց գտաւած ար-  
քան, ինչքան իմաստութիւն կայ ժան-  
դոց մահուան թուակներ իրենցմէ գաղտնի  
պահելու անօրինոմիջ մէջ: Ինչ՞ու ես  
միակը պիտի ըլլայի մարդոց որդիներէն,  
իր մահուան օրը գիտակցօրէն գիծուած  
բող: Ինչ լաւ պիտի ըլլար որ ապրելու  
յոյսը չպոկուէր իմ օրաէն մինչև որ  
հասնէի դուռ մահուան:

Քանի՜ քանի՜ անգամներ յանդուգն  
ու անխոհեմ կերպով կը մատուցանեմ  
մեր խնդրանքները Աստուծոյ: Կը պա-  
տահի երբեմն որ Տէրը ընդառաջէ այդ  
կարգի մեր խնդրանքներուն, պարզապէս  
զգացնելու համար մեզ անոնց աննթե-  
թութիւնը ու քուել տալու համար մեղքը  
մեր յանդգնութեան:

Գ.



«ՄԻ՛ ԵՐԿՆԶԻՔ»

«Մի՛ երկնիք. զՅիսուս խնդրէ՛ր  
զԼազուկեցի գիտելիպոս.  
յարեաւ՛ չէ՛ սաս»  
(ՄԱՐԿՈՍ, ԺՁ. Թ) :

Զվախեալ, Գանի՛ քանի՛ անգամներ  
կ'սկզուրեւ այս խօսքը Նոր կտակարանի  
էջերէն՝ մեր Տիրոջ կողմէ. դի՛մք շրջա-  
պատողներուն ու նաեւ մեզի՛ բոլոր իրեն  
հաւատացողներուս :

Այս անգամ, Յարութեան հրաշալի  
լուսարացին, Տիրոջ հրեշտակն է որ նայն  
խօսքը կ'ուզէ խառվարար ու շմորած  
իզարեր կրննորուն. այն խօսքը՝ զոր  
Քրիստոս քանիցս հրկնած էր Եր աշա-  
կերաներուն. — Տիրերիս լեակին վրայի  
աչկոճուժեան պահուն, Քարտի վրայ  
տեսողբուած պղկուցիչ գէլզգի ատեն,  
ինչպէս նաեւ Սիոնի վերնատան մէջ, վեր-  
ջին ընթերթի ընթացքին, երբ այ՛նքան  
ժանր էր նստած չիտթանքի ու անասու-  
թութեան ստուերը հողիներուն խորը Եր  
աշակերաներուն :

Վախը նշան է տկարութեան: Անոնք  
միայն կը վախնան, որոնք չունին բու-  
րար որջը՝ հակառեւել իրենց սպառ-  
նացող վտանգներուն դէմ :

Վախը նշան է թերաւատութեան,  
Այսպէս արտայայտուեցաւ Մամիկոնեան  
գպարապետը Տղմուտի տփին: Պետրոս ա-  
բաքեալ տներկիւզ կը յառաջանար Գա-  
լիլիոյ ծովակի ջուրերուն վրայէն: Այն  
տակն միայն ունեցաւ վախը լեճմայն ըլ-  
լալու՝ երբ գեղեկեցաւ իր հաւատքին մէջ :

Վախը նշան է նաեւ տգիտութեան:  
Նախամարտը կը գտակար բնութեան գա-  
նաղան երևոյթներէն ու զազաններէն,  
որովհետեւ կ'անգիտունար անոնցմէ պատ-  
հառուած վտանգներուն ու վնասներուն  
դէմ ինքզինք պայտպանելու միջոցները :  
Կը վախնայ մարդ բնութեան ոյժե-  
րէն: Կը սոսկայ ու կը սքստափի երկրա-  
շարժէն, կեղեղէն, կայծակէն: Կը վախ-

նայ պատերազմէն, անգործութենէն, սը-  
նահուութենէն: Կը վախնայ նամաւարակ  
ներէն, հիւանդութեանց մանրէներէն,  
արկածներէն: Կը վախնայ իր թշնամի-  
ներէն ու հակառակորդներէն: Ի միտքս,  
կը վախնայ ու կը սոսկայ մահէն՝ որուն  
կրնայ երթալ վերայիշեալ ազդակներէն  
մէկուն կամ միւսին հետեանքով :

Վախի գրացումը սերտօրէն լծարդ-  
ուած է պարտազանցութեան վիճակնե-  
րուն: Մանուկը իր ծնողէն, աշակերտը  
իր սուսցէն, բանուորը կամ պաշտան-  
եան իր գործատէրէն կամ անօրէնէն, ու  
վերջապէս սոսկակա՛ն զառաքացին պատ-  
կան իշխանութիւններէն կամ սոսկիկա-  
նութենէն կը վախնայ այն ատեն միայն՝  
երբ թերացած է իրեն վստահուած պար-  
տականութիւններուն կատարման մէջ և  
կամ անհնազանդ գտնուած է իր մեծա-  
ւորնիբու հրահանգներուն: Վերջ՝ սիրտը  
զողջ ըսուած չէ պարսպ տեղը :

Քաջութիւնը ամենէն ուշագրաւ յատ-  
կանիչներէն մէկն է ճշմարիտ քրիստոնե-  
ային: Անվախ էին առաքեալները, երբ  
հրապարակներու վրայ, հրեայ և կեթա-  
նոս խաժանգներուն կը քարոզէին սկզբ-  
ունքները Քրիստոսով աշխարհ բերուած  
սիրոյ վարդապետութեան: Ուրաւ — և  
ուստի անվախ — էին Սեդրաք, Միտաք  
և Արեդնազով, երբ ճշմարիտ Աստուծայն  
նկատմամբ իրենց ունեցած հաւատքին  
կամար կը յանձնուէին հնոցի խանձուցին:  
Անվախ էին բիւրուսար մարտիրոսները  
Քրիստոսի Սկեղեցիին, ենթարկուելով  
իսկ ամենէն անազուր գելանքներուն և  
խոշտանգումներուն, ու անվախ՝ երբ կը  
պառկէին սուրին տակը զարհիճին կամ կը  
նետուին գուրը գիշատիչ զազաններուն :

Անվախ էին նմանապէս վարդանանք,  
երբ կը ճակատէին իրենցմէ անհուսօրէն  
բազմապատիկ պարսիկ բանակին դէմ՝  
Ու անվախութիւնը մնաց սիրական յատ-  
կանիչը յիտազայ դարերուն ևօ կրօնա-  
կան ու բարոյական առողջ սկզբունքնե-  
րու սիրոյն իրենց լաւագոյնը — ու յա-  
ճախ նաև կենսան — զոհաբերող ընառը-  
եայներուն: Վժժի Աստուած ընդ մեզ է՝  
Խժժ իցէ մեզ հակառակ, կը պատգամէր  
այնքան իրաւամբ կեթանոսացաւաքեալը :

Ճիշդ է թէ վախի զգացումը մեր մէջ ծնունդ կ'առնէ յաճախ առանկէն ու անպաշտպան մնացած ըլլալու գիտակցութեանէն: Մասնակէր երբ կեռու է իր ծնողքին գորգորտու հովանիէն, կը համակուի վախի զգացումով: Բնական է որ նոյնը տիրապետէ նաև մեր օրտերուն մէջ երբ քաղաքական վերիվայրումներու շրջանին կեդրոնակէջ իշխանութեան մը քացակառուցութիւնը ստեղծէ խառնաշփոթ կացութեան մը, ուր ազաւ ասպարէզ գտնեն թալանն ու սեփրը: Անա թէ ինչու, Գրիտատոսի նման, մեր Տիրոջ ներկայութիւնը իր կեա ու իր կողքին զգացող անհատն է միայն որ կրնայ ըլլալ անվախ և սևտի՛ երջանիկ:

Գրիտոս թէ միապահան, քանզի նոյն մեր ու երեսոյթներ անպահաս են ամէն ատեն ու ամէն տեղ: Ու գրիտոս թէ արհամարհելի չեն անոնց զօրութիւնները: Գրիտոսը նաև թէ կարկին տակ նեք աւանդ դէմ մաքանելու, մեծ առաքելին բառերով՝ արարեք պատերազմը՝ ժղելու Յաղթական դուրս գալու համար ուրիշ միջոց չկայ, բայց եթէ զինուիլ քրիտատենական առաքելութիւններով ու մասնական սիրով: Հելլոսի պատուիրանին սէր է, կ'ընէ Սրբազան Մատանը, մինչ ճշտագէտ զսպառազինութիւն Աստուծոյն կը պատգամէ Պօղոս առաքեալ:

Պէտք է սակայն տարբորչել երկիւղ և վախ բառերը իրարմէ, քանի որ բացարձակ նոյնութիւն մը չէ որ սենի գոյութիւն երկուքին ալ իմաստին միջև: Վայելը աւելի նաև իմաստը հոգին, ժամանակով կեռու՝ կամ անբոշ պատահորներու նկատմամբ այժմէն իսկ անծուած մտահոգութեան, մինչ երկիւղը իր ընթացիկ, սովորական իմաստին քովն է վեր կը թնլաբրէ՛ մեզ պատկառանքի, սկիսածանքի վիճակ մը: Հսկասակ պարագային, դժուար պիտի ըլլար հաշտեցնել իսկական քրիտատեսային վերապահուած անվասութեան գրութիւնը Ս. Գրական ՎՅկիղըն իմաստութեան՝ երկիւղ Տեսուն՝ չհինցող պատգամին և Պօղոս առաքեալի ճկին երկնչիցի առնէ իւրմէ՛ն հրահանգին կեա: Ս. Անտարանի ընթերցումը կանխող ճերկելութեամբ լուարուքք ազ-

գարարութիւնը և ժողովուրդին կողմէ յաճախ կրկնուած ճշման կայ որ (կամ ճիշդ վախնանք օրք) պատերազմ ծագի՛ն (կամ այլ դժբախտութիւն մը պատահի) բացարարութիւնը լաւագոյնա կը բացատրեն մեր միտքը:

Վերադառնալով մեր բնորանին, բարոյական մեծագոյն դասը զոր կարելի է հանել ներշնտակի խօսքերէն այն է թէ պէտք չէ վախնալ, մաստանջուիլ, բարոյալքուիլ, անյուսօրէն արամիլ՝ նոյն իսկ մեր սիրելիներէն մին հողին ու գերեզմանին յանննելէ ետք, նախ որովհետե ֆիզիքական մահը բնական օրէնքն է կեանքին ու յետոյ վանդի ՎՄեր (քրիտատեսներուն) յոյսը լի է անմահութեամբ: Ոչ մէկ քրիտատեսայ պէտք է թոյլ տայ ինքզինքին նայելու մահուան որպէս անթափանցելի վարագոյր մը, որուն ետին ոչնչութիւն է, յաւերժական անէութիւն:

Գրիտատոս իր մտով պատուած է վարագոյրը մահուան ու միացուցած աստեալը կեանքը յաւերժին: (Գրիտատոսի խաչափայտին վրայ հողին աւանդած ատեն Ֆանարի վարագոյրին կերտումը Ս. Գրական մեկնիչներու կողմէ նկատուած է որպէս քանդումը զայդ կեանքերը իրարմէ բաժնող պատուարին:)

Պէտք չէ թոյլ տայ նաև որ ներթապաշտ, սկեպտիկ ու հակակրօն զազափարաքանութիւններ, որոնք կենդարար յոյսը մեղմէ խելու և մահուան խաւարը թանկարացնելու պաշտօնը ունին, արմատանան մեր մտքին մէջ: Առանց անմահութեան քաղցր յոյսին, մենք ամէն օր քոյլ մը աւելի մահուան ու քոյլալման քացող կղկելի սրբործներ ենք, աւազէս տայցըւած վախի ու անստուգութեան վիճակներէն, նման անպատին մէջ մտորած նամբորդին, որ կ'ոնգիտանայ գոյութիւնը սվտախօս պատանի:

Մեզի կը մնայ հանդերձել մեր հողիները քրիտատենական յարեմասնութիւններով, ըլլալու համար մառանգորգները Գրիտատոսի մահով ևս յարութեամբ մեր առջև բացուած յաւերժական կեանքին:

ԳԼՈՐԳ Ս. ՃԻՆՈՎԻԶՆԱՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ  
ԱՊՐԻԼ 24Ը

Այսօր Համախորհային Ա. Պատկերազմի ընթացքին զոհ գացած մեր բերուոր նահատակներու յիշատակի ոգեկոչման օրն է:

Վաթսունեօթ տարիներ անցած են այն սև օրէն, ուր սկսուեալ մեր ժողովուրդի տարագրութիւնը, և Պոլսէն մինչև Վասպուրական և Կարինէն մինչև Տէր Զօր երկարող ընդարձակ տարածութիւնը ծածկրեցաւ մեր անմահանուն նահատակներու անթաղ-անչորիմ մարմիններով ու արեան ճապողիքներով: Կտարուածը մարդկային պատմութեան մէջ իր նմանը չունեցող բարբարոսային արարք մըն էր, ճիւղային վայրագութեամբ դժօխային խզժգութիւն մը: Մարդակերպ զազաններու, սորիններու տարտապողու վնասիկ մը յօռտեց, վամբիրու նորդա մը թունաւորեց ամբողջ թրքահայութիւնը, տառնց տարիքի ու սեռի խտրութեան: Իսկ մենք՝ այս համատարած ու զազրիկ սպանդէն մազապուրծ վերապրողներս, սչինչով կարողացանք ամոքել մեր այրած սրտերուն մէջ մղտացող կակիժը, ոչ ինչով կարողացանք ամոքել մեր նոզիւններուն մէջ փրփրացող դառնութիւնը և գոհացում տալ մեր ընդվզած գիտակցութեան:

Ո՛ր աշխարհի բոլոր բուրաստաններու ծողիկներուն փունջերը, ո՛չ հայ ժողովուրդի նեղիզմաման արցունքները և ոչ ալ վրժժանդրական լուսանքներ կը բաւեն և կարող կը լինեն հանդարտեցնել հայութեան ըմբոստացած խղճմասանքն ու զխտակցութիւնը, որովհետև յօշոտուած մեր բերուոր նահատակներու յիշատակը շարունակ պիտի տանջէ մեր սրտերը ու բորբոքէ մեր նոզիկները:

Այսօր ամենուրեք, գերեզմանատուներու մէջ և յուշարձաններու առջև, կը տօնենք մեր ազգային անմահութիւնը և բարոյական մեր յաղթանակը: Իր բովանդակ պատմութեան ընթացքին, հայու-

թիւնը քաջութեամբ դիմակայած է օտար ներխուժումներուն, տառնց մազաչափ շեղելու իր պայքերու լոյս հաւատքէն: Բազ գիտակից իր սգիի գերազանցութեան և նաւասփի ճշմարտութեան, ինչպէս նաև իր ցեղային յատկութիւններուն ու կենսունակութեան, շատ անգամ ան յանձն առած է Զարգը, թէկուզ գանգուածային, քան իր ինքնութեան ուրացումը: Անխտարար զոհած է ամէն ինչ, փրկելու համար իր պատիւը, հաւատքն ու ազգային ինքնութիւնը: Հայ արեւելեան փոքր ժողովուրդներու ՁՓարսանածն է, մտաւոր ու ոգեկան լոյսին վազող:

1915ի գառն ու գոյման օրերուն, մեր ժողովուրդը զերազոյն տպացոյցը արուտ անպարտելի իր նաւասփին, ու ցեղային ինքնութեան, Բազ գիտակից ինքն սպառնացող ահաւոր վտանգին՝ դիմադրաւեց մարմնական մահը ու ներսարար ինկաւ իր պայակնական նոզին վրայ:

Փառք ինկողներու վին կամքին ու կորովին: Իսկական նահատակներ եղան անոնք, որովհետև երկրային փառքերէն ու բարիքներէն վեր գրւանցան իրենց հաւատքն ու ազգային ինքնութիւնը, իրենց մարմնական գոյութիւնէն աւելի վեր գասեցին իրենց ազգային ու ցեղային ոգին, և իրենց մահով փաստեցին իրենց համոզումներուն ու զազափարսներուն ճշշ մտաութիւնը: Իրենց թափած արիւնովը կենսաւորեցին իրենց ազգային գոյութիւնը, իրենց իսկ մահովը սեպականացուցին, յաւերժացուցին իրենց ազգային ոգին: Իրենց դիակներով՝ հայ մաքին ու նոզիին, հայ մտածումին և զգացումին մէջ կոթողեցին իրենց յիշատակը, ինքզինքներին նոյնացուցին հայ ոգիին հետ, իրենց իսկ կեանքով կենդանութիւն տըւերն անոր, և անոր հետ տարեցան ու պիտի սպրին մինչև վախճանը ժամանակներու:

Աւ հա, այս համազումով և հասկացողութեամբ, տեղի ունեցան վասպուրականի, Շապին-Գարահիսարի, Ուրֆայի, Այնթապի, Հոնքի, Մուսա-Տաղի և Քլէի ներստատարները:

Այս հաւատքով ու համոզումով ինկան հայ պայպին ու մամիկը, իրենց

կողքին՝ իրենց զուակներն ու թռուները։ Անոնք իրենց աչքերը առաջաճ փակեցին արեան հոսանքներու մէջ, իրենց հոգին առանգեցին սուսայտանքի ու գալարած ներսն ու անկարագրելի պարուճներու մէջ։ Անվախ ու անվարան ինկան հայ մաքի ու սրտի հերոսներն ու հերոսուհիները, իրենց արեամբը ռուգելով հայաշխարհի գաշտերն ու ձորերը։ Արեժտեան Հայաստանը, իր ամբողջ լայնքովն երկայնքովը, անուր սպանդանոցի մը երևոյթը առաւ։ Ինչպէս մեր նահատակները ամուր այն վստահութեամբ թէ իրենց յաջորդող սերունդները պիտի ազդարարուին իրենց իսկ ազգովը։ Խրախուսեալ՝ իրենց իսկ օրինակովը, ջրբեկեղիով՝ իրենց կամքն ու կորովը՝ իրենց իսկ թափած մաշուր արիւնովը։

Ան առ զանգուածային խռատովանանքը, այս հաւաքական նահատակութիւնը, այս խմբական ու արիական հերոսութիւնը պարզապէս շեշտուած, սրբաբարձուածն ու նուիրականացուածն էր հայ ոգիի կենսատակութեան ու ունձանութեան։ Զանգուածներու արիւնով ե մահով սնած այս ոգին անցաւ անոնց յաջորդներուն՝ մեղի, ու ոգեկշիւց մեղ իրենց առկուանութեան ու անձանութեան վեհ գիտակցութեամբը, բոլորհետեւ անոնց կրած սոսկալի շարժարանքներն ու ասնջանքները, անոնց յանգուզն ու խիզախ կեցուածքը, անոնց անվեհեր ու պաշտելի ոգին ներշնչարան են բոլոր մամանակներու բոլոր սերունդներուն։ Անշուշա թէ մահը արհամարհելի գիտցող ժողովուրդ մըն է մեր ժողովուրդը։ 1915ի սերունդը լուսազոյն վկայութիւնը բերաւ անուրանալի այս ճշմարտութեան։

Քրիստոնէական եկեղեցին, քան դարերու վրայ երկարաձգուած իր կեանքով, կրնայ վկայել այս գերազանց ճշմարտութեան, որովհետեւ ան իր զօրութիւնն ու անպարտելիութիւնը մեծաւ մասամբ կը պարտի խաչի կրօնին համար զոհուած մարտիրոսներու անմահ շարանին։

Կասկած չկայ որ այսօրուան հայը իր կենսունակութիւնը կը պարտի իր նահատակներուն թափած անմեղ արեան։ Անոնք՝ որոնք հաւաքական մահուան գա-

ցին եւ չուրացան իրենց հաւատքն ու ազգութիւնը, Հայց Առաքելական Ս. եկեղեցին եւ իրենց սակեղինիկ մայրենի լեզուն։ Մեր անմահունեն նահատակները սպանդէն վերապրողներուն կտակ թողուցին հայութեան դրօշը՝ նուիրաբարձուած դարերու ընթացքին կրօնի եւ հայրենիքի համար՝ նահատակուած անթիւ քաղերու անարատ արիւնովը։

Այդ համբուրելի հերոսներու սգին ժառանգորդներն ենք մենք։ Պարտաւոր ենք ուրեմն մեր նախնիքներէն մեղի փախանցուած լուսափառի ջուր նոյն — է ինչ՞ու՞ չէ՞՝ առաւել — պայծառութեամբ փոխանցել մեր յետնորդներուն։

Լաւ գիտանք ու նազնանք խորհուրդը այդ կտակին։ Հետեւե՞ք մեր պատերու ողջմտութեան։ Մեր առօրեայ շահերն ու կեանքէն վեր գտանք մեր ազգային ոգին, մեր ցեղային ըմբռնուած, մեր հոգիին առնը՝ մեր Մայր եկեղեցին։ Այդ մամանակ է որ հանգիստ պիտի ունենան հոգիները բիրաւոր մեր նահապետներուն։ Սուգի ու արտօնութեան օր մըն է զոր կ'ապրինք, բայց փառքի տօն մըն է զոր կը կատարենք։ Ճիշդ է թէ կորսնցուցինք՝ բայց չկորսուեցանք։ Եւ թէ պիտի կորսուէինք՝ եթէ չկորսնցունէինք։ Մեր նահատակները մեր անմահութիւնը կերտեցին, որովհետեւ անոնք մեզան յոյսով մը որ յի էր անմահութեամբ։

Օրհնութիւն ե փառք իրենց սուրբ յիշատակին։

ՌՈՒԻԲԷՆ ՎՐԴ. ՅՈՎԱԿԻՄԿԱՆ



# ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ

## ՏԵՆԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ

287 ԱՐԿԱՐԱՑՄԱՆ ՄՈՒՑՆԱԼ ՊԱՏ.

ՃԱՌՆ ԵՆ ԱՒԱՏՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ. — Խօսքին կարգը կը բերէ զմեզ նկատի առնելու արդարացման պայմանները: Ըստ Բողոք քահանայ. «Իսկ պայմանն է հաւատքը՝ ինչպէս յիշեցինք: Անոնք հաւատքը կը թաժնեն Կրեք տեսակներու, համեմատ հաւատքին առարկաներուն»: որոնք են պատմութիւններ, Գրութիւններ, խոստումներ: Իսկ արդարացուցիչ հաւատք ըսելով կը հասկնան Քրիստոսի խոստումներուն վրայ կրուած վստահութիւնը, .և անկէ միայ կրնան ցնեն արդարացումը, ապրոց հաւատացեալին հոգով ցոյց տրուած սերիչ որեւէ պայմանի: Սահայն Ս. Գիրքը լոկ հաւատքով չի բաւականանար, կը արդարացման շրջան մասին կը խօսի: «Եւ անորէն» եթէ դարձցի յամենայն անորէն նուրիանց իւրոյ զոր արեւ, և պահեսցէ զամենայն պատուիրանս իմ, և արասցէ արդարութիւն և ողորմութիւն, կելով կեցցէ և մի մեռանիցի» (Եզեկ. ԺԸ. 21): Եւ որպէսզի չկարծուի թէ նոր (բաւը ան ընթանի) մէջ փոխուած է որէնքը, ի դէպ է յիշեցնել նաև Քրիստոսի առաքեալին ընդ ի խօսքը: «Ի դարձոց արդարանայ մարդ և ոչ ի հաւատոյ միայն» (Յակ. Բ. 24): կը ձայնակցի նաև Պողոս. «Զի ոչ եթէ որ լուծիք որինացն են՝ արդարացեալ են առաջի Աստուծոյ, այլ տանելիք օրինացն արդարացիցն» (Հռոմ. Բ. 13): Զի՝ «Եթէ ունիցիմ զամենայն հաւատս մինչև զկերինս փոփոխեալոյ, և զսէր ոչ ունիցիմ՝ ոչինչ օգտիմ» (Ա. կորնթ. ԺԳ. 2): Այս պատճառաւ «Ի Քրիստոս ոչ թլփատութիւն ինչ է և ոչ անթլփատութիւն, այլ հաւատք սիրով յաճողեալք» (Գրառ. Ե. 6): Այս բոլոր վկայութիւններէն կը տեսնուի թէ բացի հաւատքէն կը փնտռուին նաև բարի գործեր և սէր, որոնք գործնական առաքինութիւններ են, զի բոլոր բարի գործերը սովոր ենք սիրոյ մէջ հասկնալ,

ըստ այնմ թէ շարունակ օրինաց սեր է» (Հռոմ. ԺԳ. 10):

288. ԱՒԱՏՔԸ ՍՈՍԿ ՎԱՏԱՂՈՒԹԻՒՆ ԶԷ ՔՐԻՍՏՈՍԻ ԽՈՍՏՈՒՄՆԵՐՈՒՆ. — Հարկ է գիտնալ նաև թէ ամէն բանի մէջ փրկուած թեան հիմ ներկայացուած հաւատքը լոկ խոստումներու վրայ վստահութիւն կամ մեղաց թողութեան ապահովութիւն չէ, այլ Քրիստոսէ յայտնուած ճշմարտութեանց մասին մտաւոր իսկական հաւանութիւն: Այդ է զոր կը նստատու և Յովաննէս, ըսելով. «Այլ նա յայնչպի ինչ գրեցաւ, զի հաւատացէք կթէ Յիշ սուս Քրիստոս Կ. Արքի Աստուծոյ և զի հաւատացէք. և զկանս յաւանականս ընդունիցիք յանուն նորոյ (Յովն. Ի. 31), ու հաւատքը, զոր Փիլիպպոս պահանջեց ներքինիէն, այս եղաւ որ դաւանեցաւ և ըսաւ. «Հաւատամ եթէ է Յիշուս Քրիստոս Որդի Աստուծոյ» (Գործք. Ը. 37): Արք՝ Քրիստոսի աստուածորդութեան կամ աստուածութեան կամ յարութեան դաւանութիւնը Քրիստոսի սակ. խոստումներուն վստահութիւնէն աւելի բան մըն է:

289. ԱՐԿԱՐԱՑՈՒՄԻՆ ԵՐԵՒ ԹԱՅՈՒՒԹԻՒՆՆԵՐԸ. — Սրբարար շնորհը համեմատեցինք արքութեան հետ, կամ, ինչ որ նոյնն է, արդարացման շնորհը՝ արդարացումին հետ, իբրև պատճառ գործին հետ, ու խօսեցով արդարութեան մասին՝ ցոյց տուինք անոր պայմանները, ցուցնենք հիմակ ու անոնք յատկութիւնները: Ասոնք կրեք կը համարուին, անստուգութիւն, անհաւատարմութիւն, անհաստատութիւն: Ու այս երեք յատկութիւններուն համեմատ կը կազմուին առ երեք վարդապետական սկզբունքները կամ գլուխները. ոչ ոք կրնայ անհրկայ ստուգութեամբ հաւատարի լինել իր արդարութեան մասին. ոչ ոք պէտք է կարծէ թէ իր ստացած արդարութիւնը հաւատար է ամենուն մէջ և պիտի մնայ հաւատար, այլ թէ կարող է անեցնել զայն հետզհետէ, և վերջապէս թէ ոչ ոք կրնայ ապահով ըլլալ թէ անկարուստ պիտի մնայ իր պատգամ արդարութիւնը, այլ ընդ-

հակառակն պետք է վարենայ որ մի գուցէ մեղօք կորսնցնէ գունդս: Այս երեք գլուխներուն գլխավին կը հակառակին արեմահան նորազանգները. անոնց ներհակ երեք գլուխներ գրելով. բայց Ա. Գրոց բացայայտպէս վարդապետութիւնը չի նպատակ անոնց վարդապետութիւնը:

290. Ա. ԳԻՐԲԷՆ. ՎԿԱՌՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՅ: ԿԵՆՏԻՆ. — Առաջին վկայութիւնը ունինք Պօղոսէ, որ խօսելով իր ունին մասին կ'ըսէր. ճնակ գտնան իմ ոչ քնննեմ, զի ոչինչ գիտեմ գտնան իմոյ, այլ նշ Եթէ այսու օրոքս անտրամ. զի որ քննէ՞ն զիս" Տէր էջ (Ա. Կորնթ. Գ. 4): Նոյնը հաստատու է կանխաւ Առտկոզն այ ճ՞՞՞ պործնացի սիրտ սուրբ ունել. կամ ճ՞՞՞ համարձակուցի՞ Եթէ սուրբ իցէ ի մեղացն (Աւսին. Ի. 5): Իսկ երկրորդին համար լւնինք Պօղոսի խօսքը, որ կը մտցնէ որ Աստուած զՊօղոսը անցէ և քաղաքացի զանթանիս անք, և անկցուցէ զարդիւնս արդարութեան անբոյ, յամենայնի մեծացեալս ամենայն անասութեամբն (Ք. Դ. ք. Ե Ժ 1) - Կ): Նոյնը կը քաղենք անտրամ իսպարիւն, որոնց մէջ կը խօսուի մեծազոյն սիրոյ՝ և կատարեալ սիրոյ մասին, որ քառով իսկ ընդանձն կ'ըլլայ փոքրագոյնին և անկատարին այ գոյութիւնը, հեռուարք և նուազուիլն ու աստուարութիւնը: Քրիստոս կ'ըսէր. ճ՞՞՞ և օքսն զայս սէր ոչ յոք ունի, Եթէ գտնան իւր զիցէ ի վերայ բարեկամաց իւրոցն (Յովն. ԺԵ. 13): Ու Յովնաննքս կը գրէր. Քերթիւղ ոչ զոյ ի սէր, այլ սէրն կատարեալ ի բոց մեթէ զերկիւղն (Ա. Յովն. Գ. 18): Երրորդին համար բաւական ըլլայ յիշել Քրիստոսի խօսքերը իր այտակարանը. Ակրթուն կայէք և աղօթս արարէք. զի մի՛ անկանիցիք ի փորձութիւնս (Լուսթ. ԻԶ. 41), ու Պօղոսի խրատները. ճ՞՞՞ աստապ շատասկցար, մի՛ հպարտանար, այլ երկի՛ր (Հռոմ. Ժ. 1): 291. Ճ՞՞՞ ԱՐ համարիցի աստատուել կայ գրոյն լիցի, գուցէ անկանիցի (Ա. Կորն. Ժ. 12). այսպէս զեռ յաճախ ուրիշ Թուգիկիւրուն մէջ ևս Դարձեալ, նոր կատակարանի բոլոր գիրքերը կը քաղաչանեն աս

շակերտանիւններ մեղքէ և կորուստէ, հետեւարք և կ'անթագրեն հաստատութիւնս աստացած արդարութիւնը կորսնցնելու:

291. — Շնորհաց վերաբերմամբ վերջին խնդիրն է արդեանց կամ արժանեաց կամ վաստակաց (mérite) գոյութիւնը, յասպ կեամ արեմանն նորազանգներուն նոր վարդապետութիւններէն, որոնք ուղիցին զրկել մարդիկ ու նոյնիսկ հաւատարեալները, անձնական արժանեաց հաստատութիւնէն, ըսելով Թէ ամեն արժանիք սեփական է միայն Քրիստոսի, և անոր վաստակն է որ կը տարածուի ամենուս մէջ, և թէ մարդային գործերը, ի՛նչ վիճակի կամ աստիճանի կամ եղանակի մէջ այ ըլլան. չեն կրնար արդիւնք կազմել կամ արժանիքի չիմ ըլլալ կամ վաստակոց փաստ՝ Աստուծոյ առջև: Այնպէս որ ինչ որ մորթի զը գործէ՛ կը գործէ ի գորք, և անոնցմէ ոչ մէկ սպասել կայ իրեն: Ինչպէս նախնիաց խնդիրներուն նոյնպէս և նոյս խնդրոյն մէջ՝ ուղղադասուել վարդապետութեան տարազայնան նրբութիւնները և Քրիստոսի արժանեաց քերտուցանութեան բացատրութիւնները և նոյք արժանիքն իրան զարդաներուն իրականութիւնը տնայէս մը ազգած են անոնց վրայ որ, ինչ որ լսած են թէ անզոյնպէս կը հաստատեն ստարասարք, իրենք հակառակորէն տարուած են քացառօրէն մերթելու, քացի Քրիստոսի արժանեաց քերտուցանութիւնն, տնայէս որ այս վերջինին բացարձակ ստուգութիւնը կամ հիմնականութիւնը խորհիլ տուած է իրենց՝ մարդուն մէջ ըլլալիք քարի գործերուն արդիւնքին կամ որ՝ ժանիքն անհիմնականութեան վրայ կամ, ուրիշ քացատրութեամբ, մէկին ազգումը յասպ ըրտած է իրենց մասնագին մէջ միւսին շնչումը:

292. ԻՆԿՈՒԹԻՒՆ ԱՐԻՆԵՆՆԵՐ ԿԵՄ ՎԱՍՏԻՎԻՍ. — Արդիւնք կամ վաստակ ըսելով ստորաբար կը հասկցուի Աստուծոյ ծառայելու համար կատարուած այն բարի գործը, որ կրնայ շարժել զհաստուած քերտուցանական պարզներն հաստուցանելու: Այդ հաստուցումը կը կոչուի վարձք կամ

պարզեւ, և անոր արևուծիւնը կը կոչուի վարձատրութիւն կամ պարզենեւու հատուցում: Արդիւնքը կը տարբերի գինէն, որ ուրիշ բանի մը հաւասարակշիւ բան մըն է. կը տարբերի նաեւ խնդրանքէն՝ որ հայտնածին զօրութեամբ եղած ընդունուածն է, և վճարումէն կամ շնասուց հատուցումէն՝ որ գործուած անիրաւութեան կամ զօրութեան տեղ ընծայուած փոխարինութիւնն է: Արդիւնքը կամ վաստակը գլխաւորաբար երկու տեսակ է, էական և հաղորդական, առաջինը ինքն իր մէջ ունի իր արժանիքը. այսպէս են Գրիտասի վաստակները կամ արդիւնքները. իսկ այս վերջինը իր ուժը կ'ընդունի ուրիշին հետ ունեցած իր հաղորդութենէն, որ այս պարագային՝ Գրիտասին վաստակին հետ եղած հարցաբանութիւնն է: Վաստակը ուրիշ տեսակներ ալ ունի, ըստ արժանեաց և ըստ պատշաճի: Ատոնցմէ առաջինը կ'իրականանայ արդիւնքին և հատուցումին համեմատութեան մէջ, այնպէս որ, այդ պարագային, հատուցումը արդարութեան համեմատ կը պահանջուի. իսկ երկրորդը կ'ընտանաւոր պարզեւնէն գործել, բայց չի կրնար ծնիլ արդարութեան շնորհ. ուստի արևուծիւնը առաջինէն այնչափ կը տարբերի որչափ պատշաճը հարկէն: Այս երկուքը կը յայտնուին շարժում յառաջ բերող զօրութեան զանազանութեանն և հատուցում յառաջ բերող հաւասարութեան զանազանութենէն: Վասնզի Թէն, ճշգրիտ խօսելով, շարժելու զօրութիւնը յառաջ կու գայ հատուցմանց հաւասարութենէն, և սակայն գործողին և իր պարագաներուն թանձրացեալ վիճակին մէջ անորժէք կամ սակաւորժէք գործը, ըստ անգամ՝ խոհական է կամ իմաստուն իշխանին համար արժանաւոր՝ կամ աւելի ճիշդ, պատշաճաւոր, կ'երևի գործին յարգէն գերիվեր եղած հատուցումի մը: Այս է ըստ պատշաճի արդիւնքը: Իսկ ըստ արժանեաց արդիւնքին մէջ՝ պէտք չէ արդիւնքը հատուցմանց հետ այնպէս կշռել ինչպէս սովոր ենք չափել իրերու գինը վաճառումի գալինքին մէջ, այլ ինչպէս կը համեմատենք բերքին արդիւնքը ցանուած սերմին հետ:

Այսչափը բաւական ըլլայ արդեանց կամ վաստակոց իսկութեան բացատրութեան համար:

293. ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՄԱՐՏԻՍ ՄԵՋ ԱՐԴԻՒՆԵՐ ԳՈՅՈՒԹԻՒՆՆԵՐ ՄԱՍԻՆ. — Իսկ մարտոց մէջ արդեանց գոյութեան մասին կը վկայէ Պոզոս յայտնապէս. «Ինչպէսնչիւր ոք գիւր վարձ առնուցու ըստ իւրում վաստակոց» (Ա. Կորն. Գ. 8), ու գործեալ՝ «Ո՛րք գիտէք, եթէ որ յատկարիչին ընթանան, ընթանալ ամենեքին ընթանան, բայց մի ոք առնու զյաղթութեանն, այնպէս ընթացաբար զի հասանիցէք» (Ա. Կորն. Թ. 24), ու ինքզինքին համար խօսելով կ'ըսէ. «Ձերաւոր պատերազմի պատերազմեցայ, զընթացսն կատարեցի, զհաւատսն պահեցի. այսուհետե կայ մնայ ինձ արդարութեան պահանջ, զոր հատուցէ ինձ Տէր յաւուր յայնմիկ արդարեւ դատաւոր» (Ք. Տիմ. Գ. 7-8): Աւելորդ կը համարինք վկայութիւններ բարդել, վասն զի ամբողջ Ս. Գրքին մէջ երկնից արքայութեան իբրև օրինակ յառաջ կը բերուի պօսակը, որ պատերազմէն և յաղթութենէն վերջ իբրև վարձք կը տրուի քաջութեան արդեանց և առաքինական վաստակոց համար:

294. ԿԱՅՈՒԹԻՒՆԻ ԵՒ ՎԱՍՏԱԿԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ. — Բազմագիտի խնդիրներ կը յուզուին Գարցնականեբուն մէջ՝ վաստակի և արդիւնքի հանգամանքներուն մասին, և որովհետեւ մենք չենք ուզեր սուղուիլ այդպիսի հարցերու մէջ, բաւական կը նկատենք ամփոփել այստեղ անոնցմէ ամենէն կարեւորները: 1) Թէն շատերը կ'ընդունին թէ մարդկային գործերը իրենց սեփական վաստակները ունին և հետևաբար ըստ արժանեաց վարձքեր, բայց կան նաև որոշ ըստ պատշաճից կը կարծեն արդարներուն խոստացուած վարձքերը: 2) Ըստ արժանեաց վարձքը պաշտպանողները կը զանազանեն զայն ըստ գնոյ հատուցումէն, ու այսպէս կը մեկնեն Պոզոսի խօսքը. «Ինձ այնպէս թուի եթէ ոչ են արժանի չարչարանք ժամանակիս հանդերձելոց փառացն՝ որ յայտնելոց են ի մեզ» (Հուսմ.

## Փ Ա Ռ Ք Ա Ն Մ Ա Հ Ն Ե Ր Ի Ն

Փառք անմահներին, նրանց վեհ գործին,  
 Փառք նրանց սիրոյն, անվեհեր կամքին,  
 Նրանք զոհուեցին, անմահ մնացին,  
 Հայ ժողովուրդին պատիւ բերեցին:

Փառք նրանց կրած տանջալի կեանքին,  
 Փառք նրանց ձևով բերած անմահ արդիւնքին,  
 Դարեր շարունակ նրանք կը յիշուեն.  
 Արժանի կ'լինեն երկնային փառքին:

Փառք Հայ ժողովրդի կրած տանջանքին,  
 Փառք նրա բափուած կարմիր արիւնին,  
 Փառք նրանց հոգւոյն, ամբասիր գործին,  
 Որ պատիւ բերին Հայ ժողովուրդին:

Խունկ ու պատարագ նրանց շիրմին,  
 Կատարեալ հանգիստ նրանց անիւնին,  
 Քող Տէրը նրանց լոյսով պսակէ,  
 Հանգիւնեալ կեանքին արժանի անէ:

ՌՈՒԲԷՆ ՎՐԴ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

Հ. 18): 3) Նմանապէս, ըստ արժանեաց  
 հատուցմանց գրութեան մէջ, պիտի բըռ-  
 նելով Քրիստոսի խոստումներուն վրայ  
 հաստատուած գլխաւոր հիմքը, սովորական  
 է կարծել թէ հարկ է չզրկել բանական և  
 սպաս զործողին զործերը որքէ ըստ ներ-

քին արգելանց արժանաւորութենէ: 4)  
 Այսուհանդերձ, ըստ Պողոսի խոսքերուն՝  
 զորս յիշեցինք, միշտ տեղ կը մնայ ըստ-  
 լու թէ ինչ որ ալ լինի զործին արժե-  
 քը, հաստատուած վարձքը միշտ ալ ար-  
 ժանիքէն վեր կ'ըլլայ:

(Շարունակելի՝ 29)

ՄԱՀԱԲԻԱ ԱՐԲԵՊՍ. ՕՐՄԱՆԵԱՆ

## Ֆ Լ Ռ Ե Ա Կ Ն Ե Ր

Ան շողերը արևուն դեռ վերջնապես չըմարած,  
 Մահուան շունչէն ասկալին Յոյսը ի սպառ չըստած,  
 Բարձունիէ մը կ'ուզէի դիտել ինչ որ իմ համբուս  
 Հանդիպած եմ, ս'ըրազեղ կարօտով սիրտ վարարած:

Այնպէս է սիրքս աննկուքեամբ լիցուած,  
 Գութով ալ՝ ամէն իրերան համար ...  
 Կ'ուզեմ համբուրել սիրով գրկաբաց  
 Բոյսն այս նարածիլ ե՛ այս հոշին ու քար:

Արեցի՛ բզեզ իմ մանկութենէս,  
 Յաւելեալ սիրով կը սիրեմ դէռ ինչ ...  
 Մայր երկիր, փոխան սիրոյն գիւ ծոցդ առ,  
 Որքէ մայրական սիրովդ անըսպառ:

Ինչ որ խրամմով կը շինես՝ ինչ ետ՝ անփոյթ կը քանդես,  
 Կը տեսնեմ, կ'ապախեմ, կը զարմանամ ես ...  
 Ի՞նչ է այս, բռն, ով Մայր Բրնուրիւն, ի՞նչ կ'ասուկ անհամ,  
 Ի՞նչ ընեմ հիմա, խնդա՛մ սէ ոչ լամ:

Երանի՛ է ինչ, ծարսու ուղեոր,  
 Երանի ծարաւդ մընայ միտ անեղ,  
 Սիրքդ չունենայ թքիքը անգոր,  
 Ազբիւրիմ Ակը փնտռես դուն անվերջ:

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

## ԿՐ ՍԻՐ Ե Մ...

Կր սիրեմ գարնան անձրևը բարակ,  
 Գոչները ամրան, արեւն իր շախմկ,  
 'Կալուկը աշնան' հազցութիւն համակ,  
 Ան նայնիսկ ձմեռան փոքորիկն ու փոխ:

Կը սիրեմ մանկանց ճառագիւնն անմեղ,  
 Ան պարմաններուն եռանդն ու տախն,  
 Կոյսերուն շարփանքը շխտեցազնոյ  
 Ան զարեցներուն ի սններն խմաստն:

Կը սիրեմ ես գիրք, երգ ու գեղարուեստ.  
 Աղօթքը՝ փրթած սրէ: մը բարի,  
 Զղուս բազուկներն բանուորին համեստ  
 Ան մահաւան զացող զինուորն հաշարի:

Սիրած եմ ես խոր, սիրած եմ սոժգին,  
 Սիրոյ դէմ մեղքի լեռներն կը կէին.  
 Սիրես եմ օժեռ սիրով անապատ,  
 Որ վիթսիսն զիմաց մնայ դուռն իր փակ:

Կը սիրեմ ես շատ, կը սիրեմ ես խոր,  
 Սիրո՛ւ կը ջանամ յազրել ժանտ մահուան,  
 Քանզի աներկբայ ես կը հաւատամ  
 Քէ սէրն է մահէն աւելի հզօր:

Գ. ՀԱՐՏԱՐ

# ԲՆԱՍԻՐԱԿԱՆ

## ՉԱՔԱՐԻԱ ԵՐԷՑ ԱՒԱՆՑԻ, ՎԱՆԵՑԻ (1594-1616)

Չաքարիա Երէց՝ գրիչ, նկարող և կազմող էր միանգամայն: Ծնած է ԺՁ. դարու կիսուն մասաւորապէս: Որդին էր Յովնանէս Քանանայի (+ 1600) և Ուլուխաթունի: Մայրը կանախ մեռած ըլլալուն մեծցած է հորը խնամքով: Ամուսնացած էր Մամուռի նետ, Եղած է աշակերտներ, որոնցմէ կը յիշուին տէր Մարտիրոս, Պօղոս սարկաւազ, Մելքոն, և Յովնանէս արկ. Տղաշեցի (Դիզակեցի):

Շահ Արասի վապուրականէն Պարսկաստան գերի տարածներուն մէջ եղած է ինքն ու: Այդ մասին կը գրէ իր մէկ յիշատակարանին մէջ. «Գրեցաւ սակաւ յիշատակս ի թվին ՌԾԸ. ձեռամբ Չաքարայ մեղապարս վանեցոյ, ի յերկիրս Պարսից, ի յոյժէն Գանդամանայ, ի թա. դաւարաթեան Պարսից Շահ Արասին, որ գամենայն սղոց Հայոց առ և գերի տարբեալ, և ճերմալ ի Պարսկաստանս, և եմք ի յայժմ ի ստուապանս...»: — Յիշտ. ԺԷ. Դարի, Ա. Հատոր, էջ 179 և 336: Յուցակ Ձեռ. Նոր Զուղայի, Ա., էջ 146: Վանեցի Չաքարիա Երէց վախճանած է 1616 թուին:

Չաքարիա գրիչ նշանուար է իր գործածած բազմատեսակ ծածկադրերով: Տես Յիշատակարանք ԺԷ. Դարի, Ա. Հատոր, էջ 22, 92, 412, 413, 414, 420, 421, 422 և 423: Նայելէս Յուցակ Ձեռագրաց Նոր Զուղայի, Ա. Հատոր, էջ 44 և 127:

Երկու տասնեակ արքիներ տեղ իր գրչական աշխատանքներէն ծանօթ են նեռեակները:

1. — Աւետարան, նկարած է 1596ին, Գրիչ՝ Սաղաթիէլ արեղայ (1577): Ստացող՝ Սիմէոն Արքեպ. — Ձեռ. Երևանի, թիւ 5507: Հմմտ. Ե. Լալայեան, Յուցակ Հայ. Ձեռ. Վապուրականի, 1915, էջ 685-690:

Յիշատակարանին մէջ կ'ըսէ. «Դարձեալ յիշեցէք զեղկելի Չաքարիաս և ըզհայրն իմ՝ զտէր Յովնանէս սրբամիտ քանանայն և զմայրն իմ՝ զՈւլուխաթուն. զի հայրն իմ անմայր սնոյց զիս (էջ 639-690):

2. — Աւետարան, 1595ին գրած է մասամբ և նկարազարդած: Գրչութեան մասնակցած են Կարապետ և Մելքիսեդեկ: Ստացող՝ մանսեի կոստանդ. — Ձեռ. Երևանի, թիւ 6503:

3. — Աւետարան, 1599ին ծաղկած և կազմած է: Գրիչ՝ Կարապետ արեղայ. — Ձեռ. Երևանի, թիւ 5794:

4. — Աւետարան, 1600ին ծաղկած և կազմած է: Գրիչ՝ Մարտիրոս Մոկացի: Ստացող՝ Շահալամ. — Ձեռ. Երևանի, թիւ 2804:

5. — Աւետարան, 1601ին նորոգած և կազմած է «Չաքարայ Աւանցի», զի զեղաբաղաքն որ կոչի Աւանց»: — Յիշտ. ԺԷ. Դարի, Ա. Հատոր, թիւ 22: Ձեռ. Երևանի, թիւ 10520:

6. — Աւետարան, 1603ին նկարած է Չաքարայ Աւանցի: Գրիչ՝ Կարապետ արեղայ: Ստացող՝ Պարոն Յովնանէս. որդի Մկրտչի. — Յիշտ. ԺԷ. Դարի, Ա. Հատոր, թիւ 105: Ձեռ. Երևանի, թիւ 4101:

7. — Աւետարան, 1610ին կազմած է Չաքարայ վանեցի զի զեղաբաղաքն Զուղայ: Գրիչ՝ Մարտիրոս քանանայ (1570): Ստացող՝ Հէրակոս Փարսեցի — Յիշտ. ԺԷ. Դարի, Ա. Հատոր, թիւ 483: Ձեռ. Նոր Զուղայի, թիւ 87:

8. — Աւետարան, 1611ին գրած, ծաղկած և կազմած է Չաքարայ Երէց վանեցի զի զեղա Բագաք: — Յիշտ. ԺԷ. Դարի, Ա. Հատոր, թիւ 518: Ձեռ. Երևանի, թիւ 5345:

9. — Աւետարան, 1611ին գրած, ծաղկած և կազմած է Չաքարայ Երէց վանեցի զի զեղադն Բագաք: Ստացող՝ գարբին Աստուածաուր. — Յիշտ. ԺԷ. Դարի, Ա. Հատոր, թիւ 528:

Յիշատակարանին մէջ կ'ըսէ. «Յիշեցէք... զեղկելի գծողս և զծնաւոյքն իմ՝ զտէր Յովնանէս և զՈւլուխաթունն, և զկողակիցն իմ զՄամուռա խաթունն. — Յիշտ. ԺԷ. Դարի, Ա., էջ 424:

# ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

Ժ. — ՄԵՇԻ ԵՐԿՈՒՇԱՐԱԹԻՆ, Ի ԹՁԵՆԻՆ ԵՒ ՑԱՌԱՍ

Երանելոյն Թէոփիլեա ասացեալ (ի) մեծի Բեթն, ի ԹՂԵՆԻՆ ԵՒ յԱՌԱՄ.  
Յաղագս (յ)անխիժից ԹՂԵՆՈՅՆ ԵՒ ՎԱՍՈՒ ԱՎԱՐԵՍԱՐՈՒՅԵԱՆ:

Արդ թէպէտ եւ բազումք ասացեալ<sup>10</sup> են եթէ՝ պատկեր անխիժց թզնոյն ցուցեալ ձեւանայր ի հրէայան՝ առ ի չինել ի նոցանէ պտուղ արգարութեան, սակայն ոչ է այդպէս. զի ոչ թէ պտուղ միայն ոչ ցուցաւ ի նոցանէ, այլ եւ ծառք պտղաբերք արգարութեան: Քանզի ի նոցանէ երևեցաւ մեծն այն եւ ընտրեայն Պողոս, որոյ պտուղ վարդապետութեանն, եւ ոստք հովանաւորութեանն հաւատոց յէջն ծածկեաց զամենայն հաւատացեալս. որ զարմատ կոսպաշտութեանն հրովն, որով լցեալ ի Հոգոյն Սրբոյ հրդեհեալ կիրոյր, եւ իւրովն արգիւնաւոր պտղովն զամենեանս կերակրէր: Կողոպտին եկեղ(եց)եաց՝ աւագակաց ամենայն զհամագոյ երրորդութեանն հաւատն զգեցուցանէր: Եկեղեցոյ աւար հարկանողն՝ զարդ լեալ տաճարին Աստուծոյ: Որ հայհոյիչն էր հաւատոց՝ քարոզ լեալ աստուածապաշտութեանն: Ամբաստանողն Քրիստոսի եւ քարոզողն դարձեալ աստուածութեան նորա, որ զնա իբրեւ զօրինագանց ի խաչ հանէին, զխաչեան յետոյ օրինաթու Աստուած քարոզէր:

Մեծն Պողոս՝ յերկրի կողոպտողն, եւ յերկինս զանձաւորն, մարդն վիրաւոր եւ բազմավիրաց թշուողն, կուրացեայն տեսանելեօք եւ երկնային լուսովն պայծառացեալն: Սա իսկ. յառաք բան զանէծս թզնոյն, զօտացեալ լինէր ի պտղոյ հաւատոցն քրիստոսեան, եւ յետ անխիժցն ապա պտղաբերեալ ի հաւատն յշմարտութեան, յորոյ պտղոյն արգարութեան եւ այժմ տիեզերք ամենայն կերակրեալ լինին:

Առեմ եւ քան զսա նախ զսուրբն Ստեփաննոս, զթագաւորին մերոյ յառաջակաց զինուորն, զքահանային մեծի զառաջին սարկաւազն, զնահա[տա]կադրին<sup>11</sup> սուրբ

<sup>10</sup> ասացեալն ժ <sup>11</sup> զնախադրին ժ

10. — Այօրսմանոց, 1612ին գրած, նկարած եւ կողմած է «Ի յաշխարհն Պարսից», իմոս «Ի գեաւուցն Քաղաք», ինչպէս ունին նախորդ եւ յաջորդ ձեռագիրները. — Յիշտ. ԺԷ. Դարբի, Ա. Հատոր, թիւ 582: Յուլիան Զեռ. Նոր Զուղայի, Բ. Հատոր, Լեռն Գ. Միասեան, 1972, էջ 44:

11. — Աւեսարան, 1614ին գրած, նկարած եւ կողմած է «Ի յաշխարհն Պարսից, ի գեաւուցն Քաթաք», աստուածասէր Շաղոսկիի ցանկութեամբ:

Յիշատակարանին մէջ կը կարդանք. «Յիշեցէք... զանպիտան գծողք եւ ըզծնուողքս իմ զաէր Յովաննէսն եւ զՆուր-խաթունն... եւ զաշակերան իմ զՄիւ-

թունն, եւ զհոգեւոր հոյսն իմ զաէր Յակոբն զուսուցանող զրիս եւ արուեստիս».  
— Յուլիան Զեռ. Նոր Զուղայի, Բ., էջ 114-115:

12. — Աւեսարան, 1615ին ձեռնորկած է ծաղկեալ եւ նկարեալ, բայց մասը վրայ հասած է եւ գործը կէս մնացած: Իր աշակերտը՝ Յովաննէս սրկ. Տղաղեցի արձանադրած է սապէս. «Հայս Աւեսարանս, վանեցի տէր Զաքարայ վարպետ ասն, այն էր սկիզբն արարեալ: Ի զթերն ամէն ծաղկել էր, տնաւրինականայն նկարեաց, ապա ողորմած հոգին վախճանեցաւ».  
— Յուլիան Զեռ. Նոր Զուղայի, Ա., էջ 155-156:

Ն. ԱՐՔ. ԵՈՎԱԿԱՆ

զառաջին նահատակն, զգասուց պատկաւորաց զառաջին պատկաւորն, զմարտիրոսական տնկոց զմարտիրոսաբեր արմատն, զբրիտանոսեան վկայիցն զվկայաբեր ծառն, յաստուածային հրոյն խորովելոց հացիցն՝ զքարաքարից հասկն:

Մոյնպէս եւ Ղինգիանտս<sup>50</sup> հարիւրապետն, քաւելոյն ի հէջիչն սոսցին խոստովանոյն, որ զի վերա խաչին չարչարեանն՝ Աստուած խոստովանելով, եւ յետոյ վսն սիրելոյ զհաստն խաչելոյն նահատակէք. որ ինքն զինքն մատոյց սրբոյն՝ պատարագին՝ պատարագ ասանց ճննեմբոյ. նորիքեաց եւ նուէրս նմա, գոր Աստուած խոստովանեցաւ ի վերա խաչին. եւ հոգովն սրբով զօրացեալ զննու վասն զննեալ եւ անարիւն պատարագին:

Սորայ եւ այլ բազումք, որք ծաղկեցան յերրոյնցոցն, զտուցէք, որ լի էք իմաստութեամբ, զի ոչ են նորս պատկեր անիծից թրգնեոյն, այլ որպէս ասացաք յառաջագոյն: Յորժամ տեսնալ զթգնի զնս խաստեղծն յշուաց, եւ զիւսջէս ի ստեղծուածն ձեռաց իւրոց, որ նախ քան զգոյնանալն չիտէր զսմնեանն, եւ վսն զի նա զանէժժան ընդ թգնեանն ընկալաւ. զսնէժժան սնիծեաց: Եւ զի առակ օրինակի կամեցաւ առնել զնս, եւ այն յողագոս չգլտ յսնելոյ պողոյն, գորոյ եւ Մարկոս յայտ առնէ մեզ սանյով հիէ՝ ոչ էր իսկ ժամանակ թգոյ

Այլ որպէս մարդասիրապէս գայր ի չարարանս վասն նորա, որ զանէժժան ընդ թգնովն ընկալաւ. նախ ի գայն ի թգնին հասանելով զանէժժան նմա բարբառեցաւ, որ ձ ոճկզի ինչ մեղացի, եւ որպէս յարութեամբ Ղազարոս սկիզբն սրբար տակելոյ գիտարչի, նայիչէս սիրելիք յսմքեցուց սնչն զթգնեոյն՝ սկիզբն սրբար պատառելոյ անիծից նախաստեղծին:

Յ Ո Ր Դ Ո Ր Ա Կ Կ Կ

Եւ արդ իմէ՝ այս այսպէս է, եկոյք այսօր եւ մեր օրոխոսացոյք ընդ պատուութիւնս ի մեղացն անիծից ի մերում:՝<sup>51</sup> նախահայն, եւ որք երկէ յուր, զի Մարիամ եւ Մարթայ ընդ յարեթիւնն Ղազարոս ուրախացան. դոք որ մեղացն արախի՝ հոգով մեռեալ էք յանկմանէ անախ, ընդ Ղազարոս փութասրբութիւն յստնել. եւ ոգտեղիւն ի մեղաց՝ ընդ Մարիամ եւ ընդ Մարթայ հոգով եւ մարմնով գոսրեասցոյք:

Ընդ<sup>52</sup> աղայն. որպէս զձիւր իմաստասիրեցէք. ի զղովի զգլքծրս քորեաց. եւ ընդ ստեղծից(ի)ս յիմար լիցոյք ի զսրժաց չարեաց<sup>53</sup>: Եւ որպէս երկէ ընդ ժողովուրդս երբայնցեոցն փառաւորելով նմա, որ սո մեզ եկն, ի բարձունս աւրին լիւն սոսքեցէք, այսօր ընդ սպառելի նորա զանէժժան հօրն մերում՝ պարեացոյք. եւ զի անիծիքն այնմ մահ աւանդեցաւ մարդկան, Դւ մահն գտնենայն ծնունդս մահս ցիւրցն յինքն ժողովելով՝ կապեաց կապանօք տնյուծանելի:

Անիծիքս այս՝ մարդոյն կնիդանութիւնս պարգեւեցաւ, եւ ամենայն ծնւնդոց նորա ազատումն ի կապանաց դժոխոցն, որոց առաջին ազատեալ Ղազարոս երեւեցաւ: Եւ վասն այսր պարտ էր ուրախանալ եւ պարել, եւ ջնբմ ապաշխարութեամբ եւ եռանդնոտ արտասօսօք առաջի մտանել ազատողին, զի հասանելով ի մեծ օրն ազատութեան՝ ի կնիւրսար արիւնն եւ ի պտտուական մարմինն արժանաւոր լիցոյք նաշակել: Չի ուրախացեալքս ընդ աւերումն դժոխոցն՝ վայելման քացեալ սրբոյնութեանն հասանիցիմք, եւ իէ՛ սք յապաղեալ իջէ՛ յապաշխարութենէ՛ ի հոգև օգոտ քոտաններդդ, զոր երկէ կատարեցաք:

Ասկայն ի վից աուրս մնացեալ՝ փոյթ յանձին կալեալ ճեպեցի զի նշմարիտ յուսովն, որ ի Տէր, որքան եւ յանցանօք լցեալ իջէ՛ կարասցէ ոպաշխարել յաւորքս յայտարիկ, եւ արժանաւորի անարատ մարմնոյ եւ պատուական այնսնն ճեռուն: Չի թէ՛ պրաւնիկն ի միում ժամու բազում ժամանակաց զանթիւ յանցանս իւր կարաց<sup>54</sup> քաւել: Եւ աւազակն յական թօթափիլ ի դատապարտութենէ խաչին. եւ խոստովանու-

<sup>50</sup> Ղազարոսն ի <sup>51</sup> սրբոց ի <sup>52</sup> Ձուցի ի <sup>53</sup> ի մերում ի <sup>54</sup> Անդ ժ <sup>55</sup> չարաց ժ <sup>56</sup> կարեաց ի

թեմամբ զորախտն ժառանգեաց, որչափ եւս առաւել մեք, ի վեց աւուրքս յայստսիկ, կուրսացուք խոտորվածութեամբ եւ ապաշխարութեամբ զյանցանս մեր քաւել: Զի հաստնկով յօրն Յարութեան Տնառն մերոյ մեծի պատերթին՝ արժանաւորութեամբ հաղորդեսցուք ի սուրբ եւ ի պատուական մարմնոյ եւ յարենէ նորա: Եւ այս ոչ կթէ պահօք եւ աղօթիք միայն վեճանացի, այլ եւ գործովք բարեաց, որորմութեամբ եւ անխտակուլութեամբ: Զի թէ զամենայն աւուրքս քառասնորդաց անտուաղ իցեմք կացեալ, եւ զպարանոցս մեր ընդ լծով ծանրագունաւ ալկեալ, սյտու միայն ոչ օգտեսցուք. զի ոչ կթէ զայնպիսի պահս խնդրեաց Աստուած. ապա՛ զոր երթ սսէ, որ ընդ շնորհօքդ ես եւ ճշմարտութեամբդ զարդարեալ, առ մարգարէն Յսայիաս, եւ նա օրինօքն եւ՝ ստուերօքն ուսուցանէ ձեզ:

Ասա, ով աստուածաբան Յսայի, զի իմացուք յաղագս ճշմարիտ պահոց: Լուր, ասէ, ոչ զայնպիսի պահս ընտրեցի, սսէ Տէր, եւ ոչ զօրն յորում կարկամեցուցանէ մարդ զանձն իւր. զի թէ կորացուցանիցես իրդ եւ զանուր զպարանոց քոյ, եւ քործ եւ մոլորի ի ներքոյ քո տարածակիցես, ոչ կոչեցիք պահս եւ ոչ օր ընդունելի: Ապա զորպիսի՞ պահս ընդունի, ասա, զի գիտացուք: Լուր, ասէ, լուծ զկնճիոն անիրաւութեամբ, քակեա զխարդախութիւն եւ զրոտութիւն վաճառաց քոց, արծակեա՞ ըզնեղեալս թողութեամբ, եւ զամենայն մտրհակս անիրաւութեանց պատառեա:

Եւ յորժամ զայդ արարից, ասէ, զի՛նչ լինիցի ինձ. լուր աղանմ, եւ զոր ի կարգին: Յայնժամ, ասէ, ծառայեսցի կանուխ լոյս քո, եւ բժշկութիւն քեզ վաղվադակ հասցէ, գնասցէ առաջի քո արդարութիւն քո: Յայնժամ կարդասցես առ Աստուած եւ լուիրցէ քեզ, եւ մինչեւ խօսեսցիս՝ ասացէ թէ, հասնալ կամ. զայստսիկ մարգարէն օրինօքն՝ ասացեալ, եւ քերանովն Աստուծոյ: Նա եւ շնորհք ճշմարտութեանս. ոչ ասաց՝ եթէ՞ եկույք արբնեալք շօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալ արքայութիւնն. վասնզի անտուաղ կեցայք եւ ծարաւեցայք եւ գետնախշտի եղէք՝: Ապա զի՛նչ, քաղցեայ ասէ՛ եւ ետուք ինձ ուտել, եւ ծարաւեցայ եւ (յ)արբուցէք զիս, մերկ էի եւ զգեցուցէք զիս, հրիանդ էի եւ տեսէք զիս, օտար էի եւ ժողովեցէք զիս:

Տես՛՞ր սիրելի, զի իբրեւ պաւ[ա]կն խաչակից ոչ եղեր, եւ այդու լուար որպէս զնա լինի: Եւ որպէս զպոռնիկն՝ բազում ինչս ի պէտս իւրոց ոչ ծախսեցեր, եւ գտեր որպէս զնա թողութիւն յանցանաց քոց: Զի սազակն, որ՞ խաչակից եղեւ նմա, լուաւ անդէ՛ն՝ զայսօր ընդ իս իցես ի զրախտին: Եւ դու յորժամ նմա կերակրակից լիցիս՝ լուիցես ի բերանոյ կոչողին ասել քեզ. Եկայք արբնեալք շօր՞ իմոյ, ժառանգեցէք ձեզ զարքայութիւնն:

Եթէ՞ պոռնիկն իւր թափեաց մեծագին ի վերայ ոտիցն Քրիստոսի, ի տունն Սիմոնի բորոտի, եւ լուաւ ի նմանէ եթէ՛ կին դու, թողեալ լիցին քեզ մեղք՞ քո, դու զաշխատեալսն հանգոյ ի տուն քո, եւ կերակրելովն լուայ գոտսն, եւ իբրեւ զպոռնիկն ընդունիցիս ի նմանէ զթողութիւն բազում մեղաց եւ անօրէնութեանց քոց:

Ասէ. ոչ ունիմ հաց, զի տաց աղքատաց, եւ ոչ տուն, զի ժողովեցից զօտարսն: Այդ զի՛նչ պարտ է ինձ առնել զի կեցից: Զայնտսիկ՝ յոր ոչ գոյ ընչից պէտս ծախելոյ. զհւանդան տես. առ բանտարգանսն մուտ, տուր նոցա թէ ծարաւեալ իցեն բաժակ մի ցուրտ ջուր, օգնեա բանիւք՞: Եւ եթէ ոչ ջուր իսկ՞ ստացեալ իցես, վասն զի յանկարողաց ես, միայն զբարսդ եւ զսիրտդ ողորմած ստացիր՞, որով թէ՛ չունիս կենակուր կամ տուն կամ զգեստ, եւ փափաքեալ ցանկաս ի կերակրել եւ ի զգեցուցանել, ի ժողովել, զայն ամենայն որպէս աւարտեալ գործք համարեսցի քեզ Աստուած: Թգնեա որպէս ասացի, բանիւ, միսիթարեա վշտակիցելով, եւ բանք քո քան գտուրս, որ ի զրկանաց, գերագոյն համարեսցի. Զի որպէս քնչկզ՛ն ի տունն, դու ցանկութեամբ

61 Զունի՛ և ի 62 արձակեալ ժ 63 Զունի՛ ասացէ թէ ... օրինօքն ի 64 Եղաք ժ  
 61 Զունի՛ խաչակից ... զպոռնիկն ժ 62 ոչ ի 63 Զունի՛ շօր ի 64 Եւ թէ ի 65 Զունի՛ մեղք ի  
 66 բանեւք ի 67 Եւ եթէ շօր ոչ գոյ իսկ ժ 68 սըտացիր ի

սրտիդ ընդ նմա տառապեցար: Եւ թէ նա կերակրեաց եւ զզեցոյց [յ]րնչիցն, զոր ունէր, դու գտանկութիւն առնելոյն առ քեզ ձգեցիր յօժարութեամբ սրտի: Եթէ մնծատունն հացիւ ըզբաղցն ելից՝ դու բնաւ սփոփեցիր:

Նայ եւ այլ դիրագոյն ճանապարհ ցուցեալ մեզ շնորհս քան զտուներն, որով մի ական թօթափել՝ զամենայն յանցանս քո, որպէս զաւազակն կարասցես ջնջել եթէ ոք զրկեսցէ զքեզ, կամ ի շար մատնեսցէ, զինչս քո յափշտակեսցէ. եթէ յամենայն սրտէ քումմէ թողով նմա բարի ըղծասցիս, եւ զքինահանութեան ոխսն ի սրտէդ (յ)արմատախիլ արասցես, իսկոյն ժամու եւ քեզ թողան<sup>69</sup> ամենայն յանցանք սխալանաց քոց: Ոյգու ոչ եթէ որպէս զաւազակն միայն ինիցիս, այլ ըստ կարի քում նմանեցիս այնմ, որ աւազակին զարքայութիւնն պարզուեաց. Ջի որ ընդ աւազակն սոսաց՝ զայսօր ընդ իս իցեսն ի զրախտին, նա սոսաց՝ Արհնեցէք զհաւածիչս ձեր, բարի արարէք ատելնաց ձերոց, եւ եղիջիք նմանողք Հօրն ձերոյ, որ յերկինսն է, զոր աւազակն ամենեւին ոչ լուաւ: Եւ վասնզի պսակ առաքինութեանս այսմ վերագոյն փայլեսցէ քան զամենայն սրբոց, սակս այսր՝ յամենայն ժամու եւ խափանեցայց յարկանելոյ զպատուիրանս զւրայ յականջս ձեր, ով աստուածսսէր լսողդ:

Արդ եթէ զայս սոսպէս արասցուք՝ թէ եւ քան զաւազակն բազմամեղ իցեմք, հասանելով<sup>70</sup> յօր մեծի զստկին՝ ի սեղանոյն Տեսոն համարձակապէս ճաշակեցուք: Իսկ եթէ ընդ իրևարս որս պահելով (յ)արմատախիլ ոչ ամնիցէք գտն ի սրտից ձերոց, եթէ այնքան առաքինութեամբ լցեալ էք, մինչ զի բանիւ ձերով մտեալս յարուցանէք, լերինս փոփոխէք, մյ՛ յանդգնիք ճաշակել ի մարմնոյ եւ յարնէ Տեսոն. ապա թէ ճաշակես՝ պարտական եղեր արեան նորա սուրբ, նա՛ թող ասէ եւ թողու քեզ:

Եւ դարձեալ եթէ ոչ թողուցուք մարդկան գյանցանս նոցա, Հայրն երկնաւոր ձեզ զձերն ոչ թողցէ: Որ եւ երթալն առաջի նորա՝ լուիցես ի նմանէ, որպէս յիմար կուսանքն լուան եթէ՝ երթ ի բաց, ոչ ճանաչեմ զքեզ՝ Քանզի եւ նորա բազմազան առաքինութեամբ զարդարեալ էին, այլ օգտեցան ոչինչ այնու՝ առանց ողորմութեան եւ սիրոյ: Այսպէս՝ եւ որ<sup>71</sup> բիրապատիկ առաքինութեամբ լցեալն է, չօգտի առանց անխսակալութեան եւ հաշտելոյ:

Վասն որոյ աղաչեմ, զի որք յանցաւորք եմք՝ փութացուք զառաքինութիւնս զայս գործել, զի մի առանց սորայ զամենայն առաքինութիւնս մեր կորուսանիցեմք: Եւ որք առաքինութեանց գործող էք՝ ջանացարուք զսա աւարտ դնել, զի որք առանց սորա վարեցեն զկեանս, յամենայն առաքինութեանց իւրեանց<sup>72</sup> զրկելով, ի հուր գեհնոյն<sup>73</sup> տանջեսցին յաւիտեան:

Արդ ի վերայ ամենայն առաքինութեանց մերոց՝ աւարտ զանոխակալութիւնն եւ զսէրն դիցուք, զի արքայութեանն երկնից հասանելոյ նորօք լիցուք արժանիք: Ենորհօք եւ մարդասիրութեամբ Տեսոն մերոյ եւ փրկչին Սիտուսի Քրիստոսի, որոյ ընդ Հօր իւրում, հանդերձ Հոգւովն Սրբով, փառք իշխանութիւն եւ պատիւ յաւիտեանս յաւիտենից<sup>74</sup> ամէն:

(Մարտ. 20)

Հրատ. Ա. Յ. ՍՐՃՈՒՆԻ

<sup>69</sup> Չուկի՝ թողուե թ <sup>70</sup> հասանելուով թ <sup>71</sup> Չուկի՝ որ ժ <sup>72</sup> իւրեաց թ <sup>73</sup> գեհնոյն թ  
74 Չուկի՝ յաւիտենից թ

ՀԻՆ ԼՈՋԵՐ

ՏԱԳ, ՍՐԲՈՑ ԳԱՌԱՍՆԵՑՆ Ի ՍԵՔՍԵՏ

Ս Տ Ի Փ Ա Ն Ո Ս

Սըրբոց զառասնիցն այսաւր սուսնեմք ըզառան,  
Տանն ճեծ գտնութեան բերկրեալ գուննեմք երգով  
Երգով ցըննութեամբ, աւրնարանեմք ըզթագաւորն փառաց,  
Փառաց զթագաւորն, շարեթաասան սըրբովքն աւրննեմք այսաւր:  
Այսաւր ճառուցան ըննայ փըրկչին ըկարեալ զըկայք նորոց,  
Նորոց գաւրութեամբ, բանին շնորհաց եղն ճաքրեալք նսգաւ:  
Նսգաւ սըրբեցան ի կիրս գանդից ի նմանութիւն սոկոյ,  
Ոսկոյ երանգովք, փայլեալք լուսով պայծառացեալք սըրբոց:  
Սըրբոց զառասնիցն, ընծայեցան անուան Ռարկրեալ էին,  
էին Յարկրեալ, սի[ր]ութիւն տանայ ըզշարչարանս քանտի:  
Քանտի կապուեաց, ասրեալ կամաւ զառասնեցան սըրբոցն,  
Սըրբոցն ի բանտին, Յիպուս յայննեալ զայնայրեալ ասեր-  
Ատեր առ նստաւ: Համբերեցէք իսպառ՝ կեցլիք առ իւ,  
Առ իւ վայելէք գանձըննելի տեղի փառաց լուսոց,  
Լուսոց երամանուն, ժուսկայէին գաւանդով զՅիպուս:  
ՋՅիպուս գաւանդալ, ընգզէմ ճեղաց շար իշխանին ճանա,  
Մանա իշխանին, քարկանարով ըզաւոր[ն]ի արկեալ ի ինն,  
Ե ինն թոյն ժրեալ աւր ճուլէին մարմինք սըրբոց պարեալ:  
Սըրբոց զառասնիցն, ասրեամբ ներկեալ յերանգ գաւնայ վարդից,  
Վարդից կարմրութիւն, տանայ նսգան արեամբ ներկեալ սըրբոցն:  
Սըրբոցն այն արեամբ, կապուեալեալ ճովուն փոխեալ յարին,  
Յարին կարմրացեալ, ժուսկայէին սուրբքն այն ի ճէլ լընին:  
Լընին գարնութեանն, աչ ժուսկայեալք մինն ի զընգից սըրբոց,  
Սըրբոցն այն ճեղնեալ, ի թագանին փութաւր առ ժուս ճեղացն:  
Մեղացն ըմբռնեալ, պակասելով ի շորից սուսնեցն,  
Տասանց գայն շորից, թագնապանին լընեալ ըզԹիւ սըրբոցն:  
Սըրբոցն այն բերկրեալ, ի յունելուան իսրիւրբեցեան լըրման,  
Լըրման արեակաւք, աւրնարանն զովն զՅիպուս Քրիստոսոյ  
Քրիստոսոյ թագաւորն, սուսնեմք յայննեալ պըսպա անտապ սըրբոցն,  
Սըրբոցն այն զընգի, լոյս ճեծ տեսեալ պըսպա ի ինն ներկնից:  
Յերկնից ճաղելով արե արեմաւ լուսոյն:  
Լուսոյն ճաւայժամբ լուսնեալ ըզգալ ասրինն,  
Սասինն այն լուսնեալ, ներկնից ի ինն սերովքէից արքայն:  
Արքայն պետութեանց, յայննէր փառաւք այսաւր գառաւք սըրբոցն,  
Սըրբոցն այն երաշխք ժուսկայեալով ի լայտից զարկուանայ:  
Ջարկուանա լայտաթից, տանայ սըրբոց տանգելով զիգիսն,  
Ջիգիսն արեակեալ, ի ներկնային լուսոյ ճղեալ իսրանս:  
Փառաց թագաւոր, ճեղ վայելէ փոռք Ե պատիւ ընդ Հարի:

Ձեռ. Ա. Գ. Բիւ 2015 Լրատ. ՄՈՎԱՅԱՆ





չլուխ գինուամ՝ իջաւ շուկայ: Նոյն առաւ, շուկայէն անցնող կարգ ժը քրիտաոնեաներ զանազոճուակցան, վիրաւորակեցան և սմախք ալ խոշտանգութեամբ օպանելու հցան: Նոյն օրը, ժամը 10էն սկսեալ, Խզմիրի այլևայլ կողմերէն Քէճալական յառաջագնաց շնորհամերու ներս խուճելը աւելի խրախուսեց Քուրք խուճանը, որ Քրքական գրօշնիրով սկսաւ պաշտօնի Քաղաքին մէջ: Պոլլվարին վրայ Լուաքուած Քուրք խուճանը սկսաւ հայոց Քաղին աշղուժեամբ հրացան արձակել: Եւս հրացանակաւ Քիւրք, որ քառօրէ ժամ աւեց, պատճառ եղաւ որ Հայոց Քաղի մերթադնայք Ս. Սահակոսն եկեղեցին ապաստանին:

Քննարկան բանակին Թզիր մուտր. — Աքիթնի ճակատը խորտակուելէն 12 օր վերջ, Քէճալական բանակը որդարէն և շատ գերութեամբ հասաւ Խզմիրի գրան առջև. և Սեպտ. 9, Շարք ստաւ, կոտորեց իր յաղթական ճուաղը և օղջանուակցա Քարափի վրայ խոճուած քրիտաոնեաներու ծափերով և ճգնանցի ծաւերուն սուլումներով: Երկու ժամէն աւելի աւեց ճուաղը սուտերմերի ճիւղօր զինուորներուն, որոնք շրջապատած յայն գերի զինուորներ և օպաներ, կը յառաջանային արքայ Քարափի երկայնքին, Փոսրայէն գէպի գորտնայ: Առաջնորդարանը անձեղծօրէն Քննարկան գրօշնիր պարկեց, ի նշան Օսմանեան արտաքուտութեան հաստատուած ըլլալուն, և գաղթեցուց անցադրասան և առաջնորդարանի այլ գործառնութիւնները: Հայոց Քաղի անցուղարձը գաղթած էր: Քուրք խուճաւուճ արքայը, կազմեալ 5-6 կազմից թաղմաթիւ խմբակներէ, զինուած պատերազմական զէնքերով, կը շրջէր փողոցները: Մերթադնայք արտաքուտութիւնը առկայէր քաղուած էին և շատեր եկեղեցին ապաստանած: Քաղին զանազան կողմերէն ստէպ ստէպ ճրացանձագութեան օւճգնակի ճայններ և կանանց աւ ժանուկներու ճիչեր և աղաղակներ կը լսուէին: Խուճանը բռնութեամբ առկայ կը ճանէր, անցիկներ կը խոշտանգէր և կողապակէ ետք կը օպանէր: Հայոց Քաղին թշուր անկիւնները կեղծեան գրաւուեցան Կախ

կին փոխաներով և Քէճալական զինուորներով, որոնք փողոցէն անցնող Քաղեցիներու կրք պատասխարար կոնդիպէին, ազգութիւնը ստուգելէ ետք, քրիտաոնեաները կողապակէ վերջ առնելի շարժարանքներով կը մեղացնէին: Այդ Շարք գիչեր ընդհանրապէս քաղաքին ծայրերը գանձուող յայն Քաղերը (Ափանտ-ճաւալաւ, Այստ վաւթաւ, Այստ Գոստանդինաւ, Այս Նիքալայա), իսկ ճանտարապէս կոչ Քաղերը (Հայոց, Գարաթաղ, Գորտէլիօ) նշառիկ գարձած Քրքական վայրագութեանց և այս Քաղերուն մէջ սկսաւ շարքը Քէճալական անշուր և անմարդնթիաց խրճիւղութեանց: Տուններ կը Քաղանուէին և գաղթէրը Քուրք առկայ կը տարուէին: Քուրք գիչեր և աղաք Քաղանը կը կրէին, իսկ խուճանագարները գրաղած էին կոչեր փնտառելով և զանազան աղաք առկայ և կամ առկայէն կեղծեցնելով: Կողմանակցա գործով: Վերայիշեալ Քաղերու մէջ թնակող գիչեր և օրթորդներ կ'առնուակցուէին և աղաքիայ կ'ըլլային Քուրք խուճանին և զինուորներու վայրագ վերաքրճուակցի: Մայիսի 10, Կիրակի. — Կէսօրէ ետք մեծ Քաղով գտաւ Քաղանցան շարքը, Քաղանը և առնուակցութեանը: Ժամը 3ին հրկէ ծաղեցաւ կոչեցին է՛ն ծայրը և Կանկեցիին է՛ն մօտ հողը ստղի մը: Հըրէլ խուճաթ, որուն կ'ընդհարուային Անգլիայի սուլակներ, եկաւ և մարտից կըրգեկը անմիջապէս: Կիրակի գիչեր, մինչև աստա շարունակուեցան խողճութիւններն աւ վայրագութիւնները մինչև 11 Սեպտեմբեր: Երկուշաբթի օր: Հայերու կառկարայինները որ ցերեկով սալներու մէջ գրուած կը պարուէին: Երկուշաբթի գիչեր, առաքուեան զէճ ժամը 3ին, կրկին կըրգեկ ծաղեցաւ պոլլի օրուան առնէն: Հըրէլ խուճաթ այս անգամ ալ կասաւ և մարտից կրակը: Սեպտեմբեր 12, Երեքշաբթի, կոչոց Քաղի թշուր առկայերը Քաղանուած և գոտարհուած էին. այդ առկայերէն մեծ մասին իրաքսանշիւրքին մէջ 1-4 սպաննուածներ կային: Այս գրճաթաններու կարգին, Գաղաքական փաղովի նոյնիկին Առնակապա և մեծ օրէնակցեալ, իրաւարան, ազգային և Քուրք շրքը շանակներու մէջ մեծապէս յարգուած

պատկառելի անձնաւորութիւն մը՝ Պր. Նազարէթ Ներսիսեանը, իր կոնց և զաւկին հետ, խուճուճ խաւժումին զո՛ր կ'ըլլար։ Գարաթաղի և Գորտէլիոյի, ինչպէս նաև կէօղձիճիճի հայ առևներուն նոյն բոխար կը վիճակուէր։ Եռևկայի կողպուտը նոյն թափով յառաջ կը տարուէր։ Թայմը նախ սկսած էր հայ վաճառատուներէն, որոնց մէջ էին 100,000—250,000 Անգլիական Ոսկիի արժէքով Մալի Փաթուրա պարունակող Պազըճեանն, Սևրի-ասպեանն, Իփիլճեանն, Աղլուսերանն, Նիքոթեանն, Գոճամանեանն, Թօփալեանն և այլ վաճառատուներ, և հետքեմէ ծաւալած յոյն վաճառատուներուն վրայ նա, ուր ևս պակաս չէին հսկայ գրամաղուխներ։ Եռևկայի ապրանքները ևս օր ջերեկով կառքերու մէջ դրուած՝ տարուեցան թուրքերու թաղը։ Սեպտ. 12, Երևալարթի, հայերու և յոյներու վերաբերակ գրեթէ ամբողջ շուկայի մէծ ապրտիխ խանութները դատարկուեցան։

Կ. Ասեփանցո Մոյր Եպիսկոպոս. — Իգճիթի հայոց Ս. Ստեփանոս Տաճարը, իր հսկայ և հայկապ կառուցուած քովը, իր միակաւր Բ՛սնէրովը, իր գեղակերտ գմբէթովը, հարտարապետական ցուխ-գործոց մըն է։ Ոչ միայն Քնիզաքի ըստը շէնքերուն մէջ, այլև Փոքր Ասիոյ բոլոր քաղաքներու շէնքերուն մէջ առաջին տեղը կը գրուէր։ Տաճարին շուրջ գտնուող ընդարձակ պարտէզը շրջապատուած էր եկեղեցապատուան շէնքերով և ամբարշտ պատերով։ Փողոցի գուներն էին Երկաթիտի և ամբուկու ու ամբափակ։ Տաճարին մէջ հասալուած էին տարիէ մը ի վեր իզմիթ գտնուող կիրիկեցիներ, Քէմալի բունակին առջևէն փախչող զաւառաօթներ և հայոց թողի խժգժութիւններու հետանքով իրենց տունները լքող հայեր և յոյներ, որով բոլոր ապաստանակալներու թիւը կը հասնէր 8-9,000-ի։ Տաճարը Քէմալական բանակին մտած ժամէն սկսեալ ենթարկուեցաւ թուրքերու յարձակութիւն։ Յարձակումները ստացան հետզհետէ լուրջ և պաշտօնակալ հանգամանք։ Սեպտ. 10, կիրակի լուսնուլուն, զինուորներ և խաճակապարներ արդէն լուրջ միջոցներով տաճարին շրջապատին

և դանդերուն վրայ յարձակելու պատրաստուեցան։ Ետքով զիներուն ժամը 10-ի յարձակումը անյաջող հետևանք ունենալուն, նոյն գիշեր 5-6 տարբեր տեղերէ յարձակելուն հակառակ՝ չկրցան որևէ տեղէ մուտք գործել։ Կիրակի երեկոյան հետզհետէ աւելի սաստկութեամբ կրկնուեցան յարձակումները, բուռն հրացանաձգութեամբ և պոնովաներով։ Տիրոջ սարսափին ազդեցութեան տակ, ներսի ժողովուրդը սկսաւ լայնուտաւ ազդակել սրտակեղծ վայնասունով մը և զարնել տաճարին զանգաղը ընդհատ ընդհատ, կիրակի ցերեկ, ապաստանուլներուն մէջ գտնուող զանանաներ և կարգ մը երիտասարդներ ժողով կը գումարեն և կ'որոշեն Անգլիէն և Ֆրանսերէն լեզուներով նամակներ յղել Ամերիկեան և Յրանսական հիւղատեսներուն։ Այդ նամակներով, յանուն 8-9,000 ժողովուրդին, կը խնդրուի իրենց միջամտութիւնը՝ բանալու եկեղեցին և անվտանգութեան հանդու ապաստանակները։ Տիկին Նազելի ձիվէլէկեան և Օր. Եմարտիկ սիրայօժար կը ստանձնեն նամակները տանելու գործը և հիւանդապահուիթ տարազ նագալ, կիլիկե եկեղեցիէն և նամակները կը յանձնեն հիւղատեսներուն, ինչպէս ասին բերանացի ևս հայցելով անոնց դժբախտութիւնը։ Դժբախտարար գործնական հետևանք մը չի բերուիլ այս դիմումին։ Սեպտ. 11, Երկուշաբթի առտու, Առաջնորդարանի պատուհանէն տեսուած է որ իբր թէ 400 զինուորներ՝ բունակած Եանին Խանի մէջ, կը պատրաստուէին քանդիլ գործիքներով յարձակիլ եկեղեցիին վրայ։ Կարգ մը խոհմ և լրջմտիտ երիտասարդներ թուրքերուն ցատումը մեղմացնող խօսքեր ուղղեցին Առաջնորդարանի պատուհանէն և սակայն թուրքեր չեղան կատարութեամբ սպասարկեցին կ'ընէին՝ և ուժգին յարձակման մը կը պատրաստուէին։ Բարեբախտութիւն եղաւ որ անկէ կ'անցնէր ինքնաշարժ կառք մը, որուն մէջ Գր գտնուէր Տօն Սքալիարինին։ Այս Քաթիլարի բանահանական դասէն Սախաթ եկեղեցական մըն էր, որ շարունակ կը շրջէր հայոց թողին մէջ և շատ մը աղէտեալ բնտանիքներ հետը առած՝ Առաջնորդարանէն

եղած խնդրանքներուն վրայ, Տօն Սքալիտրինի կեցնել կու տայ ինքնաշարժը և կը լսէ խնդրարկունքը պատուանէն, որոնք կը բացատրեն եկեղեցւոյ մէջ զբանջւող խեղճ ժողովուրդին սարսփեր, և յանուն քրիստոնէութեան և ժողովուրդի թեան կը խնդրեն միջամտութիւնը յիշեալ եկեղեցականին՝ անվնաս դուրս հանելու և ապահով վայր մը փոխադրելու համար ապաստանելիները, որոնց մէջ կոյտին 2,000 ի չափ մանուկներ: Ազնուասիրտ կղերականը խօսք կու տայ անմիջապէս երթալ հրամանատարին և անոր միջոցով հայցելով կարգադրութիւն մը ընել: Եւ յն օրը երկոյնեան ժամը 5ին, հազիւ կը վերադառնայ Տօն Սքալիտրինի և կ'աւետէ թէ հրամանատարը ընդունած էր հղած առաջարկը և անմիջապէս հրամայած էր յայտնաբերելու զադրեցնել և թէ յաջորդ օր խառն մասնախումբ մը պիտի գոյ, եկեղեցիին մէջ գտնուողները անվնաս դուրս հանելու համար: Այդ գիշեր որեւէ յարձակում չէ հղած եկեղեցիին վրայ, և ապաստանելիները, որոնք օրերով տնքուն էին մնացած, կրցան խողով գիշեր մը անցնել: Սեպտ. 12ին, Երեքշաբթի առաւ ժամը 9ին, եկեղեցի հասաւ ապաստան խառն մասնախումբը և ներս ընդունուեցաւ Առաջնորդարանի գունէն: Մասնախումբը կը բաղկանար երկու Լատին կղերականներէ, երկու Իտալացի նաւագններէ և մէկ թուրք ապայէ: Ապաստանելիները հետեւեալ խնդրանքները կը ներկայացնեն մասնախումբին.

(Միայնապա լազորգի)

- 1) Այր և կին խառն դուրս գալ եկեղեցիէն:
  - 2) Զէնքերը եկեղեցիին մէջ թողուլ:
  - 3) Ինքնապաշտպանութիւնը յանցանք չնկատել ևն.:
- Այս պայման-խընդրանքները ընդունելի նկատուելով, ապաստանելիները դուրս ելան և Տօն Սքալիտրինիի հսկողութեամբ օտար թաղեր և եկեղեցիներ փոխադրուեցան: Հակառակ այս ազնիւ կղերականին խընդրանքներուն, եկեղեցիէն դուրս հանուող մէջն հայ կողմուկուեցաւ դուրսը խոնրուած զինուորներէն: Ետեքը ձեռքերով և բռնութեամբ նուաղեցան և Լատին կղերին ու Իտալական նաւագններուն աչքին առջև ճամբու ընթացքին սպանութիւններ և խզմուքներ արեւին: Երեկոյնան ժամը 6ին, եկեղեցին արդէն իսկ դատարկուած էր: Թուրքեր արեւացած էին այդ հոյակապ առճարին: Հսն կր մնային միայն բոլոր գուռաի եկեղեցիներու և տաճարին սակեղէն և արծաթեղէն անօթները, և մարդարտեայ ազամանդակու զգեստներն ու զարդերը: Ս. Ստեփանոսի Տաճարը իր հարուստ և ճոխ անօթներով և զարդերով ուլ համբաւաւոր էր:
- Համակ զուտ ոսկեմսյլ սփիռներն ու բորովտները, ինչպէս և զոյգ խաչերը, համակ արծաթեայ խոշոր աշտանակներն ու ջաները, ոսկեթել շուրջաւորներն ու մետաքսեայ դորգերը բոլոր երկելի այցելուներու հիացումը շարժած էին: Ահա այսպիսի փոռուեղ և հարուստ տաճար մը ոճրագործներու պիղծ ձեռքը կ'անցնէր:

ՂԵՒՈՆԻ ԵՊՍ. ԴՈՒՐԵԱՆ

# ՆՈՐԻՑ ԵՎԵՂԵՅԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՅԵՐԻ ՇՈՒՋ

Այժմ դառնանք մեր ներթիխ և տեսնենք, որ Թաղէոս օտաքեալի վկայաբանութիւնը արդեօք Թարգմանութիւն է և թէ արդեօք այն յերևութեւ է ասորաւէրների կողմից, իրենց ազդեցութիւնը յունաստեղների համեմատ աւելի օւժեղացնելու նպատակով: Նախ օ՛վ է գրել Թաղէոս օտաքեալի և Սանդուխտ կոյսի նահատակութեան պատմութիւնը կամ վարքը: ՎՊրքի վերջում հանդիպում ենք հետեւեալ ծանօթութեանը՝ «ԵՍ Սամուէլ եպիսկոպոս անարժան ծառայ Քրիստոսի, Թարգմանեցի զվկայութիւն ասորբ աստեղելոյն Թաղէոսի և զարոյ կուօրն Սանդըրտոս, և ետու ամենայն Հայաստան աշխարհի»<sup>51</sup>: Այս վկայութեան համաձայն, Թաղէոսի և Սանդուխտ կոյսի մասին եղած այս աշխատութիւնը Թարգմանութիւն է, և այդ քարգմանել բառը պատճառ է դարձել, որ հրատարակիչը սորոնի Սամուէլ շարգմանչին» ու զայ այն եզրակացութեան, որ վերոյիշեալ Սամուէլ եպիսկոպոսը կարող էր այն Ասորի Շմուէլ եպիսկոպոսը լինել, որը Սահակ Պարթե Լայրապետի կենդանութեան օրոք, պարսիկների ու մի խումբ պարսկասէր հայ նախարարների օգնութեամբ, նստեց հայոց կաթողիկոսական աթոռին:

Նախ պէտք է ասել, որ Շմուէլը չէր կարող նման աշխատութիւն Թարգմանիչ, որովհետև այս գրութեան բովանդակութեանը ծանօթանալիս տեսնում ենք, որ այն վերստի էր ի հակակշիռ Շմուէլի և նրա Ասորի յաջորդների՝ Հայաստանում ծառայած գործունէութեան: Ինչպէս նշել ենք, ասորիները պարսիկների հովանաւորութեամբ այն ժամանակ ձգտում էին Հայ Եկեղեցին իրենց ենթարկելու Դրան հակառակ, Սահակ կաթողիկոսի և Մեսրոպ Մաշտոցի գլխաւորութեամբ ստեղծուել էր

գործիչների մի խումբ, որն ամէն կերպ աշխատում էր ասորիների այդ ձգտումները խափանելու: Այդ ձգտումներին հակադրուելու ու Հայ Եկեղեցու օտաքեալականութիւնն ու ինքնուրոյնութիւնը հաստատող հայկական այս աւանդութիւնը գրի է առնւում Սամուէլ եպիսկոպոսի կողմից<sup>52</sup>, որը անշուշտ Մաշտոցի աշակերտներից կամ գործակիցներից մէկը եղած պէտք է լինի:

Յամենայն դէպս, երբ մօտիկից ջըննում ենք այս վկայաբանութիւնը, տեսնում ենք, որ այստեղ Թարգմանութեան հետքեր չկան. այն չունի ասորական վարքերի համար բնորոշ գծերը և իր կառուցումը օ՛վ ու քերականական պատկերներով հարազատ է Ե. դարի հայ գրականութեանը: Այնպէս որ գրւածքի վերջում հանդիպող քարգմանեցի բառը, որ ասորիէն է, բացի մեզ համար սովորական իմաստից, նշանակում է նաև աւանդել, մեկնել, ճառել, պատմել ևն.<sup>53</sup>: Այս դէպքում քարգմանելը, ինչպէս համոզուած ենք, օգտագործուած է «աւանդել» կամ «պատմել» իմաստով: Ուրեմն Սամուէլ եպիսկոպոսը ոչ թէ այս երկի Թարգմանիչն է, այլ հեղինակը: Այն էլ այն հեղինակներից մէկը, որը պատկանում էր հակաասորական խմբավարութեան: Մեր երկրում, ասորիների ազդեցութեան հակառակ յիշատակւում է միայն յունաստեղներից մի խմբակցութիւն, բայց մեր կարծիքով նման բաժանումը

<sup>51</sup> Ե. դարի առաջին կէսից մեզ յայտնի են երկու Սամուէլներ. մէկը Մեսրոպ Մաշտոցի վրաստանում ծառայած գործունէութեան ժամանակ վրաստանի արքունի տան եպիսկոպոսն էր, միւրը՝ Սամուէլ քահանան, որը սահայն եպիսկոպոսական ասորիան չունէր:

<sup>52</sup> Սր բառի մասին տես նաև Ե. Պիլագան, Մովսէս Խորենացու Պատմութեան մի կարևոր հատուածի Թարգմանութեան մասին, «Գատմասքանասիրական հանդէս», Թիւ. 2, 1968, էջ 268:

<sup>53</sup> Սփեքք, Ը, էջ 58:

ճիշդ չի արտայայտում իրականութիւնը: Հակասասրկան խմբակցութիւնը ևս պէտք է երկուսի բաժանել: Ժէկ թէ ժի աննշան մասը եթէ բառիս բուն իմաստով ճշմարտեմքերէն խմբին էր պատկանում, և իսկապէս մտածում էր Բիւզանդական Եկեղեցու հետ միանալով ընդդէմանալ ասորական ազգակցութեան, ապա այդ թէ ի հիմնական մասը Բիւզանդական Եկեղեցու հետ գործակցելով, այսինքն Հայ Եկեղեցու ինքնուրոյնութիւնը պահպանելու նպատակով, սեղում էր նրա հետ համագործակցել: Սահակ Պարթևը, Մեսրոպ Մաշտոցը, Փաւստոս Բիւզանդը, Մովսէս Խորենացին և այս դէպքում նաև Ստովնէլ կայսրկապոսը այդ թէ ի ներկայացուցիչներն են: Վկայարանութեան մէջ Թաղէոս առաքեալը ոչ թէ Եդեսիայի կամ ասորիների առաքեալն է, այլ (այդ քաղաքը նա ի միջի ալոց է մտել իր ճանապարհին), Հայ Եկեղեցու հիմնադիրն է: Այս ձևով վկայարանութեան մէջ շեշտուած է այն իրողութիւնը, որ Հայ Եկեղեցին ոչ միայն մայր Եկեղեցի է, այլ նաև առաջնական, ուստի ասորիների և կամ ասորասէրների փորձերը Հայ Եկեղեցու ծագումը կապել իրենց հետ, անիմաստ էր դառնում: Այնպէս որ նման սկզբունքով գոյութիւն ունեցող պատմութիւնը կամ աւանդութիւնը, ինչպէս Հայր կոզեանն էր կարծում, չէր կարող ասորիների կամ ասորասէրների կողմից յերիւրուած լինել, այլ, այն բուն հայկական աւանդութիւն է և այդ աւանդութիւնն էլ հաստատում են մեր վաղաքային շրջանի պատմիչներից Փաւստոս Բիւզանդը և Մովսէս Խորենացին: Միթէ այսքանը բաւական չէ՞ Հայր կոզեանին և նրա նման մտածողների համար: Իսկ եթէ այդքանը բաւական չէ, ապա մենք ունենք նաև ասորական ազբիւրների վկայութիւնը, որը ցոյց է տալիս, որ հայկական աւանդութիւնը իրենց հետ յայտնի է եղել և իրենք էլ իմացել են, որ Թաղէոս առաքեալը Եդեսիայում քարոզելուց յետոյ գնացել է Հայաստան և այնտեղ էլ նահատակուել է: Այդ հարցի վրայ աւելի մանրամասն կանգ առնելուց առաջ ուղղում ենք խօսել նաև այն մասին թէ ինչ՞ով Ազգայնագետ

ըստի պատմութեան մէջ վկայութիւն չկայ Թաղէոս առաքեալի Հայաստանում քարոզելու վերաբերելու իսկապէս էլ մասնագէտների համար զարմանալի էր թուացել այն հանգամանքը, որ հայ ժողովրդի քրիստոնէութիւն ընդունելու, այսինքն դարձի պատմութիւնը շարագող Ազգայնագետի գրքում ոչ մի ակնարկ անազամ չկայ Ազգա կամ Թաղէոս առաքեալի Հայաստանում քարոզելու, այնտեղ գործելու ու նահատակուելու մասին: Պատմաբաններից ոմանք նման լուսութիւնը վերագրել են այն իրողութեանը, որ իբր թէ այդ ձևով չի սկզբնել նահատակել Գրիգոր Լուսաւորչի հեղինակութիւնը: Ուրիշները ենթադրել են, որ Ազգայնագետի պատմութեան հիմքում ընկած է Գրիգոր Լուսաւորչի վարքը, ուստի նման մի երկուս կարիքը չի զգացուել Թաղէոս առաքեալի մասին խօսելու կամ գրիչու: Նման ենթադրութիւններ մեր կարծիքով անհիմն են և իրականութեան չեն համապատասխանում, որովհետև Գրիգոր Լուսաւորչին որպէս Թաղէոս առաքեալի գործի շարունակողի ներկայացնելը ոչ թէ նսեմացում կը լինէր, այլ մեծարում, մանաւանդ, որ Թաղէոս առաքեալը ըստ այդ աւանդութեան Հայաստան էր եկել Գրիգորի խոստումի համաձայն: Գրիգոր Լուսաւորչին Թաղէոս առաքեալի հետ միասին այդ նպատակի իրագործման հետ կապելը, Հայ Եկեղեցու հեղինակութեան բարձրացման ու Առաքելական Աթոռ լինելու փոստը հաստատող լուսաւորչի միջոցը կարող էր հանդիսանալ: Բայց այդ ինչպէ՞ս է, որ Ազգայնագետի պատմութիւնը Հայոցի մէջ նման վկայութիւն կամ հատուած չկայ:

Վերջերս յայտնաբերուած Ազգայնագետի ասորերէն մի հին թարգմանութիւնը<sup>60</sup>, որը ունի Թաղէոս առաքեալի Հայաստան գալու պատմութիւնը, մեզ հնարաւորութիւն է տալիս պարզելու, որ եղել է նաև նոյն այդ աշխատութեան մի

<sup>60</sup> Մենք այդ մասին մանրամասն գրել ենք: տես Վաստիկան ազբիւրների Հայ Եկեղեցու մասին, ԵՊՀ միասնական, Թիւ. է. Ժ. ԺԲ, 1978, էջ 173:

այլ խմբագրութիւնը Ե. զարբի երկրորդ կէսից, շատ հաւանաբար 485 թ. յետոյ, երբ մարզպանական Հայաստանում հայկական քաղաքական կիսանկախ վիճակ էր ստեղծուել և Սասանեաններն էլ առաջին անգամ լինելով պաշտօնապէս ճանաչել էին Հայոց Եկեղեցին և թոյլատրել նրա ինքնուրոյն գործունէութիւնը: Այդ ժամանակ, ինչպէս յետոյ մինք կը տեսնենք մեր այս ստուգամատրութեան էջերում, Հայ Եկեղեցին արեւելքում այնքան ուժեղացել էր, որ միւս արեւելեան Եկեղեցիները՝ Նեստորականը, Ասորական միաբնակ Եկեղեցին, Հայ Եկեղեցուց օգնութիւն էին խնդրում և հովանաւորուելու պահանջն էին զգում: Մեր աշխատութեան մէջ ցոյց ենք տուել, որ մեզ հասած Ագաթանգեղոսի հայերէն օրինակը խմբագրուել է մինչ 451 թ., այսինքն մինչ Քաղկեդոնի ժողովը, երբ նման հարցեր չէին արծարծուում և կամ եթէ նոյնիսկ արծարծուած էին, ապա Հայ Եկեղեցին այնքան մեծ խնդիրների՝ Նեստորականութեան առաջացրած վտանգը և միւս կողմից հայութեան ու Հայ Եկեղեցու գոյութեանը սպառնացող քաղաքական ծանր վիճակը ստիպում էին լեզու գտնել իրականացրիների հետ, և առնուազն յարտերուծութիւնները նրանց հետ բարելուելու համար լռել և այնպիսի հարցեր առաջ չէին քաշում որ այդ կապերը սրացնէր: Ագաթանգեղոսի պատմութիւնը առաջին անգամ այդ ժամանակ է խմբագրուել: Իսկ երկրորդ անգամ, որի ասորերէն նամակում ընտրել, ինչպէս ասացինք, նոր է յայտնաբերուել, Ե. զարբի վերջերէն, երբ արդէն Հայ Եկեղեցին իր առաջնահանութիւնը հաստատող փաստերի կարիքն էր զգում իր ինքնուրոյնութիւնը պաշտպանելու համար, Նախ ծանօթանանք նորոյայտ Ագաթանգեղոսի ասորերէն նամակում այդ ընտրիւն: Վեւ զարմալ հայերի կաթողիկոս Սուրբ Գրիգորի պատմութիւնը, որը քարոզից Հայաստանում և ետ զարձրից գեներթի (siada — շիազա) մտրուութիւնից ու կուսքերի (ptakra — պտակրա) պաշտամունքից զէպի խաչի նշմարիտ իմացութեան ու խաչի պաշտամունքին:

(1) Վերջապահում կար մի թագաւոր, որը Սանատրուկ էր կոչուում, Եգեօսիայի Արքար թագաւորի քրոջ աղան, նրա, որը Գրիգորոսին նամակ էր գրել: Նրա կապակցութեամբ ասում են, որ Գուրթ թագաւորի ու մարգարէի ցեղից էր: (2) Հայաստանի թագաւոր այս Սանատրուկի օրոք, Լիբնի, թագէտս անուանուածը, այսինքն Աղղան, եկաւ (Հայաստան), նա նրանց քարոզից հաւատի խօսքը, և Սանատրուկը՝ Արքարի քրոջ աղան, նրան ընդունեց: (3) Երբ Հայոց իշխանները իմացան այդ, հաւաքուեցին գնացին նրա մօտ և ասացին. «Ի՞նչ իրաւունք չունիս քս հայրերի աստուածներին լքելու»: Եւ նա կատարեց նրանց կամքը և վերադարձաւ իր նախկին մտրութեան: (4) Ինչ վերաբերում է Աղղային, նրան բարձրացրին մի ըլրի վրայ և այնանդ էլ նրանց կողմից նահատակուեց և թաղուեց հաւատացեալ մարդկանց կողմից: Երկար ժամանակից յետոյ մահացաւ Սանատրուկը: Նրանից յետոյ թագաւորեց Արտախշէշը (Արտաշէսը), և նա էլ մահացաւ»<sup>61</sup>:

Թագէտս առաջնալի Հայաստանում քարոզելու ու նահատակուելու պատմութեան առկայութիւնը այստեղ վկայում է այն ժամին, որ ասորերէնի այս համառօտ թարգմանութեան համար սկզբնաղբիւր հանդիսացած հայկական վաղ ըջրանի խմբագրութեան մէջ, որը զգալիորոպ մեզ չի հասել, եղել է այս աւանդութիւնը, և ուրախալի է, որ այսօր ասորերէնի այս թարգմանութեան շնորհիւ նահատար է այն վերականգնել:

(Շար.՝ 4)

ՀԱՅԳ ՄԵԼԻՔՆԵԱՆ



<sup>61</sup> M. Van Esbroek, Le résumé Syriac de l'Agathange, Bruxelles, 1977, «Analecta Bollandiana», t. 9, fasc. 3-4, p. 293-294: «Sic in hoc et այս հարցի վերաբերեալ մանրամասնութիւնները, «էջմարտին», 1978, թիւ Ժ-ԺԲ, էջ 173:

### **ՅԻՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ**

#### **“ՀԱՍԿ” ԱՄՍԱԳԻՐ**

«Մինն» արտագին ուրախութեամբ է որ կ'ողջունէ հրատարակումը Անթիլիասի կիլիկեան Հայրապետանոցի «Հասկ» ամսաթերթին, որ իր առաջին թիւին մէջ իսկ կը յայտնէ արդէն թէ ինչ գեղեցիկ ապագայի է ուղղուած:

Չունինք տարակոյտ թէ «Հասկ» շուտով պիտի առաքանայ, և կրօնաթերթի վիճակին վերածուելով որոյ կայէ, լիւնելու համար կիլիկիայ և ընդհանուր հայաստան համար հագեւորուէն և կրթական ու մասնաբարկան տեսակէտով շատ աւելի օգտակար պարբերաթերթ մը:

#### **ՈՍԿԱՆ ՊԷՅ ՄԱՐՏԻԿԵԱՆԻ ՊԱՏԱՍԻԱՆԸ**

Ասկէց առաջ Ս. Պատրիարք Հայրը (Տ. Թորգոմ Արքեպ. Գուշակեան), Պատ. Տնօրէն Ժողովոյ համամասնութեամբ, հրուէր ուղղած էր վսեմ. Ոսկան Պէյ Մարտիկեանի՝ այցելել Ս. Երուսաղէմ, և Ս. Աթոռոյս ելիմատական կացութեան մասին քննարկան ուսումնասիրութեան մը կատարելով տեղեկագիր մը կազմել, որպէսզի ըստ այնմ տնօրինուէր պարտուպատշաճը:

Հաճութեամբ կը հաղորդենք թէ Ոսկան Պէյ, որուն այս մասին ձեռնհասութեանը անվիճելի է, ընդունած է այս հրուէրը, և դէպի գարուն պիտի ժամանէ Բաղաքս, ձեռնարկելու համար իր ստանձնած պարտականութեան:

(«Մինն», 1982, Զ. Յարի, Մարտ, Թիւ 8, էջ 95):

#### **ՉԷԹԻՆԵԱՆ ԿՏԱԿ**

Փետր. 6ի Շարաթ օրը, Յուլիանի մէջ մեռաւ նոյն քաղաքի մերազգիներէն Պր. Օննիկ Չէթինեան, և յաջորդ օրը թաղումը գատարուելով, մարմինը ամփոփուեցաւ տեղւոյն ազգային գերեզմանատան մէջ: Յուղարկուողութեան համար յատկապէս Յուլիանի իջան, Գերշ. Տ. Մկրտիչ

Սրբազան Աղաւնունի, որ դամբանականով պատուեց հանգուցեալին յիշատակը, և Միտրոնութեան անդամներէն Տ. Տ. Համազասպ, Մուշեղ, Ներսէս, Տիրան, Գարեգին և Սիոն վարդապետներ: Հանգուցեալը քեռորդին էր ծանօթ մտաւորական և բանասէր Ֆրէտէրիք Մուրատի Մեռաւ 61 տարեկան, ամուրի: Իր կենդանութեանը Ս. Աթոռոյս կտակած ըլլալով իր հնչուն հարստութեանը, 3700 Սթէրլին, որոշուած է Ս. Գաղաքիս վանքապատկան մէկ գեղեցիկ վրայ իր յիշատակին կառուցանել հաստատութիւն կառուած մը: Սրբ. Պատրիարքը ցատկեցական այցելութեան առաւ հանգուցեալին միակ ազգական Պր. Յ. Մուրատի, օրհնեց Չէթինեանի յիշատակը, և նոյն ատեն իր և Միտրոնուցի թեան ջերմ շնորհակալիքը յայտնեց Պր. Մուրատի, կտակին գործադրութեան առթիւ իր ցոյց տուած ազնուասիրտ բարեկամութեան համար:

(«Մինն», 1982, Զ. Յարի, Ապրիլ, Թիւ 4, էջ 126):

#### **ՄԱՀ ՊՐ. ՖՐԷՏԷՐԻՔ ՍՈՒՐԱՏԻ**

Ապրիլ 20էն 21 լուսցող Հինգշաբթիի կէս գիշերին, Ս. Գաղաքիս Գերմանական հիւանդանոցին մէջ, իր մահկանացուն կնքեց հանրածանօթ մտաւորական և բանասէր Պր. Ֆրէտէրիք Մուրատեան, որ քանի մը տարիներէ ի վեր արդէն խութացեալ վիճակ մը ունէր, սակարխախտումի արկածի մը հետեւանքով, իսկ մօտ վեց ամիսներէ ի վեր կը առաւարտ ընդհանուր տկարութեամբ: Կանգուցեալը վերջին շառաւիղն էր Յուլիանի քաղաքի մահնէն պատուաւոր Մուրատեան ընտանիքին, որ Պաղեստինի հայութեան մէջ շուրջ երեք քառորդ դարէ ի վեր գլխաւորապէս կը իր ընկերային և ազգային գիրքովը Մեռաւ շուրջ 75ամեայ, խնամաւոր և ամուրի: Կր յուղարկուողութեան, որուն ներկայ իղան քաղաքիս և Յուլիանի Գերման քաղաքէն բարեկամներ և նախազանց Ամեն. Ս. Պատրիարք Հայրը և խօսեցաւ ազգու դամբանական մը:

(«Մինն», 1982, Զ. Յարի, Մայիս, Թիւ 5, էջ 160):

**Զ Ե Կ Ո Յ Ց**

6 Ապրիլ, 1982

Ամենապատիւ

Տ. Եղիշէ Արքեպս. Տէրտէրեան

Բարեխնամ Պատրիարք Առաքելական Ս. Աթոռոյս

եւ Նախագահ Միաբանական Ընդհանուր Ժողովոյ

Ս. Աթոռոյս Միաբանական Ընդհանուր Ժողովը, իր երէկուան՝ 5 Ապրիլ 1982ի նիստին մէջ քննութեան ենթարկելով Գերշ. Տ. Շահէ Արքեպս. Աճէմեանի Ձերդ Ամենապատուութեան նկատմամբ ցուցարբրած անարգալից ընթացքը, որուն համար գրաւոր կերպով բողոք ներկայացուցած էին տասնհինգ Միաբաններ, ինչպէս նաեւ ժողովի մէջ Շահէ Սրբազանին դէմ եղած զանազան արտայայտութիւններ, միաձայնութեամբ (ծեռնպահութեամբ մէկ անդամի) որոշեց դուրս հանել վերոյիշեալը Միաբանութեան շարքէն:

Միաբանական Ընդհանուր Ժողովի Դիւանը կը հաղորդէ սոյն որոշումը Ձերդ Ամենապատուութեան:

Մնալով խոնարհ աղօթակիցք՝

Ատենադպիր

Ատենապետ

ԱՍՊԵՏ ՎՐԴ.

ՆՈՐԱՅՐ ԱՐԳԵՊՍ.

Պատկառելի Միաբանական Ընդհանուր Ժողովի որոշումը Գերշ. Տ. Շահէ Արքեպս.ի Միաբանութենէն արտաքսման մասին, մեկնութեան չի կարօտիր: Առանց մանրամասնութիւններու երթալու, իրրեւ հակիրճ լուսարանութիւն, հետաքրքրուողներուն կը յայտնենք թէ Շահէ Սրբազանը իր տարիներէ ի վեր ետանձնած պաշտօններուն մէջ — Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի Տեսչութիւն, Կալուածոց Տեսչութիւն եւ Դիւանապետութիւն, իր անփոյթ եւ անուղիղ ընթացքով, զայրոյթի եւ կասկածի տարած էր ամբողջ Միաբանութիւնը: Իր դէմ եղած ցասումը յորդեցաւ Միաբանութեան կողմէ, երբ անպատկառ բառերով անարգեց Ս. Աթոռոյս Ամենապատիւ Արք. Պատրիարք Լայրը Պատրիարքարանի մէջ:

ԴԻՒԱՆ ՏՆՕՐԷՆ ԺՈՂՈՎՈՅ

Ատենադպիր

Ատենապետ

ՍԵՒԱՆ ՎՐԴ.

ԿԻՒՐԵՂ ԵՊՍ.



## ՂԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՍԱՐԿԱՒԱԳԱՑ

10 Ապրիլ, Շաբաթ, Ծաղկազարդին օր մը առաջ, Ս. Գլխադրի մատան մէջ մատուցուած Ս. Պատարագի ընթացքին, Լուսարարապետ Գեորգի Տ. Գարեգին Արեւիկայի Աւագ Սարկաւագ ձեռնադրեց Ս. Արոտոյս ժառնգ. Վարժարանի բարձրագոյն դասարանի չորս սաներուն, որոնք Ուրար ընդունած եւ կիսասարկաւագուրեան աստիճանը

ընդունած էին անցեալ Օգոստոս 1ին, դարձեալ Լուսարարապետ Սրբազանէն: Խորհրդակցական եր Լոգո. Տ. Ասպետ Վրդ. Պալեան: Յուզիչ եր պահը երբ ընծայեալները ժողովուրդին կը դատնային ձեռամբար, ի նշան աշխատեան իրենց հրաժարման:

Նորընծաները անմիջապէս սպասարկելու սկսան Սուրբ Խորհուրդին:



Նկարին մէջ կ'երեւին, Ամեն. Ս. Պատարագ Լօր եւ Լուսարարապետ Սրբազանին հետ, չորս նորընծաները. — Զայսէն աջ՝ Սարգիս Սրկ. Թաւրաբեան, Արամ Սրկ. Ալեանեան, Միհրան Սրկ. Գլխադրեան եւ Պողոս Սրկ. Շահանեան:

Ստրե՛լ իրենց կենսագրութիւնը. —

**ԲԱՐՇ. ԱՐԱՄ ՍՐԿ. ԱԼՃԱՆԵԱՆ** ծնած է Մատուց, 13 Մարտ 1965ին: 1968ին ընթացած է կը փոխադրուի Պոլիս, ուր կ'աշխատէր Գարակոզեան եւ Ստայան վարժարաններուն: 1975ին Սրուսաղիմ գալով՝ սարի մը կ'աշխատէր Ս. Թարգմանչաց վարժարանին եւ ապա կ'ընդունուի ժառնգ. վարժարան:

**ԲԱՐՇ. ՄԻՂՐԱՆ ՍՐԿ. ԳԶԻՐԸՐԸՔԻԱՆ** ծնած է Պոլիս, 22 Մարտ 1964ին: Օրթագրուի Ս. Թարգմանչաց վարժարանի երրորդ դասարանը աւարտելէ ետք, 1975ին եկած է

Սրուսաղիմ եւ սարի մը աշխատեցած յետոյ Ս. Թարգմանչաց վարժարանին, ուրիկ անցած է ժառանգաւորաց վարժարան:

**ԲԱՐՇ. ՊՈՂՈՍ ՍՐԿ. ՇԱՀԱՆԵԱՆ** ծնած է Պրնիան (Գոլյսերի), 16 Յուլիս 1966ին: Աւարտելէ ետք Պոլսոյ Ներսէսեան Ազգային վարժարանի երրորդ դասարանը, 1976ին եկած է Սրուսաղիմ եւ մտած ժառ. վարժարան: — Այս երեքն ալ Գարուրեան չորս աստիճանները ստացած են հաճոց. Լուսարարապետ Տ. Լայրիկ Արեւիկայէն՝ 1978ին:

**ԲԱՐՇ. ՍԱՐԳԻՍ ՍՐԿ. ԹԱՍԼԱՔԻԱՆ** ծնած է Պէյրուր, 22 Յուլիս 1963ին: 1971ին՝ Պէյ-

**ԿԵՆՆՔԸ ԺԱՌՆԳ. ՎՆՐԺՆՐԱՆԵՆ ՆԵՐՍ**

Մարտ 1ին, Երզնւոյն, Մեծ Պահոց առաջին օրը, պոռոտ մը կազմակերպուեցաւ զէպի էյն-կէտի և Մաստա, վարժարանիս Արժանապատիւ Տեսուչը ըրաւ պատմականը Մեռեալ ծովու մտաւորը զանուագ այս վերջինին:

Մարտ 13ին, Շարաթ, Երթոյնական երկոյ մը տեղի ունեցաւ, որու ընթացքին երգուեցան աշուղական երգեր՝ Հոգչ. Տ. Կոմիտաս Արղ. Շէրպէթեանի, Բրչ. Արամ և Մարգիտ Մարկուազնիրու և ժառ. սաներ վաչէ Թառլաքեանի, Գաւթի Յաւրչեանի և Յովհաննէս Պաթմոնեանի մասնակցութեամբ: «Տէր, Կեցո» մողթերգով փակուեցաւ սոյն նաճիլի երկոյթը:

Ապրիլ 22ին, Հինգշաբթի, Ջատկական տօներէն ետք, պոռոտ մը եւս կազմակերպուեցաւ, զէպի Պարոն-Տէրի պատմական վայրը, ուր սաները վայելցիցին բնութեան զեղեցիկութիւնը, և մանուաւնք Ամեն. Ս. Պատրիարք Հօր և Գիրչ. Լուսարարապետ Սրբազանի ներկայութիւնը:

Ամեն. Սրբ. Պատրիարք Հօր կարգադրութեամբ, վարժարանիս Տեսուչ նշանակուեցաւ Հուսարարապետ Գիրչ. Տ. Գարեգին Արքեպս. Գաղանճեանը, իսկ Փոխ-Տեսուչ՝ Հոգչ. Տ. Վազգէն Արղ. Գարայեանը:

Վարժարանիս սաները, ինչպէս աճէն տարի, այս տարի եւս իրենց լայն մասնակցութիւնը բերին Աւագ Շարթուռայ հոգեկարար արարողութիւններուն:

Մայիս ամսու Կինք Շարաթ երկոյներուն, վարժարանէս ներս կազմակերպուեցան բանախօսական երկոյններ, ըստ նեռեալին. —

1 Մայիսին, բանախօսին էր Տիւր Ալեքս Գալայճեան, նիւթ ունենալով «Ապրիլիտն Եղեանը»: Բացման և փակման խօսքը ըրաւ Փոխ-Տեսուչ Հոգչ. Տ. Վազգէն Արքեպս: Բարչ. Արամ Սրկ. Ալճանեան մեներգեց «Անձինք Նուրիկայ»:

8 Մայիսին, բանախօսին էր Բարեշնորհ Արամ Սարկուազ, նիւթ ունենալով «Գրիգոր Շղթայակեր Պատրիարքի կեանքն ու գործը»: Բացման խօսքը ըրաւ Տիւր Ալեքս Գալայճեան: Ժառ. սան Վարդան Մելքոնեան մեներգեց «Հանդիսացեալ» շարականը: Տեսուչ Սրբազանը ըրաւ փակման խօսքը և սուա իր օրինութիւնը:

15 Մայիսին, բանախօսին էր Բարեշնորհ Մարգիտ Սարկուազ, նիւթ ունենալով «Գրիգոր Պարոն-Տէր»: Բացման և փակման խօսքը ըրաւ Տիւր Ալեքս Գալայճեան: Ժառ. սան Շնորհք Յողըրեան արտասանեց Խաչիկ Դաշահնցի «Հայերէն» քերթուածը, իսկ Բարչ. Արամ Սրկ. մեներգեց «Գթա, Տէր» համագտան շարականը:

22 Մայիսին, բանախօսին էր Հոգչ. Տ. Վանիկ Արղ. Մանկատարեան, նիւթ ունենալով «Ներսէս Շնորհալի»: Բացման խօսքը ըրաւ Տիւր Ալեքս Գալայճեան: Ժառ. սան Վաչէ Թառլաքեան մեներգեց «Արիացեալ» շարականը, իսկ Բարեշնորհ Արամ Սարկուազ՝ «Անպիգըն Հայր» շարականը: Փակման խօսքը ըրաւ Փոխ-Տեսուչ Հոգչ. Տ. Վազգէն Արղ. Գարայեան:

29 Մայիսին, բանախօսին էր Բարչ. Սերբ Սրկ. Ալճանեան, նիւթ ունենալով «Պետրոս Գուրաւն»: Բացման խօսքը ըրաւ Տիւր Ալեքս Գալայճեան: Վազմեռիկ բանաստեղծի «Լճակ» քերթուածը արտասանեց ժառ. սան Յովիկ Պաթմոնեան, իսկ «Իմ մանը» քերթուածը՝ ժառ. սան Վարդան Մելքոնեան: Փակման խօսքը ըրաւ Փոխ-Տեսուչ Հոգչ. Տ. Վազգէն Արքեպս:

բուրի Սահկեան վարժարանի Մանկապարտեղի բաժինը ավարտել ետ կը արուակակէ իր ուսումը Մետոպոլս վարժարանի մէջ եւ 1978ին կ'աւարտէ Նախակրթարանի 7րդ դասարանը: Նոյն տարին կու գայ Երուսաղեմ եւ կ'աւակերտի ժառ. վարժարանին: «Սրոն», ի գիմաց Ամեն. Ս. Պատրիարք

Հօր եւ Միաբանութեան, զերմօրէն կը ընդհաւուրէ հոգեւոր սպառեղի առաջին ձեռնագրութիւնը սացած չորս նորընծաները, մարթելով որ իրովն արժեւորեն ու պաշարեն ձեռնագրութեամբ ընդունած ընդհանրը, լաւալոյնս պատրասուելու համար քահանայութեան սուրբ ասիականին:



# Մ. ՅԱԿՈՒԵՆ Ե Ե Ր Ս Է Ն

● Գշ. 3 Մարտ. — Սկիզբ կարգաց Մեծի պահանջ: Առաւօտուն, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ Արեւագալչի առաջին ժամերգութիւնը, իսկ երեկոցիան՝ Կրօնապետական առաջին ժամերգութիւնը:

● Ուր. 6 Մարտ. — Նախատեսակը պաշտուեցաւ Ս. Թորոս եկեղեցւոյ մէջ, որ Զեռագրատունն է Ս. Աթոռոյ: Հանդիսապետն էր Զեռագրատան Տեսուչը՝ Գեորգի: Տ. Նորայր Արքեպիս. Գողարեան:

● Եր. 6 Մարտ. — Ս. Թէոդորոսի զօրավարին: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ և Ս. Գատարագը մատուցուեցաւ ի Ս. Թորոս: Ժամարարն էր Արծ. Տ. Ներսէս Աւագ Գահանայ ձեկեկեան:

— Կէսօրէ ետք, Գեորգ. Տ. Կիւրեղ Եպ. Գարիկեանի գլխաւորութեամբ, Միարեանութիւնը Վերաշափառուով մատուց գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտուեցան ժամերգութիւն և նախատեսակ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց կայսերութեան հանդիսաւոր Թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Հոգը. Տ. Գամիսաս Արք. Երբայթեան:

● Կիր. 7 Մարտ. — Արամուսան: Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան և Ս. Գատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր յերնամատրան մէջ: Ժամարարն էր Հոգը. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան: Ապա կատարուեցաւ եռադարձ Սեփականդե Թափօր՝ Գրիտոսի Ս. Կերեղմանին և Գատանատեղւոյ շուրջ, գլխաւորութեամբ Գատր. Փոխանորդ Գեորգ. Տ. Կիւրեղ Եպիսկոպոսի:

● Գշ. 9 Մարտ. — Մեծ Գահաց առաջին Հսկումը ի Ս. Հրեշտակապետ: Գարդեցի նոյն վանքի Տեսուչը՝ Հոգը. Տ. Սևան Վրդ.:

● Եշ. 11 Մարտ. — Մեծ Գահաց առաջին Հսկումը ի Ս. Յակոբ: Գարդեցի Հուսարարապետ Գեորգ. Տ. Գարեգին Արքեպիսկոպոս:

● Եր. 13 Մարտ. — Ս. Կիրոյի երուսաղիմացոյն: Ս. Գատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի առաւօտան Ս. Կիրոյի սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգը. Տ. Համբարձում Արք. Քէշիշեան:

● Կիր. 14 Մարտ. — Անտակին: Ըստ սովորութեան, Ս. Գատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետ: Գատարագեց և քարոզեց Հոգը. Տ. Ասպետ Վրդ. Գայեան:

● Գշ. 16 Մարտ. — Իրիկուան Հսկումին ի Ս. Հրեշտակապետ քարոզեց Հոգը. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան:

● Եշ. 18 Մարտ. — Իրիկուան Հսկումին ի Ս. Յակոբ քարոզեց Գեորգ. Տ. Շահէ Արքեպ.:

● Եր. 20 Մարտ. — Ս. Յովհաննէս երուսաղիմացոյն: Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ իր անդրանիկ Ս. Գատարագը մատուց նորընծայ Հոգը. Տ. Վաղգէն Արք. Գարայեան:

● Կիր. 21 Մարտ. — Տնօրին: Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց նորընծայ Տ. Վաղգէն Արք. Վարդան - առաւօտը՝ Հոգը. Տ. Ասպետ Վրդ. Գայեան, որուն կը սպասարկէր նորընծան:

● Գշ. 23 Մարտ. — Իրիկուան Հսկումին ի Ս. Հրեշտակապետ իր առաջին քարոզ խօսեցաւ Հոգը. Տ. Կամիսաս Արք. Երբայթեան:

● Եշ. 25 Մարտ. — Իրիկուան Հսկումին ի Ս. Յակոբ քարոզեց Գատր. Փոխանորդ Գեորգ. Տ. Կիւրեղ Եպ. Գարիկեան:

● Ուր. 26 Մարտ. — Վաղուան Գառատուն Մանկանց տօնին առթիւ, կէսօրէ ետք Կրօնապետական ժամերգութիւն՝ իսկ գիշերապետին Հսկում կատարուեցաւ ի Ս. Հրեշտակապետ: Գարդեցի Վանսց Տեսուչը՝ Հոգը. Տ. Սևան Վրդ. Դարիկեան:

● Եր. 27 Մարտ. — Գառատուն մանկանց Սրբատոյ: Ս. Գատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաւորին ժամարարն էր Հոգը. Տ. Սևան Վրդ.:

Ղարբիպանն Վերաբերումը կատարուեցաւ Ս. Քառասնից Մանկանց Կէտրին նախէ շինուած շարժական սեղանին վրայէն:

— Կէտրէ ետք, Ամեն. Ս. Գատրիարք Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը շարժապատուով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր Ս. Գերեզմանի և Գրեւ Սաչի այրի աւախներէն ետք, վերջնայս կից՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ պաշտուեցան ժամերգութիւն և նախատեսակ՝ նախագահութեամբ Գերշ. Տ. Տանէ Արքեպս.՝ Ազա կատարուեցաւ Տնօրինակն Սրբաանդեաց այցելութեան կանգիտուող թափօր Տանքէն ներս: Թափօրապետն էր Հոգշ. Տ. Արփիար Արքեպս:

● Կիր. 28 Մարտ. — Գաւաւորին: Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Լուսաւորիչ: Ապա, Գերշ. Տ. Տանէ Արքեպս. Անէման մասաջ օրուան կանգիտուող Ս. Գատարաք՝ Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ, արմէ ետք Ամեն. Ս. Գատրիարք Հայրը նախագահեց նային և Գատանտեղեայն շուրջ կատարուած հուգարով մեծաննդէտ թափօրին, որ վերջացաւ Ս. Լուսաւորիչ եկեղ. մէջ:

● Գշ. 30 Մարտ. — Իրիկուան Նկույմին ի Ս. Հրեշտակապետ քարոզից Հոգշ. Տ. Արփիար Արք. Տէմիրեանն:

● Եշ. 1 Ապրիլ. — Իրիկուան Նկույմին ի Ս. Յակոբ քարոզից Հոգշ. Տ. Ապղիւս Վրգ.:

● Ուր. 2 Ապրիլ. — Նախատեսակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Կիրեզ Եղս.:

● Եր. 3 Ապրիլ. — Ս. Գրիգոր Լուսաւորչին (Մաւե ի վիրայ): Ս. Գատարաք մատուցուեցաւ Մայր Տանարի աւանդատն Ս. Լուսաւորչի սեղանին վրայ: Ժամաբարն էր Հոգշ. Տ. Վազգէն Արք. Գարայանն:

— Կէտրէ ետք, Լուսաբարապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս.՝ գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժերով բարձրացան Զիրենեաց լեռ, ուր Համբարձման սրբավայրին վրայ կառուցուած մեր վրանամատրան մէջ պաշտուեցան ժամերգութիւն և նախատեսակ: — Գիշերայինը Կիրեզ, Հոգշ. Տ. Սեան վրգ. ի նախագահութեամբ, նոյն վայրին մէջ կատարուեցան սեկեցնէ և Նկույմ, ինչպէս նաև գիշերային և առաւօտեան ժամերգութիւններ, որոնց աւարտին Համբարձման մատրան մէջ մատուցուեցաւ Ս. Գատարաք: Ժամաբարն էր քստ սովորութեան, Սրբավայրին Տեսուչը՝ Հոգշ. Տ. Հայրիկ Արք. Գալստեան: Արարողութիւնները տեկեցին մինչև ժամը 10-15:

● Կիր. 4 Ապրիլ. — Փայտեան: Առաւօտեան ժամը Տին, Գատր. Փեթեմորգ Գերշ. Տ. Կիրեզ Եղս.՝ գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժերով բարձրացան Զիրենեաց լեռն շարժապատուով մուտք գործեցին Համբարձման Սրբատեղին, ուր մեր վրանամատրան մէջ եպիսկոպոսական զգեստաւորմամբ կատարաբաց Ս. Յարութեան Տանարի Տեսուչ Հոգշ. Տ. Վազարշ Վրգ. Իսլաուորեանը: Քանի

մը օրերու ճնշող իրաժնին յաջողած ևւ. ակնկալ տեղաւարտափի մը պատճառաւ, վերաբերուեալն անդին Ս. Գատարաքը շարժականուեցաւ Համբարձման մատրան մէջ:

● Գշ. 6 Ապրիլ. — Մեծ Գահնց վերջին Նկույմը ի Ս. Հրեշտակապետ: Գարոզից Հոգշ. Տ. Ոսկի Արք. Որգիքեանն:

● Եշ. 8 Ապրիլ. — Մեծ Գահնց վերջին Նկույմը ի Ս. Յակոբ: Գարոզից Լուսաբարապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս. Գալստեանն:

● Ուր. 9 Ապրիլ. — Խ. օր մեծ պղծն: Առաւօտեան, Մայր Տանարին մէջ պաշտուեցաւ Սերազանի վերջին ժամերգութիւնը, իսկ կէտրէ ետք վերջին տաղապահանքը:

● Եր. 10 Ապրիլ. — Յիւսակ յարեմոն Ղազարո: Ս. Գատարաք մատուցուեցաւ ի Ս. Գլխաղբի: Ժամաբարն էր Հոգշ. Տ. Վանիկ Արք. Մանկատարեան: Գատարուեցաւ Սարկաւազական ձեռնադրութիւն (տես էջ 102-103):

— Կէտրէ ետք, Ամեն. Ս. Գատրիարք Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը շարժապատուով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտուեցան ժամերգութիւնն ու Ծաղկալարգի նախատեսակը մեր վերանամատրան մէջ: Նախագահութեամբ Լուսաբարապետ Սրբազանին Ազա կատարուեցաւ Տնօրինակն Սրբաանդեաց այցելութեան կանգիտուող թափօր Տանքէն ներս: Թափօրապետն էր Հոգշ. Տ. Հայրիկ Արք. Գալստեանն:

● Կիր. 11 Ապրիլ. — Մաղկապար: Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Գատարաք մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերանամատրան մէջ: Ժամաբարն էր Հոգշ. Տ. Ասղտ Վրգ. Գալստեան: Ազա կատարուեցաւ հուգարով մեծաննդէտ թափօր և Անդառանդ՝ Ս. Գերեզմանի և Գատանտեղեայն շուրջ, յիթենեօք և արմաւենեօք, գլխաւորութեամբ Լուսաբարապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս. և հետեղութեամբ Ղպտոց և Ասորոց թափօրներուն: Կէտրուանց Միաբանութիւնը վերագարձաւ Մայրաբանի և Ուր զխորհուրդ շարժական երգելով բարձրացաւ Գատրիարքարան:

— Կէտրէ ետք և Սայր Տանարին մէջ կատարուեցաւ Անդառանդ, որուն նախագահեց Կիրեզարք Ս. Աթոռ ժամանած Ռումանիոյ և Գուլկարիոյ Առաջնորդ Գերշ. Տ. Տիրայր Արքեպս. Մարտիրոսն: Լոգեզմայլ շարժականներով ընդմիջուած ժամերգութեան աւարտին, բեմ բարձրացաւ Հոգշ. Տ. Ապղտ Վրգ., կարգաւ ահարձ ցանկը վարդայրներու բացաւ մին մանակցողներուն և կոշ ընելու ներգաններուն որ իրենց լումաներով օգնեն Ազաւնիէի Ազգային Ռուժարանին՝ ԵՊԵՊԵՊԵՊԵՊԵ նախագահեց Գերշ. Տ. Կիրեզ Եղսիկոպոս:

● Գշ. 13 Ապրիլ. — Աւազ հրեմարի: Ս. Գատարաք մատուցուեցաւ Ս. Յարութեան Տանարի գաւթին վրայ բացուող Ս. Յովնանէտ Աւետարանի մատրան մէջ, ուր Գատարուած

ներգրութիւնները մօտ են իրենց աւարտին: Ժամարարն էր Հոգը. Տ. Անան Վրդ. Չարիպեան: Ս. Թարգմանչաց Վարժարանի աշակերտութիւնը ստացան Ս. Հաղորդութիւն: Ապա կատարուեցաւ տւրքաւորաց թափօրը Տանարէն ներս: Թափօրպետ Հոգը. Տ. Արփիար Արղ. բացատրութիւններ բրաւ ներկաներուն: ● Ծշ. 15 Ապրիլ. — Աւագ շինգաքքի (Յիւստի Ընթրեաց): Մայր Տանարէն մէջ պաշտուած վարդ Ապաշխարողացնէն ետք, հանգիստաւոր Ս. Գատարագ մատուցուեցաւ Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Գերշ. Տ. Տիրայր Արքեպոս: Ետտեղ ստացան Ս. Հաղորդութիւն:

— Կէտօրէ ետք, Ամեն. Ս. Գատարարը Հայրը նախագահեց Մայր Տանարէն մէջ կատարուած Ռոտալուայի արտաբրաւ. կարգին, որը ծայրնաստուեցաւ Իրայելեան աստիճակայանէն և որուն ներկայ եղան բազմաթիւ օտար հիւրեր, ընդ որս և Անիկիքան Արքեպոսը, որ Ս. Աւետարան կարգաց Անգլերէն լեզուով:

— Ժամ մը ետք, Հոգը, Տ. Ասպետ Վրդ. Ի ղլխաւորութեամբ, փոքր թափօր մը այցելութեան գնաց Գրիտաօրի զայգ բանտերուն — Ս. Հրեշտակապետ և Ս. Փրկիչ: Թէ՛ Ս. Ձիթեւնի Ժառին մօտ և Թէ՛ Ս. Փրկիչ կիսաւերածատրան մէջ խօսք առաւ Թափօրպետ Հայրը:

— Ենաւարման տխրագոյնիկ կարգին Ի Ս. Յակոբ նախարարեց Ամեն. Ս. Գատարարը Հայրը: Լուսարարպետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպոս. սեւ էր գիշերս ընտրանով կռու ըարող մը խօսեցաւ խորհրդաւոր խառնարին մէջ: Արարութիւնները սեկեցան յինչ և՛ 11:30:

● Ուր. 16 Ապրիլ. — Աւագ Երարք (Յիւստի խաչելոյթեց): Կէտօրին, Ս. Յարութեան Տանարի վերնատան մեր մասրան մէջ պաշտուեցաւ Անգրգոտալութեան, նախագահութեամբ Գերշ. Գերշ. Տ. Կիրեղ Նպօ. Գարեգինեան:

— Կէտօրէ ետք, Մայր Տանարէն մէջ պաշտուած Թաղման հանգիստաւոր կարգին նախագահեց Ամեն. Ս. Գատարարը Հայրը:

● Եր. 17 Ապրիլ. — Աւագ Երարք (Ճրգալոյց Ս. Զատիկ): Առուտահան ժամը 8:15ին, Ս. Յարութեան Տանարի գուռը բացուեցաւ մեր հողմէ, բանալին առնուելով Աւագ Թարգման Հոգը. Տ. Ասպետ Վրդ. Գալեանի ձեռքին:

— Ժամը 10:30ին, Ամեն. Ս. Գատարարը Հոր ղլխաւորութեամբ, Միարանութիւնը մեկնեցաւ Ս. Յարութեան Տանար, ուր յալորդաբար ընթացք առին Լուսաւորայի և յարակից հանգիստութիւնները: Սեր Լուսանուն էր Հոգը. Տ. Անան Վրդ., որ Յունաց Թափօրէն ետք, Յունաց Գատարարքին հետ մտաւ Ս. Գերեզման, ուրկէ քան մը վայրկեան ետք դուրս պիտի գար նուիրական լոյսը, ստեղծելով ընդհանուր խանդավառութիւն: Սրբավայրին շուրջ կատարուած ետադարձ թափօրը (որուն կը հետեւէին Ղպտինք և Ասորիներ) ղլխաւորեց իւստանան Հայրը, որ կը կրէր խօյր եպիսկոպոսական: Վանք գարձին, Գալթի բերդէն

սեկեւով, Միարանութիւնը վերիտառ յարեաւ Կրգելով յառաջացաւ և մտաւ Մայր Տանար:

— Ժամ մը ետք, Ճրգալոյցի արարողութիւն կատարուեցաւ Ս. Յակոբ, որմէ յետոյ Աւագ Գալեանին վրայ պատարագեց Հոգը. Տ. Արփիար Արղ. Տէմիրնան: Գերշ. Տ. Կիրեղ Նպօ. Ի ղլխաւորութեամբ կատարուած Սուրբ Զատիկ նախատեսակէն ետք Միարանութիւնը զգեցտաւորեալ և իկար յարեաւ շարակալեց Կրգելով բարձրացաւ սեղանատուն՝ ընթերցի:

● Կիր. 18 Ապրիլ. — ԶԱՏԻԿ ԵԱՐՈՒԹԵԱՆ ՏԵՆՈՒՆ: Կէտ Գիշերէն ետք ժամը 2ին, Գերշ. Տ. Կիրեղ Նպօ. Գարեգինեան ղլխաւորութեամբ, Միարան Հայրեր մեկնեցան Ս. Յարութեան Տանար, ուր ժամերգութեան մէկ ժամը պաշտուեցաւ մեր վերնատան մէջ, մեղ մեացեալ մասը՝ Ս. Գերեզմանին շուրջ, ետադարձ մեծանակեղ թափօրի ընթացքին, որուն կը հետեւէին դարձեալ Ղպտինք և Ասորիներ: Ժամը 7ին, հանգիստաւոր Ս. Գատարագ մատուցուեցաւ Գրիտաօրի Ս. Գերեզմանին վրայ, ու յայնաստուեցաւ Իրայելեան աստիճակայանէն: Գատարագեց և քարոզեց Պատր. Փախարգ Գերշ. Տ. Կիրեղ Նպօ.: Ս. Գատարագին ներկայ էր Ամեն. Ս. Գատարարը Հայրը: Վանք գարձին, Հայց Թաղի մուտքէն, Միարանութիւնը Կրգեցողութեամբ յառաջանալով բարձրացաւ Գատարարքարան:

— Կէտօրէ ետք, Մայրավանքի մեծ բակին մէջ կայացաւ Զատիկական մեծ Անդատանը, Ի ներստութեան բազմաթիւ ժողովուրդի: Հանգիստակտն էր Ամեն. Ս. Գատարարը Հայրը:

● Բշ. 19 Ապրիլ. — Բ. օր Ս. Զատիկ և Անուան յեղեց: Լուսարարպետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպոս. Գաղաննան հանգիստաւոր Ս. Գատարագ մտնող Մայր Տանարի Աւագ Սեղանին վրայ և քարոզեց: Ապա, Ամեն. Ս. Գատարարը Հայրը, Կենաց Փայտի մատուցնի Ի ձեռնին և ամպոլանի տակ, նախագահեց ետադարձ թափօրին: Գատարարքարանի զահլիէն մէջ, ուր բոլորն ալ բարձրացան ապա Կրգեցողութեամբ, Գատարագի Սրբապանը օրհնուած նշխար բաժնեց իւրաքանչիւրին:

● Գշ. 20 Ապրիլ. — Գ. օր Ս. Զատիկ և Անուան Ս. Աստուածանի: Ս. Գատարագ մատուցուեցաւ Ի Ս. Գլխաղի: Ժամարարն էր Հոգը. Տ. Վարդէ Արղ. Գարայեան: Հօգեանդատան պաշտամունքին նախագահեց Գերշ. Լուսարարագեղ Սրբապանը:

— Ս. Կոյր Աւետան տօնը վաղուան յետաձգուած ըլլալով, այսօր նախատեսակ կատարուեցաւ Ի Ս. Յակոբ: Հանգիստակտն էր Գերշ. Տ. Տիրայր Արքեպոս:

● Գշ. 21 Ապրիլ. — Առուտան, Գերշ. Տ. Տիրայր Արքեպոս. Մարտիկանի ղլխաւորութեամբ, Միարան Հայրեր ինքնաշարժեբով էլան Գերեզմանի շուրջ աւ շարժապետով մուտք գործեցին Ս. Առուտածանայ Տանար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ հանգիստ-

աորակէս պատարագեց Գերշ. Լանդիսպոպեա Սրբազանը:

● Եր. 24 Ապրիլ. — Ղիստունն Յովհաննու Կարաբեցիի և Յուսուսն Նահասակաց (1915): Մայր Տահարի Աւագ Սեղանին վրայ հանդիսաւոր Ս. Գատարագ մատոյց և քարոզեց Գերշ. Տ. Տիրաթ Արքեպօս: Ապա կատարուեցաւ հոգեհանգիստեան հանդիսաւոր պաշտօն՝ մեր բիւրաւոր նահատակներու հոգիներուն համար: Լանդիսպոպեա Ամեն. Ս. Գատրիարք Լայրբ ապա անցաւ գլուխը երկարածիդ Թափօրին, որ հանգստեան շարականներու երգեցողութեամբ, Լ. Մ. Ը. Մ. Ի. և Լ. Յ. Մ. Ի պկուստներու և արեւոյշներու առաջնորդութեամբ, ցեղապանութիւնը դատապարտող քառալեզու լուսկներով և բազմաթիւ ժաշկեպոսակներով ուղղուեցաւ գեղի Ս. Փրկչի գերեզմանատունը և բուրուեցաւ Արարայի նահատակաց յաւարմանին շուրջ, ուր կատարուած հոգեհանգիստեան կարգէն ետք իտեք առաւ Տիրաբ Լեւն Օճանէտեան: Յետոյ բուրն ալ դարձան Լ. Մ. Ը. Մ. Ի Աղուսքը, ուր հոգեուսրն առին:

● Կիր. 25 Ապրիլ. — Կոր Կրեակի (Կրկնազարի): Մայր Տահարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց, ըստ սովորութեան, Լուստանը՝ Լոգշ. Տ. Սեւան Վրդ. Դարիպեան:

● Եր. 1 Մայիս. — Ս. Գատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամաբարն էր Լոգշ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան:

— Կէսօրէ ետք, Ամեն. Ս. Գատրիարք Լոր զլիաւարութեամբ, Միարանութիւնը շերտափառով մուտք գործեց Ս. Յարութեան Տահար, ուր պաշտուեցան ժամերգութիւնն ու նախատեսակը՝ մեր վերնամատրան մէջ, նախազանութեամբ Լուստարապետ Սրբազանին: Ապա կատարուեցաւ Տնօրինակին Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր Թափօր Տահարէն ներս: Թափօրապետն էր Լոգշ. Տ. Վազգէն Արշ. Գարայեան:

● Կիր. 2 Մայիս. — Աւխահամտօրան (Կանաչ Կրեակի): Գիրեարային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Ապա Լուստարապետ Ս. Գատարագ մատոյց Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ, քարոզեց և նախազանեց Սրբազանին առջև կատարուած Անդատեսին:

● Եր. 8 Մայիս. — Ս. Գատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամաբարն էր Լոգշ. Տ. Կոստան Արշ. Եէրպիթեան:

● Կիր. 9 Մայիս. — Կարմիր Կրեակի: Ս. Գատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր

վերնատան մատրան մէջ: Ժամաբարն էր Լոգշ. Տ. Ասոյեան Վրդ. Գալեան:

● Եր. 15 Մայիս. — Ս. Գատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամաբարն էր Լոգշ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան:

● Կիր. 16 Մայիս. — Տօն Երեման Ս. Խաչիմ (351): Մայր Տահարին մէջ Ս. Կիրիլի Թուղթը կարգաց Գերշ. Տ. Կիրեղ Եպօս: Աւագ Սեղանին վրայ Ս. Գատարագը մատոյց Լոգշ. Տ. Լամբարձում Արշ. Քէշիշեան: Թորանին վրայ գրուած էր իւշի նշանը՝ վառ կանթեղներով:

● Եր. 22 Մայիս. — Ս. Գատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամաբարն էր Լոգշ. Տ. Սեւան Վրդ. Դարիպեան:

● Կիր. 23 Մայիս. — Ս. Գատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մատրան մէջ: Ժամաբարն էր Լոգշ. Տ. Վազգէն Արշ. Գարայեան:

● Դշ. 26 Մայիս. — Կէսօրէ ետք, Գերշ. Տ. Կիրեղ Եպօսի զլիաւարութեամբ, Միարան Լայրբ ինքնաշարժերով բարձրացան Զիթենեաց լեռ, ուր Լամբարձումն որբախարին վրայ կատուցուած մեր վրանամատրան մէջ պաշտուեցան ժամերգութիւն և նախատեսակ:

— Իրեկնագլուխ, ան պաշտուեցան նաև Ենկեցեւ և Նիվուժ, ու ապա, կարճ ժառարէ մը ետք, գիրեարային և առաւօտեան ժամերգութիւններ: Լանդիսպոպեան էր Լոգշ. Տ. Սեւան Վրդ.: Արարողութիւնները տեւեցին մինչև շէշերուած ժամը 10:

● Եշ. 27 Մայիս. — ՀԱՍՐԱՐՁՈՒՄՆ ՏԵՍՈՒՆ: Առաւօտեան, Գերշ. Տ. Կիրեղ Եպօսի զլիաւարութեամբ, Միարան Լայրբ գարձեալ ինքնաշարժերով բարձրացան Զիթենեաց լեռ ու շերտափառով մուտք գործեցին Լամբարձումն որբատեղին, ուր մեր վրանամատրան մէջ հանդիսաւոր Ս. Գատարագ մատոյց, քարոզեց, Մայր Աթոռոյ Սինէ Ս. Էլմիմանին փոխադրութեան տարեգարձի Մաղթանքին և Անդատեսանին նախազանեց Լանդիսպոպեա Եպօսը:

— Գերշ. Սրբազանը նախադանեց նաև Կէսօրէ ետք Մայր Տահարին մէջ պաշտուած Անդատեսանին:

● Եր. 29 Մայիս. — Ս. Գատարագը մատուցուեցաւ Մայր Տահարի տանքի Ս. Լամբարձում մատրան մէջ: Ժամաբարն էր Լոգշ. Տ. Ռօզի Արշ. Որգիթեան:

— Նախատեսակը պաշտուեցաւ ի Ս. Լեռնատեղապետ: Լանդիսպոպեան էր Գերշ. Լուստարապետ Սրբազանը:

● Կիր. 30 Մայիս. — Եկրոզ Ծաղկազարդ: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցան և Ս. Գատարագը մատուցուեցաւ ի Ս. Լեռնատեղապետ: Ժամաբարն էր Լոգշ. Տ. Վանիկ Արշ.:



# ԲՆՏՈՆԿԱԼՆԵՐ



● Դշ. 3 Մարտ. — Ֆրանսայի Նախագահ Ֆրանսուա Միթրերանի Իսրայել այցելութեան առթիւ, ի շարս այլ յարանաւանութեանց ներկայացուցիչներուն, Գերշ. Տ. Տանէ Արքեպս. շիմաստութեան գնաց Գէն - Կուրեօն օդանավակայան, իսկ երկրկոյնան ներկայ եղաւ Քիւնկ Տէլիտ պանդոկին մէջ Իսրայէլի Նախագահ Իցնաք Նալօնի կողմէ մեծայարգ հիւրին ի պատիւ տրուած ընթրիքին:

● Ուր. 12 Մարտ. — Յունաց Ամեն. Տ. Տիւտորոս Ա. Պատրիարքը, որ Ս. Ծննդեան տօնին առթիւ կարգ մը պատճառներով Պատրիարքարան չէր այցելած, այցելեց այսօր, ընկերակցութեամբ Պատր. Փոխանորդ և Գիւանապետ Արքեպսեաներուն:

● Եշ. 18 Մարտ. — Սթըբուլի Արքեպս.ը այցելութեան եկաւ Ամեն. Ս. Պատրիարք Նոր:

● Բշ. 23 Մարտ. — Կէսօրէ ետք, Christian Information Centre-ի մէջ, Ս. Ֆրանսիս Աստիւացիի Զննդեան 800 ամեակին առթիւ, Ֆրանսիսիկեան Հայրերու կողմէ կազմակերպուած ցուցահանդէսի բացումին ներկայ եղան Հոգշ. Տ. Ահան Վրդ. և Հոգշ. Տ. Ասպետ Վրդ.:

● Եշ. 25 Մարտ. — Յունաստանի Անկախութեան 161րդ օտարերայնի առթիւ, չէլլէն Ընդհ. Հիւպատոսի կողմէ ինքնէրթօնթիւնէնթըլ պանդոկի մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցաւ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը և Գերշ. Լուսարարպետ Արքեպս.ը:

● Ուր. 26 Մարտ. — Հայկէջաց Կարմիր-կողոտ Արքա Քառնարքա իր եռաջին այցելութեամբ տուաւ Ամեն. Ս. Պատրիարք Նոր:

● Եշ. 1 Ապրիլ. — Գերշ. Տ. Տանէ Արքեպս.ի փոխարէն, Գերշ. Տ. Կիւրեղ եպս. Գաբիկեան նշանակուեցաւ Պատր. Փոխանորդ: Տ. Կիւրեղ Արքեպս. մէկն է Միաբնութեան քանիքուն և նուիրեալ ստորամիտներէն, որ 30 տարիներէ ի վեր ձեռնհասութեամբ կը վարէ

Տեսչութիւնը Ս. Թարգմանչաց Վարժարանին և անխնայ կերպով կը հսկէ և ուղղութիւն կու տայ Ս. Գաբիկեան Տանարի նորագութեանց:

— Գարննայ Գերշ. Տ. Տանէ Արքեպս.ի փոխարէն, ՎՍիտեմաժագրի Խմբագրութեան անդամ նշանակուեցան Տպարանի Տեսուչ Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեանը և Փազ. Վարժարանի Փոխ-Տեսուչ Տիար Ալեքս Գալայեանը, որով Պաշտօնաթիւթի Խմբագրական Մարմինը ներկայիս կը բաղկանայ հետեւեալներէն. — Ամեն. Ս. Պատրիարք Հայր, Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ., Տիար Գէորգ Յինդիվիզեան (Գ. Զարտար) և Տիար Ալեքս Գալայեան:

● Դշ. 14 Ապրիլ. — Ս. Զատիկի տօնին առթիւ, Ս. Աթոռ ժամանեց Ռումանիոյ և Պուլւպարիոյ Հայոց Առաջնորդ Գերշ. Տ. Տիրայր Արքեպս. Մարտիկեանը: Տօնակատարութեան իր մասնակցութիւնը բերելէ և երկուս պատարագելէ զատ, Գերշ. Արքեպս.ը բանախօսեց Զարեշարթի, 28 Ապրիլի երեկոյեան, Հայ Երիտ. Միութեան ակումբին «Էջ» Նիւթ ունեւնալով Վեժ Թիւրքը և Նահատակաց պատգամը և մեկնեցաւ յաջորդ առաւօտ:

● Ուր. 16 Ապրիլ. — Կէսօրէ ետք ժամը 3ին, World Council of Churches-ի ղեկավար դէմքերէն Dr. John Taylor այցելեց Ս. Պատրիարք Նոր:

● Գշ. 20 Ապրիլ. — Բնօրհնական խանութի կացութեան պատճառով, Գրիտօտնեան հոգի որ պետէր արշեկին առաւ տարի իբրբոս մտնէ և Զատիկեան շնորհաւորութիւն չժողխանակել: Միայն օտար իրաւութեանց Հիւպատոսեանց կէրթիւն այցիկ եկան Պատրիարքարան:

● Դշ. 28 Ապրիլ. — Կէսօրէ ետք, Իսրայէլի Անկախութեան Յիւրդ տարերարթի առթիւ, Քաղաքագործ Պեմ. Թէտի Բօլլէթի կողմէ, Դաւթի բարդին ստորադ գտնուող պատրանին մէջ տրուած ընդունելութեան ներկայ եղան

# Փ Ր Օ Ֆ. Լ Ե Ի Ո Ն Խ Ա Չ Ի Կ Ե Ա Ն

(1918-1982)

Մեծ է կորուստը՝ զոր կրեց հայ բանասիրութիւնը ընդհանրապէս եւ հայ ձեռագրագիրտութիւնը մասնաւորաբար, անժամանակ վախճանումովը Երեւանի Մաշտոցեան Մատենադարանի բազմամեայ եւ բազմահմուտ տնօրէն Փրօֆ. Լեւոն Խաչիկեանի:

Հանգուցեալը ծնած է Երեւան, 1 Մայիս 1918ին: Աւարտած է Երեւանի Պետական Համալսարանի պատմութեան ճիւղը՝ 1940ին: 1949ին աշխատիլ սկսած է Հայաստանի Գիտութեան Ակադեմիայի Ինսթիթիւթի եւ Մաշտոցեան Մատենադարանի մէջ, որուն Տնօրէնը դարձած է 1954ին: Զբաղած է միջնադարեան Հայաստանի պատմութեամբ եւ աճիւրդագիրտութեամբ: Հեղինակն է բազմաթիւ հատորներու: Սակայն իր անունը անմահացնող կոթողական գործը պիտի մնայ երկարամեայ ուսումնասիրութեան արդիւնըը եղող 14-15րդ դարերու հայերէն ձեռագրերու յիշատակաբաններու հրատարակութիւնը, որու հիման վրայ լուսարևոտած են շրջանի սնցուղարձերը:

Հանգուցեալը Պատմութեան Գիտութեան Տօբթոր եղած է 1962ին, Փրօֆէսօր՝ 1966ին, Գիտութեան Վաստակաւոր Գործիչ՝ 1968ին, իսկ Գիտութեան Ակադեմիայի անդամ՝ 1971ին: Բոլոր իր պաշտօնները վարած է ձեռնհասութեամբ եւ նուիրումով:

Փրօֆ. Խաչիկեան, իր օգնական Սննիքբերիմ Արեւշատեանի հետ, եղած է Երուսաղէմ 1966ին, ուսումնասիրած մեր ձեռագրիչներու նոյն անաւարածուն եւ դասասլօսած Հայ բանասիրութեան եւ գրչագրական նոյն արուեստի մասին:

Իր հրատարակած գործերէն կ'արժէ յիշել «Նախամեսրոպեան Գրի Հարցը եւ Հմայագրերը», «Գրիզոր Պարթեւի Վերագրուած Հապտումը», «Հայկական Գաղթսփայրերը Ուկրայնիայում» 16-17րդ դարերում», «Սարգիս Արեղայի Ուղեգրութիւնը», «Գլածորեան Համալսարանը եւ Նրա Սաները», «Դիպերծումները Հին Հայաստանում» եւ «Մատթէոս Ջուղայեցու Կեանքը եւ Մատենագրութիւնը»: Խմբագրած է «Բաժնիք Մատենադարանի»ի 3-12րդ հատորները: Ունի նաեւ շարք մը հետազոտութիւններ:

Փրօֆէսօրը իր կեանքը կնքած է ծանր եւ երկարատեւ հիւանդութենէ մը ետք Երեւանի մէջ, 12 Մարտի Ուրբաթ օրը, 64 տարեկան հասակին: Թաղումը կատարուած է 15 Մարտին, ի ներկայութեան պետական եւ մտաւորական ղէմբերու:

Յաւիտենական հանգիստ բազմախոնջ իր մարմնին ու բարի հոգին:

Լուսարարպետ Գերշ. Տ. Գաբեգին Արքեպօ. և Աւագ Թարգման Հոգշ. Տ. Ասպետ Վրդ.:

● Եշ. 6 Մայիս. — Օրթոսոքս Եկեղեցւոյ Ս. Գեորգ զօրավարի տօնին առթիւ, Ռուսական Սէյնթ ձօրձ եկեղեցւոյ մէջ մատուցուած Ս. Պատարագին և Երեկոյեան, եկեղեցւոյ կից սրահին մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Լուսարարպետ Սրբազան և Քարտուզար Տիար Գեորգ Հինգիշեան:

● Գշ. 11 Մայիս. — Ս. Աթոռ ժամանեց Ս. Ուխտիս Միաբան, Արևմտեան Եւրոպայի Հայոց Կաթողիկոսական Պատօթարանի և Փարիզի Երկարամեայ Առաջնորդ Գերշ. Տ. Սերովբէ Արքեպօ. Մանուկեան և մեկեղեցւոյ 22 Մայիսին:

● Եշ. 13 Մայիս. — Քէնթրըպըրի բարձրաստիճան Եղիսկոպոսեաներէն Victor de Waal (Անկիլեան) այցելեց Ամեն. Ս. Պատրիարք Հօր:

● Եր. 15 Մայիս. — Կէսօրէ ետք, Կուրաբարաք Ս. Աթոռ գտնուող Գերշ. Տ. Սերովբէ Արքեպօ. Մանուկեան, ի դուռնի Միաբանութեան, բացումը կատարեց Ս. Թարգմանչաց Երկր. Վարժարանի Տարեկան Պատարին: Սրբբողանը եղած է Թախկին Տնաւալը գարնանին:

● Կիր. 23 Մայիս. — Թաղվայի (Տիրերթի) լեակին մօտ Գերման-Կաթողիկ Հացերու Բազմաօգտան Լրագրիչները Հին Եկեղեցւոյ նաւակատիքին ներկայ եղան Գերշ. Տ. Կիրեղ Եպօ. և Հոգշ. Տ. Հայրեկ Արեղայ:

## ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԻՒՆ,

### Հ Ր Ա Ի Ի Ր Ա Գ Ի Ր Ը Ն Գ Հ Ա Ն Ո Ւ Ր Ժ Ո Ղ Ո Վ Ի

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Կեդրոնական Վարչական Ժողովը այսու կը հրաւիրէ Միութեան բոլոր իրաւատու անդամները ներկայ գտնուելու 69րդ Ընդհանուր Ժողովին, որ պիտի գումարուի Շաբաթ, Հոկտեմբեր 16, 1982, առաւօտեան ժամը 10ին, Հ. Բ. Ը. Միութեան Մոնթրէալի Կեդրոնին մէջ, 806 Մանուկեան փողոց, Սէն Լորան, Գէպէք, Գանատա:

Ներկայս 69րդ Ընդհ. Ժողովին համար տրուած միակ հրաւիրագիրն է: Կը խնդրենք հետեւաբար Միութեան յարգոյ իրաւատու անդամներէն, որ անձնապէս ժողովին ներկայ ըլլան վերոյիշեալ թուականին եւ կամ ամենէն ուշը մինչեւ Սեպտեմբեր 23 իրենց փոխանորդագրերը յանձնեն Հ. Բ. Ը. Միութեան Ընդհանուր Տնօրէնին կամ զանոնք դրկեն հետեւեալ հասցէին. —

Armenian General Benevolent Union  
Centre Board of Directors  
585 Saddle River Road  
Saddle Brook, N. J. 07662, U. S. A.

### Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Ներկայացում եւ վաւերացում 1961 տարեշրջանի ընդհանուր տեղեկագրի:
2. Ներկայացում եւ վաւերացում 1961 տարեշրջանի ընդհանուր հաշուետուութեան:
3. Մասնակի ընտրութիւն Կեդրոնական Վարչական Ժողովի:
4. Մասնակի ընտրութիւն Հաշուեքննիչ Յանձնախումբի:
5. Նկատառում Կեդր. Վարչ. Ժողովի յանձնարարութեան՝ անջատելու Հ. Բ. Ը. Միութեան Կազմական Վկայաթուղթը Կանոնազրէն, որպէսզի միմիայն բարեփոխեալ Կազմական Վկայաթուղթը — Ներածական եւ Յօդուածներ Ա., Բ., Գ. եւ ԺԳ. — արծանազրուի Տելաուեր Նահանգի Պետական Քարտուղարութեան մօտ, եւ Կանոնազրը բաղկանայ մնացեալ Յօդուածներէն:
6. Առաջարկներ եւ թելադրութիւններ:
7. Գնահատանքի բանաձեւեր:

Ի ԴԻՄԱՏ ԿԵԴՐ. ՎԱՐՉ. ԺՈՂՈՎԻ

Բ. Գ. ԿԻԷԿԸՐԻ

Ասեմագլիբ

Ա. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Ասեմագլե

Մայիս 17, 1982 — Սետըլ Գրուք, Ն. Ճ.

**«ՍԻՈՆ»Ի ԽՄԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԻՒՂՔԵՆԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԳՐԱՆԸ  
ԸՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՅԱՐ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

- Geography* — Deacon Byron Melkonian. (English & Armenian). Stencilled in Jerusalem, *Outline of First Aid* — Stencilled in 1955, pp. 51. [1975-76, pp. 121.]
- Pediatrics, Obstetrics, Gynecology* — Stencilled in 1956, pp. 61.
- Spoken and Written French in Review* — James Etmekjian & Raymond J. Casfen. Teacher's Edition. New York, the Odyssey Press, Inc., 1972, pp. 121.
- Cafarnao I.* — Virgilio C. Corbo. Gli Edifici Della Citta. Pubblicazioni Dello Studium Biblicum Franciscanum N. 9. Jerusalem, Franciscan Printing Press, 1975, pp. 224.
- The Architecture of Islamic Jerusalem* — An Exhibition Prepared on the Occasion of the World Islam Festival, London, 1976. Jerusalem, the British School of Archaeology in Jerusalem, «Habesch» the Commercial Press, 1976.
- The Book of Common Prayer and Administration Sacraments and other Rites and Ceremonies of the Church* — According to the Use of the Church. Together with the Psalter of Psalms of David. Printed as they are to be sung or said in the Form and Manner of Making, Ordaining and Consecrating of Bishops, Priests and Deacons. Oxford, at the University Press, pp. 601 + Reviewed Table of Lessons.
- Chairman's Report V* — José de Azeredo Perdigao. 1st January 1969-31st December 1971. Calouste Gulbenkian Foundation. Lisbon, Portugal, 1971, pp. 243 + Photographs.
- Civil Engineering of Armenia* — O. K. Khalpakchian. (In Russian). Moscow, 1971, pp. 245.
- Novum Testamentum* (New Testament in Greek). Oxonii, 1858, pp. 696.
- Journey for Freedom* — Manouk Chakalian. Armenian Massacres, Deportation. New York, N. Y., Carlton Press, Inc. A Hearth Book, 1976, pp. 47.
- Directory of the Armenian Church in North America and Church Calendar* — 1967. Compiled by Arten Avak Kahana Ashjian. Watertown, Mass., 1967, pp. 27.
- The Four Homes of Mercy of the Orthodox Invalids' Home Charitable Society* — Activities and Accounts for the Years 1971, 1974, 1975 & 1976. (English and Arabic).
- Sydney* — Father Aramais Mirzaian. Armenian Guide Book. Sydney, 1970, pp. 126.
- Noah's Ark: I Touched It* — Fernand Navarra. Plainfield, New Jersey, 1974, pp. 137.
- The Armenians* — Sissag Hagop Varjabedian. From Prehistoric Times to the Present. A Digest of their History, Religion, Language, Literature, Arts and Culture in General. Chicago, Ill., U. S. A., 1977, pp. 85.
- The Armenian College and Philanthropic Academy* — Founded 2nd April 1821. Calcutta. *Educational and Cultural Exchange Conference, «Development: Achievements and Perspectives»* — Amman, Jordan, July 9-10, 1964, pp. 60.
- Weekend Pédagogique* — Jérusalem, 20-21 Déc. 1968, pp. 10.
- United for Peace* — The U. S. Record in the U. N. Pp. 35.
- America's President 1961* — John Fitzgerald Kennedy.
- American University of Beirut* — Volume I, 1963. National Lebanese Press, pp. 400
- The Third & Fourth Volumes of the same. 1965 and 1966. Pp. 432.
- History of St. Mary Armenian Apostolic Church* (1911-1976). Yetttem, Calif., 1977, pp. 168.
- Egypt Travel Magazine* No. 54 — Febr. 1959. United Arab Republic. Pp. 48.
- Linguistic Problems for Oversea Students in Britain* — G. E. Ferren. London, The British Council English-Teaching Information Centre, 1963, pp. 15.
- English as a Second Language* — Academic Courses in Great Britain, 1964/65. Pp. 31.
- Foreign and Second Language Teaching in the USSR* — Glyn E. Lewis. London, 1962.
- American Armenian International College* — La Verne, Calif., 1976. [pp. 16.]
- Liturgische Gerate und Gewander der Ostkirche* — München Slavisches Institut, 1962.
- A Catalogue of Egyptian Scarabs, Scaraboids, Seals and Amulets in the Palestine Archaeological Museum* — Alan Rowe. Govt. of Palestine, Dept. of Antiquities. Le Cairo, Imprimerie de l'Institut Français d'Archéologie Orientale, 1936, pp. 347 + 38 Plates.
- Recovery of Faith* — Dr. S. Radhakrishnan. Delhi, Hind Pocket Books, 1967, pp. 187.
- Bondage and Freedom* — Chitrabhanu. Bombay, Jaico Publishing House, 1964, pp. 51.
- Mormon Doctrine* — Bruce R. McConkie. 2nd Ed. Salt Lake City, Utah, 1976, pp. 856.

### Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Արևմտյան Հայոց Կարողիկոս Տ. Տ. Վազգեն Ա.ի Զատիկյան բարոզը	66
Շնորհաւորական գիր՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կարողիկոսաւրանէն	69
» գիր՝ Ռուսոց Պիմէն Պատրիարքէն	70
Շնորհաւորական հեռագիրներ՝ յղուած Ս. Արուսէն	71
<b>ԽՄԲԱԳՐԱԿԱՆ</b>	
— Մեր հոգեւոր հունձքը	Ե. 72
<b>Ս. ԳՐԱԿԱՆ</b>	
— Եզեկիա բագաւորը	Գ. 75
<b>ԿՐՕՆԱԿԱՆ</b>	
— Մի՛ երկնչիք	ԳԷՈՐԳ Ս. Ճիւղիկ-Վեյսեան 76
Հայ ժողովուրդի Ապրիլ 24ը	ՌՈՒԲԷՆ ՎՐԻ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ 78
<b>ԱՍՏՈՒԱԾՄԱՐԱՆԱԿԱՆ</b>	
— Տեսական աստուածաբանութիւն	ՄԱՂԱԲԻԱ ԱՐԲԵՊՍ. ՕՐՄԱՆԵԱՆ 80
<b>ՐԱՆԱՍՏՈՂՇԱԿԱՆ</b>	
— Փսալման խոհերից	ՌՈՒԲԷՆ ՎՐԻ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ 83
— Քառեակներ	Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ 84
— Կը սիրեմ...	Գ. ՃԱՐՏԱՐ 85
<b>ՐԱՆԱՍԻՐԱԿԱՆ</b>	
— Զամբիա Գալիը Վանեցի, Աւանցի	Ն. ԱՐԲ. ԾՈՎԱԿԱՆ 86
<b>ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ</b>	
— Մեծի Երկուսաբարթին, ի բզկենին եւ յԱղամ	ՀՐԱՍ. Ա. Յ. ՍՐՃՈՒՆԻ 87
<b>ՀԻՆ ԷՋՇՐ՝</b>	
— Տաղ Մբոց Քառասնիցն ի Սեբաս	ՀՐԱՍ. ԾՈՎԱԿԱՆ 91
<b>ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ</b>	
— Զմիւռնիոյ աղէթին շուրջ տեղեկագիր	ՂԵՒՈՆԴ ԵՊՍ. ԳՈՒՐԵԱՆ 92
Նորից եկեղեցական մի էանի հարցերի շուրջ	ՀԱՅԿ ՄԵՆՔՈՒՆԵԱՆ 97
<b>ՅԵՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ</b>	
— «Հասկ» ամսագիր	100
— Ոսկան Պէյ Մարտիկեանի պատասխանը	100
— Զերիմեան կնակ	100
— Մահ Պր. Յրեհեթիք Մուրաթի	100
Զեկոյց	101
Զեւոնադրութիւն Մարկաւազաց	102
Կեանք ժառանգաւորաց Վարժարանէն ներս	103
<b>Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ</b>	
— Եկեղեցականք-Քեմականք	104
— Պատեօնականք	108
<b>ՏԵՐՈՒՆԻ</b>	
— ՓրօՅ. Լեւոն Խաչիկեան	109
Զեկոյց Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան	110
Ցանկ՝ Կիւլպէնկեան Մասենադարանի կողմէ ստացուած գրքեր	111

